


Գրիգորյան Ռ. Լ.

# ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾ

Ուսումնական ձեռնարկ



ԵՐԵՎԱՆ

Երևանի ճարտարապետության և շինարարության պետական  
համալսարան

2012

ՀՏԴ 339 (07)

ԳՄԴ 65.9(2)8ց7

Գ 888

Տպագրության է երաշխավորվել Երևանի  
ճարտարապետության և շինարարության  
պետական համալսարանի գիտական  
խորհրդի 17.04.2012թ. նիստում:

*Խմբագիր՝ տ.գ.թ., դոցենտ Ս. Շ. Ստեփանյան*

### **Գրիգորյան Ռաֆայել Լենսերի**

*Գ 888 Մաքսային գործ: Ուս. ձեռնարկ - Եր. ԵրճՇՊՀ հրատ.,  
2012. – 107 էջ:*

Ուսումնական ձեռնարկում ներառված են «Մաքսային գործ» գիտափորձնական ուղղության հիմնախնդիրները, զետեղված է մաքսային գործի էությունը, ինչպես նաև արտաքին տնտեսական գործունեության կարգավորման մեխանիզմները: Սույն ձեռնարկը հնարավորություն է ընձեռում ուսումնասիրել «Մաքսային գործ» ուսումնական առարկայի հիմնադրույթները՝ զուգահեռ ուսումնասիրելով ՀՀ Մաքսային օրենսգիրքը և այլ իրավանորմատիվային ակտերը, որոնք վերաբերում են մաքսային օրենսդրությանը:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է ինչպես տնտեսագիտական մասնագիտության ուսանողների, այնպես էլ բոլոր այն ընթերցողների համար, ովքեր ցանկանում են ծանոթանալ մաքսային գործի հետ:

Հրատարակումը և տպագրումը իրականացվում է հեղինակի միջոցներով և նախատեսված է ուսանողներին անվճար տրամադրելու համար:

ՀՏԴ 339 (07)

ԳՄԴ 65.9(2)8ց7

ISBN 978-9939-63-118-9

© Երևանի ճարտարապետության և

շինարարության պետական համալսարան, 2012

© Ռաֆայել Գրիգորյան, 2012

## Բովանդակություն

Ներածություն .....	4
<b>ԳԼՈՒԽ 1. ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ</b>	
1.1 Հին աշխարհի մաքսային պատմությունը .....	5
1.2 Հայկական մաքսային պատմությունը .....	10
1.3 Մաքսային քաղաքականության հասկացությունը .....	23
<b>ԳԼՈՒԽ 2. ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ</b>	
<b>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ</b>	
2.1 Մաքսային մարմինների տեղաբաշխումը ՀՀ սահմաններում .....	29
2.2 ՀՀ մաքսային մարմինների կառուցվածքը .....	30
2.3 Մաքսային մարմինների հիմնական խնդիրները.....	37
2.4 Մաքսային մարմինների տարբերանշանը .....	38
<b>ԳԼՈՒԽ 3. ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐ</b>	
3.1 Մաքսային ռեժիմի հասկացությունը և նշանակությունը ....	41
3.2 Մաքսային ռեժիմների տեսակները .....	43
3.3 Հիմնական և պահանջվող մաքսային ռեժիմներ .....	65
<b>ԳԼՈՒԽ 4. ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔ</b>	
4.1 Մաքսային արժեքի հասկացությունը .....	68
4.2 Մաքսային արժեքի բաղկացուցիչները.....	70
4.3 Մաքսային արժեքի որոշման մեթոդները .....	72
<b>ԳԼՈՒԽ 5. ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ</b>	
5.1 Հարկավորման քաղաքականության սկզբունքները.....	81
5.2 Մաքսային վճարները և նոր դասական հայեցակարգը .....	85
5.3 Մաքսային գանձումները .....	88
<b>ԳԼՈՒԽ 6. ԱՊՐԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ</b> .....	90
<b>ԳԼՈՒԽ 7. ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՅԱՆԿԸ</b> .....	94
<b>ԳԼՈՒԽ 8. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ</b> .....	97
<b>ԳԼՈՒԽ 9. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ</b> .....	99
<b>ԳԼՈՒԽ 10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>	
10.1 Առևտրի համաշխարհային կազմակերպություն.....	102
10.2 Համաշխարհային մաքսային կազմակերպություն.....	104
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ</b> .....	106

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պետությունների տնտեսական մրցակցությունը և պայքարը այս կամ այն ապրանքի տնօրինման, առևտրի, ապրանքների նկատմամբ սեփական գնային քաղաքականության վարման, սեփական փոխադրամիջոցներով այդ ապրանքների տեղափոխման, ապրանքների տեղափոխումից և վաճառքից զանձվող հարկերի և մաքսերի դրույքաչափերի սահմանման սեփական մոտեցումները առավել բարենպաստ պայմաններ են ստեղծում և ապահովում են բարգավաճման նախադրյալներ այն պետությունների համար, որոնք հասնում են դրան:

Հայաստանի Հանրապետությունը անկախության հռչակումից հետո անցած տարիների ընթացքում մեծ նվաճումներ է ունեցել տնտեսական սուբյեկտների արտաքին առևտրային գործունեության կարգավորման ուղղությամբ:

Հիմնվելով միջազգային փորձի, ինչպես նաև արտաքին առևտրային գործունեության կարգավորմանն ուղղված մի շարք միջազգային համաձայնագրերի վրա և ելնելով Հայաստանի Հանրապետության մի շարք միջազգային կազմակերպություններին անդամակցության գործընթացում ստանձնած պարտավորություններից՝ մշակվեցին և ընդունվեցին մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական ակտեր, որոնցով լրացվեց օրենսդրական դաշտում եղած պակասը, ստեղծվեցին մեխանիզմներ, որոնք հնարավորություն տվեցին կարգավորել տնտեսական սուբյեկտների արտաքին առևտրային գործունեությունը:

Սույն գիտափորձնական ուսումնական առարկայի ուսումնասիրության նպատակն է ՀՀ մաքսային օրենսգրքի և այլ մաքսային օրենսդրությանն առնչվող իրավանորմատիվային ակտերի ուսումնասիրության արդյունքում տեսական գիտելիքների և գործնական հմտությունների ձեռք բերում՝ կապված ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպման հետ:

*Անդրադառնալով պատմությանը՝ հարկ չկա փնտրել գիտական նոր մոտեցումներ և փորձել օգտագործել պատմության էջերը գաղափարախոսության ձևավորման նպատակով, այլ անհրաժեշտ է հստակ իմանալ անցյալը, որպեսզի անցյալի լավագույն էջերը ներկայումս ապահովեն ապագայի կերտման գործընթացը:*

## **ԳԼՈՒԽ 1 ՍԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

### **1.1 Հին աշխարհի մաքսային պատմությունը**

Պատմական աղբյուրներում նկարագրվում է, որ մաքսային գործը և մաքսերի գանձման մեթոդները գոյություն ունեին դեռ վաղ ժամանակներից: Հին և Միջնադարյան Արևելքի պատմության մեջ նկարագրվում է, որ Միջագետքում XVI-XI դարերում մ.թ.ա. Ասորեստանի կողմից տարվում էին պատերազմներ մեդացիների և նրանց դաշնակիցների՝ խեթերի և արամեացիների նկատմամբ, որոնք նպատակ էին հետապնդում միջագգային առևտրային ճանապարհների նվաճումը և այդ առևտրից բխող եկամուտների հաշվին՝ մաքսերի հավաքագրման հետևանքով, պետության հարստացումը:

Մ.թ.ա. II հազարամյակի սկզբին Փոքր Ասիայում օտարերկրյա վաճառականների կողմից արդյունավետ առևտրի կազմակերպման նպատակով տարբեր վայրերում ստեղծվում էին առևտրային բնակավայրեր: Այդ առևտրային բնակավայրերի նպատակն էր Փոքր Ասիայից ոսկու, արծաթի, բրոնզի և ամենակարևորը պղնձի արտահանման կազմակերպումը, որոնց բավականին մեծ պաշարներով հարուստ էր Անատոլիան՝ որտեղ գոյություն ուներ նաև երկաթը: Սակայն տեղական մարմինների կողմից նրա արտահանումը խստիվ արգելվում էր, որի հետևանքով օտարերկրյա վաճառականները փորձում էին մաքսանենգ ճանապարհներով կազմակերպել դրա արտահանումը: Փոխարենը

Փոքր Ասիա վաճառականները ներմուծում էին բրդե և վուշե գործվածքներ: Առևտրային ճանապարհները անցնում էին բազմաթիվ քաղաք-պետությունների տարածքով և յուրաքանչյուր պետություն հարկ էր համարում մաքս գանձել տարանցվող ապրանքներից: Ամեն դեպքում վաճառականները մեծ շահույթ էին ստանում ապրանքների իրացումից, երբ այն հասցնում էին անհրաժեշտ վայր:

Բարելոնյան ժամանակաշրջանում պետության եկամուտների բավականին մեծ մասը կազմում էին հարկերը, որոնք բնակչության որոշակի խմբեր վճարում էին արծաթով (օրինակ՝ վաճառականները, որոնք զբաղվում էին միջազգային առևտրով): Բացի հարկերից՝ պետությունը ստանում էր այլ եկամուտներ մաքսերի հավաքագրման միջոցով (օրինակ՝ նավերով ապրանքների տեղափոխման համար, որոշ կամուրջներից օգտվելու համար և այլն): Այդ հարկերից և տուրքերից միջոցներ էին գոյանում պետական կառույցների և բանակի ապահովման համար:

Չինաստանում Խան կայսրությունը, Մետաքսի Մեծ ճանապարհի ժամանակներից սկսած, մեծ ճանաչում էր ստացել մետաքսի առաքման գործում: Մետաքսը դարձել էր արտահանման ամենակարևոր ապրանքը: Այն մեծ համբավ էր ձեռք բերել ամբողջ աշխարհում և նույնիսկ Հռոմում ոսկու գին ուներ: Պարթևները, որոնք միջնորդ էին հանդիսանում Հռոմի և Խան կայսրության առևտրային գործարքներում, մետաքսի գնից 25% մաքս էին գանձում:

Չինաստանում տնտեսական մեծ աճ տեղի ունեցավ քաղաքների զարգացման արդյունքում, որի շնորհիվ աճել էին նաև առևտրի ծավալները, որը մոտավոր հաշվարկներով XI դարի կեսից մինչ XII դարի սկիզբը աճել էր 1/3-ով: Հարկային մուտքերը այդ ժամանակաշրջանի ընթացքում կազմել էին գանձապետարանի մուտքերի մեծ մասը: Գրեթե բոլոր ապրանքներից և առևտրային գործարքներից գանձվում էին հարկեր: Ապրանքների

տեղափոխումից գանձվում էր 2% մաքս, իսկ վաճառքից՝ 3%: Բավականին մեծ օգուտ էր բերում նաև արտաքին առևտուրը, որը իրականացվում էր սահմանային քաղաքներում: Կենտրոնական Ասիայից քարավաններով և ծովային ճանապարհներով ապրանքներ էին տեղափոխվում Կորեա, Ճապոնիա և Հնդկաստան: Պետական իշխանությունները խստորեն վերահսկում էին այդ առևտուրը, սակայն X դարի 80-ական թվականներից սկսած վաճառականներին՝ համապատասխան մաքսեր վճարելու դեպքում, որը կազմում էր ապրանքների արժեքի 1/10-ից մինչև 4/10-ը, թույլատրվեց զբաղվել ապրանքների միջազգային առևտրով: Բյուզանդիայում XII դարի սկզբին ավարտվեց հիմնական ֆեոդալական երկու դասերի ձևավորումը և բյուզանդական քաղաքներում տնտեսական աճ էր տեղի ունենում: Պետությունը կարգավորում էր շահույթի նորման և եկամտահարկի դրույքաչափերը: Սակայն XII դարի վերջին նորից սկսվեց քաղաքների անկումը, որի պատճառներից մեկն էլ այն էր, որ Բյուզանդական պետության կողմից իրավունք էր տրվել Վենետիկի, Ճենովայի, Պիզայի վաճառականներին առևտուր իրականացնել առանց ապրանքներից մաքսերի գանձման, որի հետևանքով ներմուծվող ավելի էժան ապրանքները շուկայից դուրս էին մղել բյուզանդական ապրանքները:

Նման մոտեցում էր այդ ժամանակ նաև Եգիպտոսում, որտեղ բյուզանդական վաճառականները չէին կարողանում մրցակցել իտալացի վաճառականների հետ, որոնք ազատված էին մաքսերի գանձումից: Բյուզանդական վաճառականները այդ ամենի հետևանքով կամ սննկանում էին, կամ էլ չէին զբաղվում միջազգային առևտրով, այլ հանդես էին գալիս որպես միջնորդ: Իտալական վաճառականները այդ ժամանակ մենաշնորհային իրավունք էին ստացել առևտրում՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին: Բյուզանդական արհեստավորների կողմից պատրաստված արտադրանքը ոչ որակով, ոչ էլ գնային առումով չէր կարողանում մրցակցել իտալական ապրանքների հետ:

Միևնույն ժամանակ Բյուզանդայի պատմությունից երևում է, որ Արևելքի հետ առևտրային գործարքներ իրականացնելիս պարսիկները բավականին մեծ օգուտ էին քաղում մետաքսի վաճառքից, երբ հանդես էին գալիս որպես միջնորդ: Կայսրության համար այդ ապրանքի ձեռքբերումը պարսիկներից բավականին քանկ հաճույք էր: Բյուզանդիան տնտեսական կախյալ վիճակում էր Պարսկաստանից, իսկ Պարսկաստանը, օգտվելով իր աշխարհագրական դիրքից, պարբերաբար բարձրացնում էր մետաքսի հումքի գները, որը վերանշակման էր ենթարկվում բյուզանդական արհեստանոցներում: Բյուզանդիան իր հերթին փորձում էր սահմանել հսկիչ գներ այդ ապրանքի նկատմամբ և զանձել համապատասխան մաքսեր, որի համար նշանակվում էին հատուկ քաղաքներ, որտեղ գտնվում էին մաքսատները:

Որպեսզի առևտրային հարաբերությունները ինչ-ինչ ձևով կանոնակարգվեին, կնքվում էին համապատասխան պայմանագրեր: Այսպես, 297թ. կնքված պայմանագրի համաձայն առևտրի և ապրանքների փոխանակման վայր էր նշանակվել Նիսիբիս քաղաքը, որը գտնվում էր Տիգրիս գետի ափին:

Բյուզանդա-սասանյան դարաշրջանի ժամանակաշրջանում Հայաստանով տարանցման առևտրի մասին հիշատակվում է Հուստինիանոսի վարքագրքում: Այդ վարքագրքից հայտնի է դառնում, որ Բյուզանդիայի և Սասանյան Պարսկաստանի միջև գոյություն ունեին կանոններ, որոնք կարգավորում էին միջազգային առևտուրը: Տվյալ օրենքում նաև ամրագրված էր, որ միջազգային առևտուրը կարող էր իրականացվել միայն դրա համար նախատեսված երեք մաքսային կետերում. պարսկական տարածքում՝ Նիսիբիս քաղաքում (Մծբին՝ քաղաք Հյուսիսային Միջագետքում), որի մասին արդեն հիշատակված էր եղել 297թ. պայմանագրում, բյուզանդական տարածքում՝ Կալինիկում քաղաքում (ներկայումս Եփրատի ձախ ափին գտնվող Ռակա քաղաքը) և հայկական տարածքում Արտաշատ քաղաքում: Այդ առևտրի իրականացմանը հետևում էին Բյուզանդական



կայսրության կողմից նշանակված հատուկ պաշտոնատար անձիք, որոնք կոչվում էին *comites commerciorum*: Նշված քաղաքներում գտնվում էին մաքսատներ, որտեղ մաքսեր էին գանձվում տեղափոխվող ապրանքներից, այդ իսկ պատճառով, համաձայն պատմական գրառումների, այդ վայրերը կոչվում էին *dekateuturia*:

Բյուզանդայի և Պարսկաստանի միջև առևտրային հարաբերությունները ընդհատվում էին երկարաժամկետ պատերազմների պատճառով, բայց 562թ. կրկին անգամ՝ 50 տարի ժամկետով կնքվեց հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրի մի շարք կետեր կանոնակարգում էին մաքսային կանոնները տերությունների միջև, որոնց խախտման համար խիստ պատիժներ էին նշանակվում: Բյուզանդական և պարսկական վաճառականները այդ պայմանագրի շրջանակում իրավունք էին ստացել տեղափոխել ապրանքներ սահմանային այն կետերով, որտեղ գտնվում էին մաքսատները՝ Նիսիբիսով և Դարայով: Թե՛ բյուզանդական, թե՛ պարսկական ապրանքների տեղափոխումը շրջանցիկ ճանապարհներով՝ առանց պետական թույլտվության, ենթակա էր պատժման:

Ապրանքների տեղափոխման՝ առանց համապատասխան մաքսերի գանձման, իրավունք ունեին «ղեսպանները և գրաբերները»: Նրանք միևնույն ժամանակ հատուկ ուշադրության և խնամքի իրավունք ունեին և կարող էին զբաղվել իրենց կողմից ներկրված ապրանքների առևտրով: Սակայն դա չէր կարող կրել երկարատև բնույթ: Եթե դեսպանները երկարատև ժամկետով բնակվում էին ինչ-որ գավառում և հետևաբար կարող էին իրականացնել ապրանքների առևտուր, ապա նրանք պետք է ենթարկվեին ընդհանուր կանոններին: Դեսպանների և հյուպատոսների գույքի անձեռնմխելիության սովորույթը հավասարապես ընդունված էր և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում:

## 1.2 Հայկական մաքսային պատմությունը

Հայկական լեռնաշխարհի տարածքում մաքսային գործը և մաքսերի գանձման մեթոդները ծագել են հին պետությունների առաջացման ժամանակներից, երբ տնտեսությունը հասել էր այն մակարդակին, երբ տեղի էր ունեցել աշխատանքի բաժանումը: Աշխատանքի բաժանման և արտադրողականության բարձրացման հետևանքով առաջացել էր հավելյալ արտադրանք, որի հետևանքով տեղի էր ունենում ապրանքների փոխանակություն, իսկ հետո նաև առք ու վաճառք: Այդ ժամանակ նոր մասնագիտության մարդիկ առաջ եկան, որոնք մասնագիտանում էին ոչ թե ապրանքների արտադրության մեջ, այլ զբաղվում էին դրանց առուծախով: Հետևաբար առաջացան նաև որոշակի վճարներ՝ ապրանքների տեղափոխման, տարանցման, վաճառքի և այլնի համար: Սակայն դրանք դեռևս մաքսային վճարներ չէին, այլ որոշակի հարկերի տեսակներ էին, որոնք գանձվում էին քաղաքների կամ պետությունների գանձապետարաններ:

Միևնույն ժամանակ մաքսեր էին գանձվում ոչ միայն արտաքին, այլ նաև ներքին առևտրից:

Հայկական մաքսային պատմությունը սկիզբ է առնում հին ժամանակներից, երբ առաջին մաքսավորները մաքսեր էին գանձում հայկական մայրաքաղաքներում և այլ քաղաքներում: Հայկական մաքսային պատմությունը Հայոց պատմության անբաժանելի մասն է:

Հետաքրքրությունը Հայկական մաքսային պատմության նկատմամբ ավելի է աշխուժացել, քանի դեռ անկախության հռչակման պահից նորաստեղծ հայկական մաքսային համակարգը բավականին երիտասարդ է: Յավոք հայոց մաքսային պատմության վերաբերյալ տվյալները դարերի ընթացքում ոչ բավարար կերպով են պահպանվել, սակայն առկա հակիրճ պատմական տվյալների հիման վրա կարելի է ընդհանուր պատկերացում կազմել հայոց մաքսային պատմության վերաբերյալ և հուսալ, որ հետագա ուսումնասիրությունների

ընթացքում հնարավորություն կընձեռվի ավելի խորացնել պատկերացումը սույն բավականին հետաքրքրաշարժ գործունեության վերաբերյալ:

Հայերի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է: Այստեղ է առաջացել և կազմավորվել հայ ժողովուրդը, այստեղ անցել իր բազմադարյան պատմության ուղին և կերտել իր հարուստ մշակույթը: Հին Հայաստանի տնտեսության հիմքը կազմում էին երկրագործությունը և անասնապահությունը: Տնտեսության կարևոր ճյուղերից էին նաև արհեստն ու առևտուրը:

Քսենոփոնի (V—IV դդ մ.թ.ա.) գրչին պատկանող «Անաբասիս» երկասիրության մեջ տեղ են գտել պատմական տվյալներ, որտեղ նկարագրվում է, որ հայերի հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունը և անասնապահությունն էր: Հույն պատմաբան Հերոդոտոսը (V դ. մ.թ.ա.) հատուկ նշում է իր աշխատությունում, որ հայերի մոտ նկատվում է անասնապահության մեծ զարգացում և միևնույն ժամանակ նշում է, որ Հայաստանի և Միջագետքի միջև առկա էին առևտրային հարաբերություններ: Հայաստանում հայտնաբերված V—IV դդ. մ.թ.ա. հունական մետաղադրամները վկայում են, որ առկա էր միջագային առևտուրը:

Հայաստանն Արտաշեսյանների օրոք տնտեսական և մշակութային լայն կապեր ուներ հին աշխարհի շատ երկրների հետ և աշխուժորեն մասնակցում էր միջագային առևտրին: Արտաշատի, Արմավիրի, Գառնիի և այլ վայրերի պեղումների ժամանակ հաճախ հայտնաբերվում էին Միջագետքից, Ասորիքից, Իրանից, Եգիպտոսից, Փոքր Ասիայից, Հունաստանից և Հռոմից ներմուծված զանազան իրեր և այլ երկրներում կտրված դրամներ: Հայաստանից այդ ժամանակշրջանի ընթացքում արտահանվում էին հացահատիկ, գինի, մետաղ, ներկ՝ նաև որդան կարմիր ներկը, կիսաթանկարժեք քարեր, սրաքարեր և այլն:

Հին աղբյուրների վրա հիմնվելով՝ Մովսես Խորենացին նկարագրում է, որ Արտաշեսի ռազմական գործողությունների

արդյունքում Հայաստան էին բերվել գերիներ: Տիգրան 2-րդի (95—55 դդ. մ.թ.ա.) օրոք նվաճված հողերից բավականին մեծ հարկեր էին գանձվում: Տիգրանի կարևորագույն գործողություններից մեկն էլ այն էր, որ նա կարգավորեց առևտրային հարաբերությունները: Դա կարևոր էր ոչ միայն վաճառականների, այլև նաև հողագործների և արհեստավորների համար, որոնց հնարավորություն ընձեռվեց իրենց արտադրանքը վաճառել շատ երկրների շուկաներում: Հիմնական առևտրային ճանապարհները արևմուտքից արևելք, ներառյալ միջերկրական նավահանգիստները, որտեղից դրանք սկսվում էին, տեղակայված էին նորաստեղծ կայսրության տարածքում: Մի շարք արաբական քոչվոր ցեղեր Տիգրանի կողմից բնակեցվել էին առևտրային ճանապարհների երկայնքով, որպեսզի ապահովվեր այդ ճանապարհների անվտանգությունը և միևնույն ժամանակ կարգավորվեր մաքսային վճարների գանձումը: Նման մաքսային կետեր ստեղծվել էին Եփրատի ափին, Ամանի լեռնանցքում և այլն: Ծովային առևտրի կանոնակարգման նպատակով Տիգրանը, որը սեփական նավատորմ չուներ, հենվում էր այլ ազգերի վրա:

Խորենացու աշխատության մեջ ասվում է Արտաշատի, Երվանդաշատի, Արմավիրի, Վանի և այլ քաղաքների սեմիթական բնակչության մասին: Այդ առումով կարելի է եզրակացնել, որ Տիգրանի ժամանակաշրջանի ընթացքում, ինչպես նաև հետագայում, Հին Հայաստանի առևտրում մեծ դեր էին խաղում ոչ թե հայերը, այլ օտարերկրյա բնակչությունը՝ հիմնականում հրեաները և արամեացիները: Թե ի՞նչքան է ուժեղ եղել սեմիթների ազդեցությունը և դերը Հայաստանի առևտրային կյանքում, երևում է նրանից, որ հայոց լեզվում հիմնական բառերը՝ ինչպիսին են «շուկա», «խանութ», «հաշիվ» և այլն, որոնք կապ ունեն առևտրի հետ, փոխառություն են առել արամեական լեզվից:

IX-XI դարերում Հայաստանը մեծ դեր էր խաղում միջազգային առևտրում: Արաբաբյուզանդական անընդհատ կրկնվող պատերազմական ընդհարումների պայմաններում չեզոքություն

պահպանող Հայաստանը դարձել էր տարանցման երկիր, որի տարածքով քարավանները ապրանքներ էին տեղափոխում Բյուզանդիայից, արաբական երկրներից, Իրանից, Հեռավոր Չինաստանից, Հնդկաստանից, Ռուսիայից և այլ երկրներից: Հայաստանի տարածքով անցնում էր արևելքը և արևմուտքը, հյուսիսը և հարավը իրար հետ կապող առևտրային ճանապարհները: Հայաստանը միջազգային առևտրին մասնակցում էր նաև սեփական արտադրանքով՝ արտահանելով մետաղ, զարդեղեն, գործվածքեղեն, գորգեր, ներկ, Վանա տառեխ ձուկը, գինի, ձիեր և ջորիներ:

Ներմուծվող ապրանքների ցանկում էին հիմնականում համեմունքները, դեղորայքը և այլն: Տրապիզոնի նավահանգստից՝ Սև ծովով, աշխույժ առևտուր էր տեղի ունենում նաև Կիևյան Ռուսիայի հետ:

X—XIդդ. հիմնական կապուղին էր դարձել Անի քաղաքը: Հայաստանի նոր մայրաքաղաքից քարավանային ճանապարհներ էին տանում հետևյալ ուղղություններով՝ Անի-Լոռի-Թիֆլիս, Անի-Ախալցխա-Քութախ-Սև ծով, Անի-Բագարան-Վաղարշապատ-Մանասկերտ-Բաթուր-Սիջազետք և այլն: Մեկ այլ ճանապարհ կապում էր Անին Բյուզանդայի հետ:



Մարսատուն (Անի, 1100թ.)

XII-XIIIդդ. Հայաստանի առևտրատնտեսական հարաբերություններում ավելի մեծ դեր սկսեցին խաղալ

հյուսիսային երկրները: Մերտ կապեր հաստատվեցին Ռուսաստանի հետ: Հայաստանից Ռուսաստան էր արտահանվում հիմնականում մետաքսե գործվածքեղեն, գորգեր, ներկեր և այլն, իսկ ներմուծվում էր մորթի և մուշտակեղեն:

Ի.Ա. Լինչենկոն հայերի մասին գրել է. «Հարավային Ռուսաստանի առավել հայտնի առևտրային կենտրոնները իրենց հարստությամբ, շքեղությամբ և արժեքով մեծ մասամբ պարտական են հայերին: Շնորհիվ այդ ժիր, ախշույժ, նորարարություններին ընդունակ ժողովրդի Հարավային Ռուսաստանը դարձել է միջնորդ Արևելքի և Արևմուտքի առևտրականների միջև: Իմանալով արևելյան կենսակարգը, տիրապետելով արևելյան լեզուներին, գերազանց ծանոթ լինելով արևելքի ճանապարհներին, օժտված լինելով խիզախությամբ, գերազանց տիրապետելով զենքին՝ հայերը հնուց իրականացրել են ցամաքային առևտուր Արևմուտքի և Արևելքի միջև»:

Հայաստանի առևտրային հարաբերությունները Ռուսաստանի հետ պահպանվեցին այդ ժամանակաշրջանից մինչ օրս: Պատմությանը հայտնի է, որ XVII դարի վերջերին՝ 1670թ., հայ վաճառական Գրիգոր Լուսիկյանը Ռուսաստանի թագավոր Ալեքսեյին ներկայացրեց Պետրոս Կաթողիկոսի նամակը, որտեղ վերջինս խնդրում էր թագավորին հայերի նկատմամբ բարիդրացիական վերաբերմունք ցուցաբերել և «սատար կանգնել հայերին»: Նույն ժամանակ Լուսիկյանը Մոսկվայում գաղտնի բանակցություններ էր վարում Ռուսաստանի կառավարության հետ: Այդ բանակցությունների մանրամասնությունները հայտնի չեն, սակայն արտոնությունները, որոնք տրամադրվեցին թագավորի և Դումայի կողմից հայ վաճառականներին, այնպիսինն էին, որ ռուս վաճառականները նույնիսկ դժգոհություն էին հայտնում: Հայերին տրամադրվել էին մի շարք արտոնություններ և ինքնակառավարում: Աջակցություն էր ցուցաբերվում նաև հայերի ներգաղթի համար: Հայերը Ռուսաստանում տասնյակ տարիների ընթացքում ազատվում էին հարկերից և այլ վճարներից,

հնարավորություն ունենալ կառուցել եկեղեցիներ և ապրել իրենց օրենքներով՝ ունենալով սեփական դատարաններ:

Ալեքսեյ թագավորի քաղաքականությունը շարունակեց նաև նրա որդին: 1695թ. Պետրոս թագավորը պարսից շահին ուղղված նամակում պահանջում էր, որ մետաքսի ամբողջ առևտուրը, որը կենտրոնացված էր հայ վաճառականների ձեռքին, անցներ Աստրախան-Մոսկվա ճանապարհով և «որպեսզի թագավորության հայերի ապրանքները սահմանային քաղաքներում բաց թողնվեն առանց ուշացումների»:

1711 մարտի 22-ի Ռուսաստանի Դոմայի հրամանագրի կետերից մեկում նշված էր. «Հայերին հնարավորին չափ աջակցություն ցուցաբերել, որպեսզի խթանվի նրանց ներգաղթը»: Իսկ 1711թ. մայիսի 2-ի Պետրոս թագավորի հրամանագիրը ամրագրեց հայ վաճառականներին նախկինում տրամադրված բոլոր արտոնությունները: Հայ վաճառականների խնդրանքով մաքսերը զանձվում էին ոչ թե սահմանային քաղաքներում, այլ միայն Մոսկվայում: Առաջին անգամ հայերին թույլատրվեց ներմուծել թանկարժեք քարեր առանց մաքսերի վճարման:

XIX դարի վերջին Հայաստանում տնտեսական աճ էր նկատվում: Հատկապես 1880-1890 թթ. ընդլայնվում և կատարելագործվում էին Ալավերդու և Ջանգեզուրի պղնձաձուլման, Երևանի գինու-օղու գործարանները, Կողբի և Նախջևանի աղի արտադրությունը: Դարի վերջին տասնամյակում Երևանի նահանգում գինու արտադրությունը աճել էր 7 անգամ, կոնյակինը՝ 36 անգամ: Հայկական կոնյակը Ռուսաստանում առաջին տեղն էր զբաղեցրել և մեծ քանակությամբ արտահանվում էր: Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունները թողարկում էին ավելի քան 30 տեսակ արտադրանք:

Երկրի տնտեսական զարգացմանը խոշոր չափով նպաստում էր նաև երկաթուղիների ու խճուղիների կառուցումը: 1872թ. կառուցվում է Փոթի-Թիֆլիս, 1883-ին՝ Թիֆլիս-Բաքու, 1899-ին՝ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս, 1902-ին՝ Ալեքսանդրապոլ-Երևան,

1908-ին՝ Երևան-Ձուլֆա երկաթգծերը: 1860-1870-ական թվականներին կառուցվում են Թիֆլիս-Գիլիջան-Երևան-Ձուլֆա և Գարաքիլիսա-Ալեքսանդրապոլ ու Նախջևան-Գորիս խճուղիները: Երկաթուղիների և խճուղիների կառուցումը տնտեսական ու ռազմավարական կարևոր նշանակություն ունեք:

Հայ ժողովրդի նոր դարաշրջանի պատմության լուսավոր և ուսանելի էջերից է Հայաստանի Հանրապետության պատմությունը, մի պատմական իրողություն, որը տասնամյակներ շարունակ խորհրդահայ պատմագրության մեջ որոշակի քաղաքական և գաղափարական պարտադրանքով մոռացության էր մատնվել:

1918 թվականին, երբ հռչակվեց Հայաստանի առաջին հանրապետությունը, և վերականգնվեց 600 տարի առաջ կորսված հայ ազգային պետականությունը, կազմակերպվեց նաև մաքսային գործը: Մաքսային կետեր հիմնվեցին Քոլագերանում, Նորագավիթում, Ուզունթալայում: Բարձրացվեց ակցիզային (անուղղակի) հարկի դրույքաչափը: Իրականացվեցին մի շարք այլ միջոցառումներ, սակայն հանրապետությունը գտնվում էր բավականին բարդ տնտեսաքաղաքական իրավիճակում: 1918թ. սեպտեմբերից մինչև 1920 հունվարի 1-ը հարկերից և տուրքերից ստացված եկամուտները կազմել էին ընդամենը 30 մլն. ռուբլի, մինչդեռ ծախսերը ամսական կազմել էին 17,5 մլն. ռուբլի: Հասկանալի է, որ նման պայմաններում պետության ընթացիկ ծախսերը ծածկելու համար կառավարությունը ստիպված էր լրացուցիչ թղթադրամ բաց թողնել, որի հետևանքով էլ սկսեց արագորեն ընկնել ռուբլու փոխարժեքը: Պետբյուջեի ծախսերը գնում էին հիմնականում երկու խոշոր բնագավառների՝ գաղթականների ու որբերի պահման և բանակի ու պետական պաշտպանության նպատակների համար:

1919թ. երկրորդ կեսից սկսեց աշխուժանալ առևտուրը: Երկրից արտահանվում էին բամբակ, կոնյակ, այլ խմիչքներ, բուրդ, կաշի, մորթի, պղինձ, աղ, չոր խոտ և այլն: Մեկ տարվա ընթացքում (1919թ. մարտից մինչև 1920 մարտի 1-ը) Հայաստանից



արտահանվել է (չհաշված բամբակը) 170 փութ կամ 36.032.780 ռուբլի արժողությամբ ապրանք, որի հիմնական տեսակներն էին խմիչքները և կաշվեղենը:

Ներմուծվում էին հիմնականում նավթամթերք, հացահատիկ, այլուր, բրինձ, շաքար, ձուկ, օճառ, թեյ, բուսական յուղ, կտորեղեն, ապակի, դեղորայք և այլն: Ներմուծումը, արտահանման հետ համեմատած, ուներ շատ մեծ տեսակարար կշիռ: Այսպես, վերը նշված ժամանակաշրջանից ավելի պակաս ժամկետում (9 ամսում) Հայաստան էր ներմուծվել ավելի քան 5,5 մլն. փութ համախառն ապրանք, որի արժեքը չճշտված տվյալներով կազմել էր մոտ 443 մլն. ռուբլի: Հատկանշական է, որ Հայաստան ներմուծված այդ ապրանքների ծավալում շուրջ 77 տոկոսը (4,2 մլն. փութ) կազմել էր միայն ամերիկյան ապրանքներն ու մասնավորապես ամերիկյան օգնության հացամթերքը:

Պատմական իրադարձությունների հետևանքով Հայաստանի առաջին հանրապետությունը բավականին կարճ պատմություն ունեցավ և առաջացավ Խորհրդային Հայաստանը: Դրանից հետո սկսվեց մի ժամանակաշրջան, որը հայտնի է որպես ամբողջատիրության, կոմունիստական բռնատիրության, այսպես կոչված գորանոցային սոցիալիզմի ժամանակաշրջան:

Ռուսաստանում 1917թ. հոկտեմբերին ինչխանության եկած նոր կառավարությունը բացասական վերաբերվեց մինչ հեղաշրջումը գոյություն ունեցող մաքսային համակարգի կառուցվածքին: Լենինյան գաղափարը՝ արտաքին քաղաքականության պետական մենաշնորհի վերաբերյալ, տեղ չթողեց մաքսասակագնային կարգավորման մեխանիզմների կիրառմանը և դարձրեց մաքսային հսկողությունը արտաքին առևտրի կարգավորման լրացուցիչ ձևական բնույթ կրող տարր:

Մինչ հոկտեմբերյան հեղափոխությունը Ռուսաստանում մաքսային գործը ղեկավարվում էր 1910թ. ընդունված կանոնադրությամբ, որով առաջնորդվում էին մաքսային մարմինները:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո մաքսային համակարգի դերը տնտեսության կարգավորման գործընթացում բավականին ցածր էր, որը պայմանավորված էր նրանով, որ այդ ժամանակ մաքսային համակարգի կարգավորման դերը կրում էր Արտաքին առևտրի ազգային կոմիսարիատը, որը ոչ թե կարգավորում էր արտաքին առևտրային հարաբերությունները, այլ զբաղվում էր ներմուծվող ապրանքների բաշխմամբ: Անցումը Նոր տնտեսական քաղաքականությանը անհրաժեշտ դարձրեց վերականգնել մաքսասակագնային կարգավորումը՝ արտաքին առևտրի ընդլայնման կապակցությամբ:

Այսպես՝ 1922թ մարտին հաստատվեց ներմուծման առաջին մաքսային սակագինը, իսկ հունիսին՝ արտահանման սակագինը: Ստեղծվեց նաև մաքսասակագնային կոմիտեն, որի իրավական կարգավիճակը հաստատվեց 1924թ. դեկտեմբերի 12-ի ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից ընդունված և հաստատված Մաքսային կանոնադրությամբ և 1928թ. հաստատված Մաքսային օրենսգրքով: Սակայն կոմիտեի խնդիրների մեջ մտնում էր ոչ թե բաշխման և կարգավորման գործունեությունը, այլ ընդհանուր մաքսասակագնայի քաղաքականության համաձայնեցումը Արտաքին առևտրի ազգային կոմիսարիատի հետ, որը Մաքսային կանոնադրության առաջին հոդվածի համաձայն ԽՍՀՄ ամբողջ տարածքում իրականացնում էր մաքսային գործի ղեկավարումը, տարածքային մաքսային մարմինների կողմից իրականացվող գործունեության վերահսկումը, տարածայնությունների քննումը, որոնք ծագում էին գործունեություն իրականացնելիս և մաքսանենգության դեմ պայքարին ուղղված գործունեությունը:

1925թ. մաքսային մարմինների վերակազմավորման ընթացքում ԽՍՀՄ տարածքի վրա ստեղծվեցին 11 տարածքային մաքսային վարչություններ՝ Կարելիայի, Հյուսիս-արևմուտքի, Բելոռուսիայի, Հյուսիսկովկասյան, Թուրքմենիայի, Ուզբեկստանի, Ալմա-Աթայի, Չայսանի, Չիտայի, Բլագովեշենսկի և Վլադիվոստոկի:

Երկրորդ համաշխարհային պատերազմը և հատկապես Մեծ հայրենական պատերազմը մեծ վնաս հասցրեց ԽՍՀՄ մաքսային համակարգին: Պատերազմի առաջին օրերին արևմտյան սահմաններում գտնվող 24 մաքսատներ զավթվեցին Գերմանիայի կողմից, և մաքսատների շենքերը մեծ մասամբ քանդվեցին: Առավել վնաս էր հասցվել Թալինի, Ռիգայի, Ֆեոդոսիայի, Տուրայսեի մաքսատներին: Պատերազմի սկզբից բանակ էր զորակոչվել և մասնակցում էր պարտիզանական շարժմանը մաքսային համակարգի անձնակազմի 90 տոկոսը:

1941թ. սեպտեմբերի մեկի դրությամբ 37 մաքսատներում և մաքսային կետերում աշխատում էր ընդամենը 318 մաքսավոր: Վարչությունը բաղկացած էր 37 հոգուց: Մաքսատների մեծ մասում աշխատում էին միայն մի քանի հոգի: Միայն Լենինգրադի, Մոսկվայի, Արխանգելսկի, Բաքվի, Վլադիվոստոկի մաքսատներում անձնակազմը բաղկացած էր 10-80 ծառայողից: Պատերազմի ընթացքում մաքսային մարմինների վրա նոր խնդիրներ էին դրվել: Հիմնականում դա Միջազգային Կարմիր խաչի ծրագրով ներմուծվող բեռների բաց թողման խնդիրներն էին: Եթե պատերազմի առաջին տարիներին այդ բեռները փոքրածավալ քանակությամբ էին ներմուծվում, ապա 1945թ. սկզբից սկսած՝ բեռները մեծ ծավալներով սկսեցին ներմուծվել, որը բավականին մեծ ծանրաբեռնվածություն ստեղծեց մաքսավորների համար:

Պատերազմից հետո հնարավորություն ընձեռվեց արևմտյան մաքսատների վերականգնման և ընդհանրապես մաքսային համակարգի ամրապնդման համար: Առաջին անգամ պատերազմից հետո մաքսային համակարգի Գլխավոր մաքսային վարչության կազմում ստեղծվեցին հետևյալ բաժինները՝ կադրերի, տրանսպորտաբեռնային, փոստաուղևորային, մաքսանենգության դեմ պայքարի, մաքսային վիճակագրության, մաքսային տեղեկատվության, սակագների, ֆինանսական և մատակարարման: Գլխավոր մաքսային վարչության կազմում

ընդգրկված էին մաքսատներ և մաքսային կետեր: Մաքսատները և մաքսային կետերը ստորաբաժանվեցին երեք դասի:

Առաջին դասի մաքսատները և մաքսային կետերը ստեղծվեցին երկաթուղային և նավահանգստային տարածքներում, որոնք ունեին ավելի մեծ շրջանառության ծավալներ: Առաջին դասին էին վերաբերում Մոսկվայի, Լենինգրադի, Օդեսայի, Ռիգայի, Թալինի, Բրեստի, Վլադիվոստոկի, Վիբորգի, Մոստի, Ռենի, Կալինինգրադի, Մուրմանսկի մաքսատները և մաքսային կետերը:

Երկրորդ դասի մաքսատները և մաքսային կետերը ստեղծվեցին փոքր նավահանգիստներում և ավտոմոբիլային ճանապարհներին: Երկրորդ դասին էին վերաբերում Արխանգելսկի, Լիբավայի, Վինդավայի, Կլայպեդայի, Չոփի, Ուզնենսկի, Իզմայլի, Կոբասկի, Նովոռոսիյսկի, Բաթումի, Լենինականի, Գրոդնոյի, Բրեստովիցկի, Խորգոսի, Օտպորի մաքսատները և մաքսային կետերը:

Երրորդ դասի մաքսատները և մաքսային կետերը ստեղծվեցին այլ երթուղիների վրա: Գրանց էին վերաբերում Յագոդայի, Ռավա-Ռուսիայի, Հերսոնի, Նիկոլայեվսկի, Ֆեոդոսիայի, Մարիուպոլի, Պոկրովի, Տուափսեի, Սինսկի և այլ մաքսատները:

Հետպատերազմյան առաջին տարիների ընթացքում մաքսային համակարգը մեծ դժվարություններ էր կրում` հատկապես կադրերի առումով: Ժամանակի ընթացքում համակարգը վերականգնվեց և 1964թ. մայիսի 5-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հրամանագրով հաստատվեց նոր ԽՍՀՄ Մաքսային օրենսգիրքը: Ի համեմատ 1928թ. օրենսգրքի` այս օրենսգիրքը բավականին փոքրածավալ էր` ընդհանմենը 120 հոդված, որոնք համախմբված էին երեք գլխում: 1964թ. Մաքսային օրենսգիրքը մաքսային համակարգի հիմնական օրենսդրական նորմատիվային փաստաթուղն էր, որը կանոնակարգում էր կենտրոնական և տեղական մաքսային վարչությունների աշխատանքը: Մաքսային գործի ղեկավարումը ԽՍՀՄ տարածքում իրականացնում էր Արտաքին առևտրի նախարարությունը, որի կառուցվածքում ընդգրկված էր Գլխավոր մաքսային վարչությունը: Այդ ժամանակ մաքսային համակարգի

կարևորագույն խնդիրներն էին պետական մենաշնորհային արտաքին առևտրի նկատմամբ հսկողության իրականացումը, մաքսային գործառնությունների իրականացումը և մաքսանենգության դեմ պայքարը:

1961 թվականի, ինչպես նաև քսան տարի անց, 1981թ. մաքսային սակագները կրում էին ձևական բնույթ: 1981թ. մաքսային սակագինը չէր կարող հանդես գալ որպես արտաքին տնտեսական հարաբերությունների կարգավորման գործիք: Նա ներառում էր ընդհանմենը երեք հարյուր ապրանքային դիրք՝ այն դեպքում, երբ որոշ զարգացած երկրներում այն արդեն ներառում էր 5-7 հազար ապրանքային դիրք, իսկ ԱՄՆ-ում և Ճապանիայում՝ 10-12 հազար:

1981թ. մաքսային սակագինն բնորոշ չէին մաքսերի համապատասխանությունը ապրանքների գներին, որոնք կազմավորվել էին արտաքին և ներքին շուկաներում: Օրինակ՝ տրանսպորտային միջոցների նկատմամբ այն կազմում էր 5-10%, վառելիքի նկատմամբ՝ 10-12%, մետաղի՝ 15%, քիմիական արտադրության՝ 5-10%: Նման մոտեցումը բավարար էր համարվում կենտրոնացված դարաշրջանի արտաքին առևտրի համար:

Մաքսային համակարգի զարգացման նոր փուլը սկսվեց 1986-1991թթ.: Տեղի ունեցավ վերակառուցում մաքսային գործի զարգացման ուղղությամբ, որը պայմանավորված էր շուկայական տնտեսության ուղու ընտրման հետ: Միևնույն ժամանակ այդ ժամանակաշրջանում տեղի ունեցած բոլոր փոփոխությունները դրական արդյունք չտվեցին, ապարդյուն էին իրականացված ջանքերը, քանի դեռ մաքսային համակարգի խնդիրների մեջ, ինչպես նախկինում, մտնում էր մոնոպոլիզացված պետական արտաքին առևտրի վերահսկումը:

1991թ. ընդունվեց ԽՍՀՄ Մաքսային օրենսգիրքը և ԽՍՀՄ օրենքը մաքսային սակագնի մասին: Այդ նորմատիվային փաստաթղթերով հաստատվեց մաքսատների կարգավիճակը: Մաքսատները և մաքսային կետերը իրենց տեղաբաշխմամբ

բաժանվում էին սահմանապահ և տեղական՝ ներքին մաքսային մարմինների: Տեղական մաքսային մարմինները բաժանվում էին օդային, ծովային և ցամաքային կետերի: Այդ տարիների ընթացքում՝ արտաքին առևտրի ծավալների աճի կապակցությամբ, տեղի ունեցավ մաքսատների քանակի աճ, 87-ից ստեղծվեց 95-ը:

Խոշոր մաքսատները, որոնց գործունեության տարածքային բաժանումը հանրակնում էր հանրապետական տարածքների հետ, կազմավորվեցին և դարձան հանրապետական մաքսատներ: Այսպես՝ Վրաստանում, մերձբայթյան երկրներում և ԽՍՀՄ այլ երկրներում ստեղծվեցին հանրապետական մաքսային վարչություններ:

1991թ. դեկտեմբերին Խորհրդային միությունը փլուզվեց և ավարտվեց նաև ԽՍՀՄ Մաքսային համակարգի գործունեությունը:

Հայաստանի Հանրապետությունում անկախության հռչակումից հետո՝ 1992թ. հունվարի 4-ին, ՀՀ Նախագահի հրամանագրով ստեղծվեց ՀՀ Մաքսային վարչությունը: Այստեղից սկսվում է Հայաստանի մաքսային համակարգի և մաքսային ծառայության նորագույն պատմությունը:

1992-1999թթ. մաքսային համակարգի աշխատանքները կանոնակարգում էր վերը նշված Մաքսային վարչությունը, որը 1999թ. հուլիսից ընդգրկվեց ՀՀ պետական եկամուտների նախարարության կազմում:

2001թ. հուլիսի 6-ի ՀՀ Կառավարության թիվ 603 որոշմամբ ստեղծվեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն:

2008թ. օգոստոսի 20-ի՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի ստորագրած հրամանագրի համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայությունն ու ՀՀ Կառավարությանն առընթեր մաքսային պետական ծառայությունը միաձուլվել են՝ վերակազմակերպելով ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն:

### 1.3 Մաքսային քաղաքականության հասկացությունը

Հին ժամանակներում, երբ ստեղծվեցին առաջին պետությունները, որոնց կազմում առկա էին պետական ապարատը, բանակը և այլ կառույցներ, որոնց պահպանման և գործունեության համար անհրաժեշտ էին դրամական միջոցներ, առաջ եկավ մաքսային քաղաքականության գաղափարը, որն ապահովում էր այդ դրամական միջոցների հավաքագրումը, պետական ինքնիշխանության ապահովումը և տնտեսական անվտանգության խնդիրները: Բաբելոնում, Հին Եգիպտոսում, Հնդկաստանում, ինչպես նաև հայկական պետություններում մաքսային քաղաքականությունը արտահայտում էր թագավորների, փարավոնների, նրանց շքախմբերի և վաճառականների շահերը:

Հասարակության զարգացման ընթացքում մաքսային քաղաքականությունը սկսեց արտահայտել պետության բնակչության գրեթե բոլոր խավերի շահերը, որի հետևանքով առաջացավ պետական կառույց, որը կարելի էր ասել ժամանակակից մաքսային մարմինների նախապատկերն էր:

Մաքսային քաղաքականություն հասկացությունը իր վաղ դրսևորումը ստացավ V-IX դդ.. Մեծ Բրիտանիայում:

Այդ ժամանակաշրջանում մաքսային քաղաքականությունը հիմնականում կրում էր մաքսերի հավաքագրման խնդիրը, որոնք գանձվում էին ճանապարհներից, կամուրջներից, նավահանգիստներից և շուկաներում գործող տարածքներից օգտվելու համար:

XVI-XVII դդ.. արևմուտքի երկրների տնտեսության զարգացումը նպաստեց առևտրային հարաբերությունների զարգացմանը, անցմանը մոնետարիզմից մերկանտիլիզմին և պրոտեկցիոնիզմին, որը սկիզբ առավ Անգլիայում 1651թ. Կրոմվելի Նավարարության վարքագրքով (Navigations Acts) և տևեց մոտ 200 տարի: Ֆրանսիայում պրոտեկցիոնիզմը սկսվեց 1667թ., Պրուսիայում 17-

րդ դարի վերջին, Ռուսաստանում և Ավստրիայում 18-րդ դարի սկզբին:

Ռուս պետական և հասարակական գործիչ, տնտեսագետ Ն.Ս. Մորոզովինովը (1754-1845) դիտում էր պրոտեկցիոնիզմը (ֆրանս. protectionnisme, լատ. ptotectio — պաշտպանել) որպես Ռուսաստանի զարգացման իդեալական ճանապարհ: «Պրոտեկցիոնիզմը - պետականություն է», ասում էր Գ.Ի. Մենդելեևը, որը վերլուծության ենթարկելով Եվրոպայի և Ռուսաստանի տնտեսական զարգացման ուղիները՝ բազմաթիվ օրինակների վրա ապացուցեց պրոտեկցիոնիզմի կարևորությունը և նրա փոխադարձ կապը ազատ առևտրի հետ: Սկզբնական շրջանում այն նպաստում է երկրում առկա արտադրության բոլոր ճյուղերի ակտիվ զարգացմանը, որի հետևանքով բավարարվում է բնակչության պահանջները, իսկ այդ զարգացման համար անհրաժեշտ է բավականին բարձր դրույքաչափեր սահմանել ներմուծվող ապրանքների նկատմամբ կամ արգելել որոշ ապրանքների ներմուծումը:

Պրոտեկցիոնիզմի հասկացությունը, ինչպես նաև նրա կիրառումը մաքսային քաղաքականության մեջ, պահանջում է գիտական մոտեցում, այդ իսկ պատճառով հարկերի և տուրքերի դրույքաչափերը պետք է բազմակողմանի վերլուծության ենթարկվեն, որպեսզի արտադրության ծավալները հասնեն ցանկալի զարգացմանը:

Պրոտեկցիոնիստական տուրքերը միայն այն ժամանակ են ծառայում իրենց նպատակին, երբ երկրի բոլոր պայմանները նպաստում են արտադրության զարգացմանը և թույլ են տալիս արտահանել այլ երկրներ ավել արտադրված ապրանքներ:

Տուրքերը այն ժամանակ են պրոտեկցիոնիստական, երբ նրանց կիրառումից շահում է համապատասխան տարածաշրջանի բնակչությունը, ապա ամբողջ պետությունը, հետո ամբողջ համաշխարհային շուկան: Մենդելեևը բավականին լուրջ վերլուծությունների հիման վրա եկել էր այն եզրակացության, որ



մինչ 30% դրույքաչափ ունեցող տուրքերը կրում են ֆիսկալ բնույթ, իսկ 30%-ից ավելին պահպանողական (պրոտեկցիոնիստական): ԱՄՆ-ի օրինակի վրա նա ցույց տվեց, որ խիստ պրոտեկցիոնիստական քաղաքականության վարման արդյունքում երկրում հարմոնիկ զարգացում ստացավ հողագործությունն ու արտադրությունը:

Մաքսային քաղաքականությունը պետության կողմից տնտեսական և աղմինիստրատիվ միջոցառումների կիրառումն է, մաքսային կանոնները, մեթոդները և դրանց կիրառման միջոցները, որոնք նախատեսված են կանոնակարգել ապրանքների, կապիտալների, ծառայությունների, մտավոր և աշխատանքային ռեսուրսների շարժը ներքին և արտաքին շուկաներում ազգային տնտեսության պաշտպանման և զարգացման նպատակով: Միևնույն ժամանակ մաքսային քաղաքականությունը նպաստում է պետական բյուջեի եկամտային մասի ապահովմանը:

Մաքսային քաղաքականության վարման համար անհրաժեշտ պայմաններից է օրենսդրական դաշտի առկայությունը, որի շրջանակում մաքսային մարմինները իրականացնում են իրենց վրա դրված խնդիրները:

ՀՀ մաքսային համակարգը ստեղծման օրվանից մեծ նվաճումներ ունեցավ, լրացվեց օրենսդրական դաշտը, ստեղծվեցին մեխանիզմներ, որոնք հնարավորություն տվեցին կատարելագործել իրականացվող աշխատանքները և ապահովել մաքսային համակարգի վրա դրված խնդիրների արդյունավետ կատարումը: 1992թ. սկսած մաքսային իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական դաշտը եղել էր բավականաին բաց: Նախկին ԽՍՀՄ օրենսդրությունը չէր համապատասխանում շուկայական հարաբերությունների սկզբունքներին: Նոր օրենսդրական բազայի ձևավորման համար չկար համապատասխան փորձ: Ժամանակի ընթացքում վերը նշված բացն աստիճանաբար լրացվեց՝ հիմնվելով միջազգային փորձի, ինչպես նաև մաքսային ասպարեզում առկա մի շարք միջազգային

համաձայնագրերի վրա, և ելնելով Հայաստանի Հանրապետության մի շարք միջազգային միություններին անդամակցության գործընթացում ձեռք բերված պարտավորություններից՝ մշակվեցին և ընդունվեցին մի շարք օրենսդրական և ենթօրենսդրական ակտեր՝ ՀՀ մաքսային օրենսգիրք, «Մաքսային սակագնի մասին» ՀՀ օրենք, «Մաքսատուրքերի դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք և այլն:

Մաքսային համակարգի կայացման գործընթացը դինամիկ շարժ ունեցավ: 1993թ. ընդունվեց կառավարության թիվ 615 որոշումը, որը տարիների ընթացքում, որոշ փոփոխություններով և լրացումներով հանդես եկավ որպես մաքսային հարաբերությունները կարգավորող միակ նորմատիվ փաստաթուղթը:

Ներկայումս մաքսային հարաբերությունները կարգավորվում է 2000թ. հուլիսի 6-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված Մաքսային օրենսգրքով, որը ուժի մեջ մտավ 2001թ. հունվարի 1-ից և դրա հետ մեկտեղ ուժը կորցրած ճանաչվեցին.

ա) 1993 թվականի հուլիսի 17-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների աշխատողների հատուկ կոչումներ սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը,

բ) 1993 թվականի հուլիսի 19-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ,

գ) 1998 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Մաքսատուրքերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ,

դ) 1998 թվականի դեկտեմբերի 30-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից ընդունված «Մաքսավճարի մա-

սին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝ հետագա փոփոխություններով և լրացումներով հանդերձ:

Նոր խմբագրությամբ Մաքսային օրենսգրքի ընդունմանը նպաստեց նաև Առևտրի համաշխարհային կազմակերպությանը ՀՀ անդամակցության հիմնահարցը: Հայաստանը կանոնակարգելով և բավարարելով իր առջև քաշված պահանջները, համապատասխանեցնելով օրենսդրական դաշտը միջազգային նորմերին 2002թ. դեկտեմբերի 11-ին դարձավ ԱՀԿ-ի 145-րդ անդամը՝ մինչդեռ անդամակցության վերաբերյալ Հայաստանը դիմել էր դեռ 1995թ.:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում արտաքին տնտեսական կապերի, դրանցից բխող հարաբերությունների կառավարման տարր է հանդիսանում արդեն կայացած պետական մաքսային համակարգը, որն իր գործունեության շրջանակում իրականացնում է միասնական մաքսային քաղաքականություն:

Հայաստանի Հանրապետության մաքսային քաղաքականության հիմնական խնդիրներից են արտաքին տնտեսական գործունեության մաքսասակագնային կարգավորման մեխանիզմի, մաքսային մարմինների իրավանորմատիվային բազայի կատարելագործումը և այլն:

Մաքսային քաղաքականության իրականացման ժամանակ Հայաստանը առաջնորդվում է միջազգային տնտեսական հարաբերություններում ընդունված սպրանքների դասակարգմամբ, արտահանման և ներմուծման հայտարարագրման միասնական ձևով և այլ համընդհանուր՝ միջազգային հարաբերություններում ընդունված նորմերով:

Մաքսային քաղաքականության հիմնական նպատակները ՀՀ մաքսային սահմանով և մաքսային տարածքով սպրանքաշրջանառության մաքսային հսկողությունն է, տնտեսական անկախության և անվտանգության ապահովումը, ներքին շուկայի պաշտպանությունը, ինչպես նաև ազգային տնտեսության զարգացմանն ուղղված

տնտեսական քաղաքականության այլ խնդիրների իրագործումը և աջակցությունը:

### ***Ստուգողական հարցեր***

1. Ի՞նչ է նկարագրել առևտրային հարաբերությունների վերաբերյալ Մովսես Խորենացին՝ հիմնվելով հին աղբյուրների վրա:

2. Ո՞ր հայկական քաղաքն է X—XIդդ. եղել որպես ճանապարհների հիմնական կայուղի:

3. Հայաստանի առաջին հանրապետության ժամանակ ինչպիսի՞ մաքսային քաղաքականություն էր տարվում:

4. Ե՞րբ է ստեղծվել Հայաստանի Հանրապետությունում՝ անկախության հռչակումից հետո ՀՀ մաքսային համակարգը:

5. Ե՞րբ է ընդունվել ՀՀ Մաքսային օրենսգիրքը:

6. Ի՞նչ է իրենից ներկայացնում պրոտեկցիոնիզմը:

*«Ստանձնելով Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայողի պաշտոնը, հանդիսավոր երդվում եմ՝ հավատարմորեն ծառայել Հայաստանի Հանրապետությանը և նրա ժողովրդին, Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայողի լիազորություններն իրականացնելիս խստագույնս պահպանել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենսդրությունը, քաղաքացու իրավունքները, ազատությունները և օրինական շահերը, պաշտպանել Հայաստանի Հանրապետության տնտեսական անկախությունը և անվտանգությունը, բարեխղճորեն կատարել պաշտոնական պարտականությունները և արժանապատվորեն կրել մաքսային ծառայողի բարձր կոչումը»:*

*ՀՀ մաքսային ծառայողի երդման տեքստը*

**ԳԼՈՒԽ 2**  
**ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**2.1 Մաքսային մարմինների տեղաբաշխումը ՀՀ սահմաններում**

Հայաստանում միասնական մաքսային քաղաքականությունը տարվում է մաքսային տարածքում, որը ընդգրկում է ցամաքային, ջրային և օդային տարածքները:

Ելնելով իր աշխարհագրական դիրքից՝ Հայաստանը սահմանակցում է չորս երկրների հետ. հարավից՝ Իրանի Իսլամական Հանրապետության, արևմուտքից՝ Թուրքիայի, հյուսիսից՝ Վրաստանի, իսկ հարավ-արևմուտքից ու արևելքից՝ Ադրբեջանի հետ:

Հայաստան-Իրան պետական սահմանի երկարությունը 40 կմ է: Սահմանի երկայնքով հոսում է Արաքս գետը: Միակ անցանելի մասը Մեղրիի կամուրջն է, որի մոտ տեղակայված է Մեղրու մաքսային կետը: Մեղրու մաքսային կետը Հայաստանի հյուսիսային շրջաններին կապող հիմնական ավտոճանապարհն անցնում է Միսիան քաղաքի մոտակայքում տեղակայված Սյունիքի տարածաշրջանային մաքսատան կողքով, Երևան-Միսիան ավտոճանապարհի երկարությունը կազմում է 217 կմ: Մեղրի-Միսիան ճանապարհի ընդհանուր երկարությունը 166 կմ է: Ծանապարհը ձգվում է լեռնային բարձրադիր շրջաններով, այդ իսկ պատճառով հատկապես ձմռանն այն դժվարացնելի է: Մեղրի-Երևան ավտոճանապարհի ընդհանուր երկարությունը 410 կմ է:

Հայ-թուրքական սահմանի երկարությունը գրեթե 650 կմ է (*01.01.2012թ. դրությամբ սահմանը փակ է*): Սահմանի երկայնքով հոսում է Արաքս գետը: Մարգարայով անցնող ճանապարհը կարելի

է հեշտությամբ հատել-անցնել շնորհիվ այն բանի, որ այն ձգվում է Արարատյան դաշտավայրի երկայնքով և մաքսայի կետի գործելուն պես այնտեղ ծանրաբեռնված երթևեկություն կլինի: Այս մաքսային կետը բավականին մոտ է Երևանին՝ մոտավորապես 40 կմ:

Բացի ավտոճանապարհից, Ախուրիկի մաքսային կետով անցնում է նաև երկաթուղայի գիծ:

Հայ-վրացական պետական սահմանի երկարությունը 150 կմ է, որի երկայնքով տեղակայված են Բավրայի, Գոգավանի, Պրիվոլնոյեի, Այրումի, Ջիլիզայի և Բագրատաշենի մաքսայի կետերը: Հեռավորությունը Երևանից՝ Երևան-Բավրա 200 կմ, Պրիվոլնոյե-Երևան 182 կմ, Գոգավան-Երևան՝ 174 կմ, Այրում-Երևան, Ջիլիզա-Երևան՝ 172 կմ, Բագրատաշեն-Երևան՝ 200 կմ.:

Հայ-ադրբեջանական պետական սահմանի երկարությունը 650 կմ է (*01.01.2012թ. դրությամբ սահմանը փակ է*):

## **2.2 ՀՀ մաքսային մարմինների կառուցվածքը**

Հայաստանում մաքսային գործի ղեկավարումը, կազմակերպումն ու վերահսկողությունն իրականացնում է պետական լիազոր մարմինը՝ վերադաս մաքսային մարմինը, որն իրականացնում է մաքսային գործի ղեկավարումը, կազմակերպումն ու վերահսկողությունը (*01.01.2012թ. դրությամբ վերադաս մաքսային մարմին է հանդիսանում 2008թ-ի օգոստոսի 20-ի Հայաստանի Հանրապետության Նախագահի ստորագրած հրամանագրի համաձայն՝ ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն*):


Վերադաս մաքսային մարմինը ներառում է տարածաշրջանային մաքսատներ և մաքսային կետեր:

Տարածաշրջանային մաքսատունը ՀՀ վերադաս մաքսային մարմնի այն ստորաբաժանումն է, որն իրականացնում է իր գործունեության գոտում պետական գրանցում ստացած կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող, ինչպես նաև ֆիզիկական

անձանց կողմից տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողություն և համապատասխան մաքսային ռեժիմներով մաքսային ձևակերպումներ:

Մաքսային կետը ՀՀ պետական սահմանի անցումային կետում տեղակայված ՀՀ վերադաս մաքսային մարմնի այն ստորաբաժանումն է, որն անմիջականորեն ենթարկվում է համապատասխան տարածաշրջանային մաքսատանը և իրականացնում է կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ մաքսային հսկողություն, սահմանված կարգով դրանց բացթողում և ձևակերպում:

***Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները***



Հայաստանի Հանրապետությունում վերադաս մաքսային մարմնի կազմում գործում են հետևյալ տարածաշրջանային մաքսատները, որոնց կազմում գտնվում են մաքսային կետեր:

Վերադաս մաքսային մարմնի կազմում են. (01.01.2012թ. դրությամբ)

- Արարատյան տարածաշրջանային մաքսատունը՝ ԱՏՄ,
- Գուգարքի տարածաշրջանային մաքսատունը՝ ԳՏՄ,
- Շիրակի տարածաշրջանային մաքսատունը՝ ՇՏՄ,
- Սյունիքի տարածաշրջանային մաքսատունը՝ ՍՏՄ,
- Երևանի «Զվարթնոց» մաքսատունը,
- Միջազգային ճանապարհային փոխադրումների տարածաշրջանային մաքսատունը՝ ՄՃՓ,
- Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատունը՝ ԱՄՄՁՏՄ,
- Ակցիզային հարկով հարկվող ապրանքների մասնագիտացված մաքսատունը՝ ԱՀՀԱՄՄ,
- Միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատունը՝ ՄՓԼՍԱՓԱՄՄ:

Ըստ տարածաշրջանային մաքսատների՝ մաքսային կետերը ընդգրկված են հետևյալ կերպ:

***Արարատյան տարածաշրջանային մաքսատունը*** իր կազմում ընդգրկում է.

- Մարգարայի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Թուրքիայի հետ սահմանակից Արմավիրի մարզի Մարգարա գյուղի մոտակայքում՝ ավտոմոբիլային ճանապարհին (01.01.2012թ. դրությամբ մաքսային կետը չի գործում):



***Գուգարքի տարածաշրջանային մաքսատունը*** իր կազմում ընդգրկում է.

- Բագրատաշենի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Վրաստանի հետ սահմանակից Տավուշի մարզի Բագրատաշեն գյուղի մոտակայքում՝ ավտոմոբիլային ճանապարհին:
- Ջիլիզայի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Վրաստանի հետ սահմանակից Տավուշի մարզի Ջիլիզա գյուղի մոտակայքում՝ ավտոմոբիլային ճանապարհին:
- Այրումի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Վրաստանի հետ սահմանակից Տավուշի մարզի «Այրում» երկաթուղային կայարանի տարածքում:
- Գոգավանի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Վրաստանի հետ սահմանակից Տաշիրի մարզի Կալինինո գյուղի մոտակայքում՝ ավտոմոբիլային ճանապարհին:
- Պրիվոլնոյեի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Վրաստանի հետ սահմանակից Տաշիրի մարզի Կալինինո գյուղի մոտակայքում՝ ավտոմոբիլային ճանապարհին:

***Շիրակի տարածաշրջանային մաքսատունը*** իր կազմում ընդգրկում է.

- Բավրայի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Վրաստանի հետ սահմանակից Շիրակի մարզի Բավրա գյուղի մոտակայքում՝ ավտոմոբիլային ճանապարհին:
- «Շիրակ» օդանավակայանի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Գյումրիի «Շիրակ» օդանավակայանի տարածքում:
- Ախուրիկի մաքսային կետը, որը տեղաբաշխված է Թուրքիայի հետ սահմանակից Ախուրիկ գյուղի մոտակայքում, ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների մոտ (*01.01.2012թ. դրությամբ մաքսային կետը չի գործում*):

*Սյունիքի տարածաշրջանային մաքսատունը* իր կազմում ընդգրկում է.

- Մեղրու մաքսային կետը, որը տեղաբաշխված է Իրանի հետ սահմանակից Սյունիքի մարզի Ագարակ ավանի մոտակայքում, ավտոմոբիլային ճանապարհին:

**Երևանի «Զվարթնոց» մաքսատան** (*ստեղծվել է ՀՀ կառավարության 2000թ. օգոստոսի 28-ի թիվ 520 որոշմամբ*) և **Միջազգային ճանապարհային փոխադրումների տարածաշրջանային մաքսատան** (*ստեղծվել է ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 13-ի թիվ 1097 որոշմամբ*) կազմերում մաքսային կետեր ընգրկված չեն: «Զվարթնոց» մաքսատանը մաքսային ձևակերպումներ են ստանում օդային տրանսպորտով տեղափոխվող ապրանքները, իսկ Միջազգային ճանապարհային փոխադրումների մաքսատանը մաքսային ձևակերպումներ են ստանում ՄՃՓ (TIR-Carnet) գրքույկով տեղափոխվող ապրանքները:

**Ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների մասնագիտացված մաքսատանը** (*վերակազմավորվել է ՀՀ կառավարության 2006թ. սեպտեմբերի 22-ի թիվ 1329-Ն որոշմամբ*) մաքսային ձևակերպումներ են ստանում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ավտոտրանսպորտային միջոցները:


**Ակցիզային հարկով հարկվող ապրանքների մասնագիտացված մաքսատանը** (*ստեղծվել է ՀՀ կառավարության 2006թ. հոկտեմբերի 12-ի թիվ 1531-Ն որոշմամբ*) մաքսային ձևակերպումներ են ստանում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ակցիզային հարկով հարկվող ապրանքները:

**Միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատանը (ստեղծվել է ՀՀ Կառավարության 2009թ. օգոստոսի 20-ի թիվ 947-Ն որոշմամբ) մաքսային ձևակերպումներ են ստանում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքները:**

**ՀՀ վերադաս մաքսային մարմնի կազմում ընդգրկված տարածաշրջանային մաքսատները և մաքսային կետերը**

<b>Տարածաշրջանային մաքսանոց</b>	<b>Մաքսային կետեր</b>					
Արարատյան տարածաշրջանային մաքսատուն	<i>Մարզադարյան մաքսային կետ*</i>					
Գողարքի տարածաշրջանային մաքսատուն	Բազրատաշենի մաքսային կետ	Ջիլիզայի մաքսային կետ	Այրուղի մաքսային կետ	Գողավանի մաքսային կետ	Մոխրմուռնի մաքսային կետ	
Շիրակի տարածաշրջանային մաքսատուն	Թավրայի մաքսային կետ	«Շիրակ» օդանավակայանի մաքսային կետ	<i>Միտքիկի մաքսային կետ*</i>			
Այրմենի տարածաշրջանային մաքսատուն	Արարատ մաքսային կետ					
Երևանի "Ջվարքնոց" մաքսատուն						
Միջազգային ճանապարհային փոխադրում երի տարածաշրջանային մաքսատուն						
Անցիզային հարկով հարկվող ապրանքների մասնագիտացված մաքսատուն						
Ավտոտրանսպորտային մեքսային մաքսային ճանապարհային փոխադրում երի մասնագիտացված մաքսատուն						
Միջազգային փոստային և սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մասնագիտացված մաքսատուն						

Վերը նշված տարածաշրջանային մարսատները իրենց գործունեությունն են իրականացնում ըստ Հայաստանի վարչական տարածքների:



### 2.3 Մաքսային մարմինների հիմնական խնդիրները

Վերը նշված մաքսային մարմինները իրենց գործունեությունն իրականացնելիս ունեն մի շարք խնդիրներ: Հիմնական այդ խնդիրները իրենցից ներկայացնում է.

ա) Հայաստանի Հանրապետության տնտեսական ինքնիշխանության, տնտեսական անվտանգության, տնտեսական շահերի և ներքին շուկայի պաշտպանվածության ապահովումը.

բ) մաքսային օրենսդրության դրույթների կիրառման ապահովումը և մաքսային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացումը, մաքսային օրենսդրության խախտումների կանխարգելումը, կանխումը, բացահայտումը, մաքսային օրենսդրությամբ սահմանված պարտավորությունների չկատարման հետևանքով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ առաջացած պարտքերի գանձման գծով աշխատանքների իրականացումը.

գ) առևտրատնտեսական հարաբերություններում մաքսային կարգավորման մաքսային օրենսդրությամբ սահմանված միջոցների կիրառումը, Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսդրությամբ սահմանված ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառումը, մաքսային վճարների գանձումը և փոխանցումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.

դ) մաքսային հսկողության ու մաքսային ձևակերպումների իրականացումը և Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապրանքաշրջանառության և ուղևորաշրջանառության խթանմանը նպաստող պայմանների ստեղծումը.

ե) մաքսանենգության, ինչպես նաև մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխմանը վերաբերող մասով Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ խախտումների դեմ պայքարը, թմրամիջոցների, զենքի, մշակութա-

յին, պատմական և հնագիտական նշանակություն ունեցող առարկաների, մտավոր սեփականության օբյեկտների, ոչնչացման վտանգի տակ գտնվող կենդանատեսակների և բուսատեսակների, նրանց մասերի և այլ ապրանքների Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ապօրինի տեղափոխման կանխարգելումը, ինչպես նաև միջազգային ահաբեկչության դեմ պայքարին աջակցումը.

զ) Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերի զարգացմանն աջակցումը.

է) սպառողների շահերի պաշտպանության նպատակով ներմուծվող ապրանքների որակի ապահովմանը նպատակաուղղված միջոցառումներին աջակցումը.

ը) մաքսային գործին վերաբերող հարցերում միջազգային պայմանագրերով նախատեսված Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարումը և իրավունքների իրացումը, համագործակցությունն օտարերկրյա պետությունների մաքսային և իրավասու այլ մարմինների, մաքսային գործին վերաբերող հարցերով զբաղվող միջազգային կազմակերպությունների հետ.

թ) Հայաստանի Հանրապետության մաքսային վիճակագրության վարումը.

ժ) մաքսային գործի վերլուծումը, հետազոտումը և մաքսային գործի բնագավառում խորհրդատվական աշխատանքների կատարումը:

## **2.4 Մաքսային մարմինների տարբերանշանը**

Որպես իրավապահ մարմին՝ Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինները ունեն իրենց տարբերանշանը, որը սահմանվել է ՀՀ Կառավարության 2002թ. հունվարի 7-ի թիվ 6 որոշմամբ: Ինչպես յուրաքանչյուր տարբերանշան՝ այնպես էլ ՀՀ մաքսային մարմինների, դրանց տրանսպորտային միջոցների տարբերանշանը ունի իր խորհրդանշական էությունը: Տարբերանշանը Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշի

գունային եզրագծով վահանի պատկեր է, որի կարմիր ֆոնի վրա պատկերված են Մերկուրի աստծուն փաթաթված, իրար նայող օձերով գավազանը (խորհրդանշում է առևտուրը, առատությունը, բարձր բանականությունը և վեճերի խաղաղ լուծումը) և հավերժության նշանով ու թռչնի թևով առյուծ, ձեռքին՝ բանալի (առյուծը խորհրդանշում է իշխանությունը, ուժը և համարձակությունը, իսկ առյուծի ձեռքի բանալին՝ մաքսային հսկողությունը, մաքսանենգության համար Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանի փակ լինելը):

Տարբերանշանի վերին մասում հայերեն և անգլերեն նշված է՝ «Հայաստանի մաքսային ծառայություն», «Armenian Customs Service»:

Տարբերանշանի կարմիր, կանաչ և դեղին գույները խորհրդանշում են մաքսային ձևակերպումների ընտրողականության երեք ուղին:



## ***Ստուգողական հարցեր***

1. Ի՞նչ է ընդգրկում Հայաստանի Հանրապետության միասնական մաքսային քաղաքականությունը:
2. Ո՞րտեղ և ինչպե՞ս են տեղաբաշխված ՀՀ մաքսային մարմինները ՀՀ սահմաններում:
3. Ո՞ր պետական լիազոր մարմինն է իրականացնում մաքսային գործի ղեկավարումը ՀՀ-ում:
4. Ի՞նչ կառուցվածքային ստորաբաժանումներ է ներառում իր մեջ ՀՀ վերադաս մաքսային մարմինը:
5. Ի՞նչ գործունեություն է իրականացնում տարածաշրջանային մաքսատունը և նրա կազմում ընգրկված մաքսային կետը:
7. Ի՞նչ տարածաշրջանային մաքսատներ են տեղաբաշխված ՀՀ տարածքում և ո՞ր մաքսային կետերն են ընդգրկված դրանց կազմում:
8. Ի՞նչ հիմնական խնդիրներ են դրված ՀՀ մաքսային մարմինների վրա:
9. Ի՞նչն է ՀՀ մաքսային մարմինների տարբերանշանի խորհրդանշական էությունը:



*Աղամ Սմիթը (05 հունիս 1723 – 17 հուլիս 1790) ծնվել է մաքսային ծառայողի ընտանիքում: Նրա գրչին է պատկանում հանրահռչակ «Ժողովուրդների հարստության բնույթի և պատճառների մասին հետազոտությունը» (1776թ.): 1978 թվականին Աղամ Սմիթը նշանակվել է Էդինբուրգի (Շոտլանդիա) մաքսային վարչության ղեկավար, որտեղ և աշխատել է մինչ կյանքի վերջ:*

## **ԳԼՈՒԽ 3** **ՄԱՔՍԱՅԻՆ ՌԵԺԻՄՆԵՐ**

### **3.1 Մաքսային ռեժիմի հասկացությունը և նշանակությունը**

Արտաքին առևտրային գործարքներից բխող հարաբերությունները կանոնակարգվում են միջազգային պրակտիկայում ընդունված նորմերով: Այդ կանոնակարգման իրավական կարգավորման հիմքն են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները: Միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները ամրագրված են ՄԱԿ-ի կանոնադրության մեջ և կրում են *jus cogens* բնույթը, այսինքն՝ հանդիսանում են բարձրագույն կարգի պարտավորություններ և չեն կարող անվավեր համարվել առանձին պետությունների կողմից: Տնտեսական հարաբերությունների, այդ թվում առևտրային հարաբերությունների միջազգային կարգավորմանը առաջին հերթին վերաբերում են հավասարության, անձեռնմխելիության, համագործակցության, փոխշահավետության և այլն սկզբունքները: Միևնույն ժամանակ միջազգային տնտեսական հարաբերություններում կիրառվում են հատուկ սկզբունքներ: Լայն կիրառում են ստացել հետևյալ հատուկ սկզբունքները. առավել բարենպաստ պայմանների, ազգային ռեժիմի, փոխշահավետության, տարանցման ազատության և արտաքին առևտրային օրենսդրության թափանցիկության սկզբունքները:

Ազգային ռեժիմի սկզբունքը նկատի ունի պետության կողմից օտարերկրյա իրավաբանական և ֆիզիկական անձանց,

ապրանքներին և ծառայություններին այնպիսի ռեժիմի տրամադրում, որը տրամադրվում է հայրենական իրավաբանական և ֆիզիկական անձանց, ապրանքներին, ծառայություններին և այլն:

Միջազգային պրակտիկայում ընդունված նորմերով ապրանքները և տրանսպորտային միջոցները տեղափոխվում են պետական մաքսային սահմանով՝ համաձայն մաքսային ռեժիմների:

Մաքսային ռեժիմը մաքսային քաղաքականության իրագործումը կանոնակարգող դրույթների համախումբ է, որը որոշում է մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման նպատակը և կանոնակարգում է մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կապակցությամբ առաջացող հարաբերությունները:

ՀՀ Մաքսային օրենսգրքում ամրագրված է հիմնական սկզբունքը, որի համաձայն բոլոր անձինք հավասար հիմունքներով իրավունք ունեն Հայաստանի Հանրապետություն ներմուծել և արտահանել ապրանքներ և տրանսպորտային միջոցներ՝ Մաքսային օրենսգրքով սահմանված կարգով: Միևնույն ժամանակ օրենսդրությամբ կարող են արգելքներ մտցվել որոշ ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման համար այն դեպքերում, երբ այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները վտանգ են ներկայացնում պետական և ազգային անվտանգության, հասարակական կարգի, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի, շրջակա միջավայրի, բնակչության բարոյական արժեքների, պատմական, մշակութային և հնագիտական արժեքների, անձանց սեփականության (այդ թվում՝ մտավոր), իրավունքների և օրինական շահերի համար: Որոշ դեպքերում կարող են սահմանափակումներ մտցվել այս կամ այն ապրանքների տեղափոխման համար, ելնելով տնտեսական քաղաքականության, միջազգային պարտավորությունների կատարման, տնտեսական անկախության և անվտանգության, ներքին սպառողական շուկայի պաշտպանության նկատառումներից, ինչպես նաև

ի պատասխան օտարերկրյա պետությունների կամ դրանց միությունների կողմից Հայաստանի Հանրապետության անձանց նկատմամբ խտրական կամ իրավունքները սահմանափակող այլ միջոցառումների կիրառման դեպքում:

Նախկին ԽՍՀՄ Մաքսային օրենսգրքում առկա էր միայն երեք մաքսային ռեժիմ: Արտաքին տնտեսական գործարքների իրականացման նպատակով, ելնելով միջազգային պրակտիկայում ընդունված նորմերից, ներկայումս ՀՀ մաքսային օրենսգիրքով սահմանված է տասնհինգ մաքսային ռեժիմ, որոնց քանակը սահմանափակված չէ և կարող են սահմանվել նաև այլ ռեժիմներ:

### **3.2 Մաքսային ռեժիմների տեսակները**

ՀՀ մաքսային օրենսգրքի 4-րդ գլուխում սահմանված մաքսային ռեժիմները հետևյալն են.

- ա) ներմուծում՝ ազատ շրջանառության համար.
- բ) վերաներմուծում.
- գ) տարանցիկ փոխադրում.
- դ) ներմուծում մաքսային պահեստ.
- ե) ներմուծում անմաքս առևտրի խանութ.
- զ) ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար.
- է) ժամանակավոր ներմուծում.
- ը) ժամանակավոր արտահանում.
- թ) ներմուծում ազատ մաքսային պահեստ.
- ժ) ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար.
- ժա) արտահանում՝ ազատ շրջանառության համար.
- ժբ) վերաարտահանում.
- ժգ) սեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության.
- ժդ) ոչնչացում.
- ժե) ներմուծում ազատ տնտեսական գոտի:

Մաքսային ռեժիմները կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Առաջին խմբին վերաբերում են այն ռեժիմները, որոնց ընտրության ժամանակ ապրանքները համապատասխան մաքսային ձևակերպումներ ստանալուց հետո տնօրինվում են տեղափոխող անձի կողմից, այսինքն՝ այս խմբի մաքսային ռեժիմները ունեն վերջնական բնույթ: Դրանց վերաբերում են մասնավորապես ներմուծում ազատ շրջանառության համար, վերաներմուծում, վերաարտահանում և արտահանում ազատ շրջանառության համար ռեժիմները:

Երկրորդ խմբի ռեժիմներով ապրանքների տեղափոխումը թույլատրվում է միայն որոշակի նպատակների համար՝ օրենսդրությամբ սահմանված պայմանների և պահանջների կատարման և բավարարման դեպքում: Այս խմբին վերաբերում են տարանցիկ փոխադրում, ներմուծում մաքսային պահեստ, ներմուծում անմաքս առևտրի խանութ, ժամանակավոր ներմուծում, ժամանակավոր արտահանում, ժամանակավոր ներմուծում վերամշակման համար, ժամանակավոր արտահանում վերամշակման համար, ներմուծում ազատ մաքսային պահեստ, սեփականության իրավունքից հրաժարում՝ հօգուտ պետության, ոչնչացում և ներմուծում ազատ տնտեսական գոտի մաքսային ռեժիմները:

Երկրորդ խմբի ռեժիմները մեծաասամբ նպատակ ունեն որոշակի տնտեսական խնդիրների լուծման: Օրինակ՝ մաքսային պահեստ ռեժիմի նպատակն է ապրանքների պահեստավորումը, վերամշակման ռեժիմների նպատակն է՝ ապրանքների վերամշակումը, տարանցման ռեժիմինը՝ ապրանքների տեղափոխումը այլ երկիր մեկ այլ երկրի տարածքով և այլն: Առկա մաքսային ռեժիմները կողմնորոշված են առևտրի, արդյունաբերության և միջազգային փոխադրումների զարգացման համար: Ներկայումս մաքսային ռեժիմների դերը և նշանակությունը բավականին մեծ է: Այն կանոնակարգում է ապրանքների տեղափոխման հարաբերությունները՝ կապված ապրանքի

էութիւնից, սահմանում է ապրանքը տեղափոխող անձանց իրավունքները և պարտականութիւնները:

Մաքսային ռեժիմի ընտրութիւնը իրականացվում է ապրանքը տեղափոխող անձի կողմից և նրա ցանկութեամբ կարող է փոխվել: Սակայն ռեժիմի ընտրութիւնը կապված է մի շարք հանգամանքներից, որոնց դեպքում չի թույլատրվում այս կամ այն ռեժիմի ընտրութիւնը: Մաքսային ռեժիմի ընտրութեան կանոնները կանոնակարգվում են ՀՀ մաքսային օրենսգրքով և այլ օրենսդրական նորմատիվային փաստաթղթերով:

Մաքսային ռեժիմները իրենց առանձնահատկութիւններով հանդերձ ունեն նաև ընդհանուր հատկութիւններ: Որոշ ռեժիմների համար հատկանշական է հարկերից և տուրքերից ամբողջությամբ կամ մասամբ ազատումը, որոշ ռեժիմների համար հատկանշական է ժամկետի սահմանափակումը: Շատ դեպքերում այս կամ այն ռեժիմի ընտրութեան համար անհրաժեշտ են համապատասխան լիցենզիաների, թույլտվութիւնների առկայութիւնը և այլն:

Ինչպես վերը նշվեց մաքսային ռեժիմի ընտրութիւնը կամ փոփոխումը իրականացնում է ապրանքները տեղափոխող անձը, անկախ ապրանքների բնույթից և քանակից, եթե օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ: Միևնույն ժամանակ մաքսային մարմինների դերը որոշման ընդունումն է, թե արդյո՞ք այդ ապրանքների նկատմամբ կարող է կիրառվել տվյալ մաքսային ռեժիմը:

Մաքսային ռեժիմի ընտրման դեպքում անձը պետք է հաշվի առնի, որ որոշ մաքսային ռեժիմներ ունեն ժամկետային սահմանափակումներ: Այսպես օրինակ՝ մաքսային պահեստ ռեժիմի դեպքում ապրանքները կարող են պահվել մաքսային պահեստում ոչ ավել, քան մեկ տարի ժամկետով: Կան դեպքեր, երբ հնարավոր չէ ապրանքները հայտարարագրել տվյալ ռեժիմով՝ կախված ապրանքի բնույթից, նշանակութիւնից, կիրառման ոլորտից և այլն:

Մաքսային ռեժիմի փոփոխումը նույնպես կատարվում է ապրանքները տեղափոխող անձի կողմից: Ի դեպ ամենատարածված մաքսային ռեժիմի փոփոխումը դա մաքսային պահեստ ռեժիմի ընտրությունն է, որից հետո նրա բաց թողումը պահեստից այլ մաքսային ռեժիմով՝ հիմնականում ներմուծում ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմով:

Այս սխեման կիրառվում է այն դեպքերում, երբ ներմուծվող բեռի մեջ, որը նախատեսված է ներքին շուկայում իրացման համար առկա են ապրանքներ, որոնց համար անհրաժեշտ են համապատասխան հավաստագրեր, թույլտվություններ, այլ ոչ սակագնային կարգավորման միջոցներ, կամ անձը չի հասցնում սահմանված ժամկետում ստանալ բոլոր համապատասխան փաստաթղթերը, կամ ֆինանսական դժվարություններ ունի հարկերի և տուրքերի վճարման հետ: Բոլոր փաստաթղթերը ստանալուց հետո կամ հաղթահարելով ֆինանսական դժվարությունները, անձը փոխում է մաքսային ռեժիմը և հայտարարագրում այլ մաքսային ռեժիմով: Մաքսային ռեժիմի փոփոխման մեկ այլ օրինակ է, երբ ապրանքները ներմուծվում են ցուցահանդես-վաճառքի համար և հայտարարագրվում են որպես ժամանակավոր ներմուծում, իսկ երբ դրանք վաճառվում են՝ հայտարարագրվում է ներմուծում ազատ շրջանառության համար մաքսայի ռեժիմով՝ համապատասխան մաքսային վճարների վճարմամբ, իսկ այն մասը, որը չի վաճառվել հայտարարագրվում է վերաարտահանում մաքսային ռեժիմով:

Միևնույն ժամանակ կան մաքսային ռեժիմներ, որոնց ընտրությունից հետո հնարավոր չէ ռեժիմի փոփոխում: Օրինակ՝ սեփականության իրավունքից հրաժարում՝ հօգուտ պետության մաքսային ռեժիմի ընտրությունից հետո, այլ մաքսային ռեժիմի ընտրություն չի թույլատրվում:

Համաձայն ՀՀ Մաքսային օրենսգրքի՝ վերը նշված տասնհինգ մաքսային ռեժիմներից բխում են որոշակի հարաբերություններ:

Սակայն որոշ ռեժիսներից բխող հարաբերությունները գրեթե նույնն են:

**«Ներմուծում՝ ազատ շրջանառության համար»** և **«Արտահանում՝ ազատ շրջանառության համար»** մաքսային ռեժիսները կարգավորում են ապրանքների ներմուծումը ՀՀ մաքսային տարածք և արտահանումը ՀՀ մաքսային տարածքից՝ առանց հետագա արտահանման և ներմուծման պարտավորության: Այս ռեժիսների ընտրության դեպքում անձը, համապատասխան մաքսային ձևակերպումներ կատարելուց հետո գանձելով համապատասխան մաքսային վճարները, տնօրինում է ապրանքին հետագա պարտավորություններ չունենալով: Այս ռեժիսների դեպքում կիրառվում են ոչ սակագնային կարգավորման միջոցներ, այսինքն՝ կապված ապրանքից, դրանց համապատասխան ձևակերպումների համար անհրաժեշտ են լինում թույլտվություններ, լիցենզիաներ և այլն:

Ներմուծում ազատ շրջանառության ռեժիմի օրինակ կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ անձը արտասահմանում գնել է ավտոմեքենա և այն ներմուծում է Հայաստանի Հանրապետություն:

Արտահանում ազատ շրջանառության համար ռեժիմի օրինակ կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ կազմակերպությունն իր արտադրանքը վաճառում է օտարերկրյա կազմակերպությանը և արտահանում է այն:

**«Վերաներմուծում»** և **«վերաարտահանում»** մաքսային ռեժիսները կարգավորում են համապատասխան՝ «վերաներմուծում» ռեժիմի դեպքում, «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար», «ժամանակավոր արտահանում» ռեժիսներով արտահանված ապրանքների և «արտահանում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով արտահանված՝ ՀՀ ծագում ունեցող ապրանքների հետադարձ ներմուծումը Հայաստանի Հանրապետություն, իսկ «վերաարտահանում» ռեժիմի դեպքում՝ «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «ժամանակավոր ներմուծում» ռեժիսներով ներմուծված ապրանքների, «ներ-

մութում՝ ազատ շրջանառության համար», «ներմուծում ազատ մաքսային պահեստ», «ներմուծում ազատ տնտեսական գոտի», «ներմուծում մաքսային պահեստ» ռեժիմներով ներմուծված օտարերկրյա պետությունների ծագում ունեցող ապրանքների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ներմուծված և որևէ ռեժիմով բաց չթողնված ապրանքների հետադարձ արտահանումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից:

Այս ռեժիմների շրջանակներում մաքսային վճարներ չեն գանձվում: Գանձվում է միայն մաքսավճարը: Միևնույն ժամանակ, երբ այս ռեժիմներով ներմուծվում և արտահանվում են համապատասխանաբար նախկինում «ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» ռեժիմով արտահանված ապրանքները և «ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքները, ապա մաքսային արժեքների տարբերությունից գանձվում են նաև մաքսային վճարներ:

Օրինակ՝ կազմակերպությունը վերամշակման համար արտահանել է մեկ միլիոն դրամ արժողությամբ կաշի և ապա արտասահմանում համապատասխան վերամշակումից հետո այն ներմուծում է Հայաստան: Այս դեպքում բնականաբար տվյալ ապրանքի արժեքը ավելի բարձր կլինի: Ասենք՝ կատարված վերամշակման գումարը և արտահանման երկրում կատարված ծախսերը կազմել են երկու հարյուր հազար դրամ, հետևաբար վերաներմուծվող ապրանքի մաքսային արժեքը կկազմի մեկ միլիոն երկու հարյուր հազար դրամ: Այս արժեքների տարբերությունից կգանձվեն մաքսային վճարները:

«Վերաներմուծում» ռեժիմի մեկ այլ օրինակ է նախկինում արտահանում ազատ շրջանառության համար ռեժիմով արտահանված ապրանքների վերաներմուծումը: Կազմակերպությունը նախկինում արտահանել է ցեմենտ, սակայն արտասահմանյան ընկերությունը ինչ-ինչ պատճառներով



հրաժարվել է այդ ապրանքից: Այս դեպքում տվյալ ապրանքը հայտարարագրվում է վերաներմուծում մաքսային ռեժիմով:

Եթե «վերաներմուծում» և «վերաարտահանում» մաքսային ռեժիմներին նախկինում նախորդել են՝ բացառությամբ «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» և «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմները, ապա չի թույլատրվում բացի բնական մաշվածությունը և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխություններից այլ փոփոխությունները:

«Վերաներմուծում» ռեժիմի դեպքում, եթե ապրանքները նախկինում արտահանվել են «արտահանում ազատ շրջանառության համար» ռեժիմով և վերաներմուծվում են մինչև մեկ տարի ժամկետը, ապա նախկինում դրանց արտահանման համար գանձված մաքսատուրքի գումարները վերադարձվում են, իսկ «վերաարտահանում» ռեժիմի դեպքում, եթե ապրանքները նախկինում ներմուծվել են «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմով և արտահանվում են մինչև 180 օրվա ընթացքում, ապա վերադարձվում են նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների գումարները՝ բացի մաքսավճարից:

Այս ռեժիմների դեպքում ոչ սակագնային կարգավորման միջոցներ չեն կիրառվում՝ բացառությամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղված միջոցների:

«Վերաարտահանում» ռեժիմով բաց թողնված ապրանքներն ապրանքներ տեղափոխող անձի կողմից պետք է արտահանվեն Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքից առավելագույնը տասն օրվա ընթացքում, իսկ անհաղթահարելի ուժի գործողության դեպքում նշված ժամկետում այդ ապրանքները պետք է հանձնվեն մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը:

**«Տարանցիկ փոխադրում»** (լատ. transitus - անցում) ռեժիմը նշանակում է մաքսային հսկողության ներքո, երկու մաքսային կետերի միջև առանց բեռնագրի փոփոխման ապրանքների տեղա-

փոխումը: Այս ռեժիմի շրջանակներում գանձվում է միայն մաքսավճար և չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ՝ բացառությամբ Մաքսային օրենսգրքով, այլ օրենքներով և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով այս մաքսային ռեժիմի համար նախատեսված դեպքերի: Այս ռեժիմի դեպքում ապրանքները երկու մաքսային կետերի միջև պետք է տեղափոխվի տասը օրվա ընթացքում, իսկ անհաղթահարելի ուժի ազդեցության դեպքում՝ նշված ժամկետում այդ ապրանքների հանձնում մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը 2000թ. դեկտեմբերի 27-ի թիվ 887 որոշմամբ սահմանել է մաքսային տարածքով ապրանքների և տրանսպորտային միջոցների տարանցիկ փոխադրման ու պարտադիր մաքսային ուղեկցման կարգը, որի համաձայն ապրանքները և տրանսպորտային միջոցները «տարանցիկ փոխադրում» մաքսային ռեժիմով հայտարարագրվում են այն մաքսային կետում, որով այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք և տեղափոխումն ավարտված է համարվում՝ սկսած այն պահից, երբ այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները ներկայացվում են ելքի մաքսային կետ: Նույն կարգի համաձայն՝ տարանցվող ապրանքները և տրանսպորտային միջոցները Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով կարող են տեղափոխվել պարզ և բարդ տարանցմամբ՝ դրանցից բխող հարաբերություններով: Տարանցիկ փոխադրման պարզ տարանցման ձևը կիրառվում է, երբ տարանցվող ապրանքները Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով տեղափոխվում են այլ ապրանքներով չբեռնված տրանսպորտային միջոցներով, որոնք տեղափոխման ժամանակ չեն լրաբեռնվում կամ բեռնաթափվում: Բարդ տարանցման ձևը կիրառվում է, երբ տարանցիկ փոխադրման նպատակով օգտագործվող տրանսպորտային միջոցից տարանցիկ փոխադրման ընթացքում

պետք է բեռնաթափվեն (կամ լրաբեռնվեն) այլ մաքսային ռեժիմներով հայտարարագրված ապրանքներ: Այս ձևերից ելնելով իրականացվում են համապատասխան ձևակերպումներ:

«Տարանցիկ փոխադրման» ռեժիմի դեպքում տեղափոխման համար նախատեսված պատասխանատվությունը կրում է ապրանքներ տեղափոխող անձը: Եթե տարանցման դեպքում ինչ-ինչ պատճառներով (օտարման, կորստի կամ առանց մաքսային մարմինների թույլտվության այլ պատճառով) ապրանքները չեն հասցվում ելքի մաքսային կետ, ապա ապրանքներ տեղափոխող անձը պարտավոր է տարանցիկ փոխադրման համար սահմանված ժամկետին հաջորդող տասնօրյա ժամկետում վերահայտարարագրել «ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով վճարելով այդ մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարները: Հակառակ դեպքում սահմանված ժամկետից ուշ վճարելու համար վճարել օրենքով սահմանված տույժերը՝ հաշվարկված ապրանքների ներմուծման օրվանից: Սակայն եթե ապրանքները և տրանսպորտային միջոցները ոչնչացել կամ անվերադարձ կորել են անհաղթահարելի ուժի ազդեցության, բնական մաշվածության կամ տեղափոխման ոչ բնականոն պայմանների հետևանքով կամ պետական մարմինների պաշտոնատար անձանց գործողությունների կամ անգործության հետևանքով, և այդ փաստը հաստատվում է փաստաթղթերով, ապա ապրանքներ տեղափոխող անձն ազատվում է «ներմուծում» ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով նախատեսված մաքսային վճարների վճարումից:

Տարանցման միջազգային հաղորդակցության ուղիները քավարար հարմարավետություն են ապահովում արտահանման և ներմուծման գործարքների համար, ազատում են ավելորդ բեռնավորման և բեռնաթափման գործունեության իրականացումից, ավելորդ փաստաթղթային ձևակերպումներից: Տարբեր երկրների միջև բեռների տարանցումը իրականացվում է այդ երկրների միջև կնքված համաձայնագրերի հիման վրա: ԱՊՀ երկրների միջև 1999թ. հունիսի 4-ին Սինսկում ստորագրվեց «ԱՊՀ մասնակից

պետությունների տարածքներով տարանցման կարգի համաձայնագիրը», որով ամրագրվեցին երկրների տարածքներով տարանցման կանոնակարգման հարաբերությունները:

Միջազգային իրավանորմատիվային փաստաթղթերով նույնպես կանոնակարգվում են երկրների միջև ապրանքների և տրանսպորտային միջոցների տարանցիկ փոխադրման հարաբերությունները: Մասնավորապես տարանցման կարգավորման հարաբերությունները կանոնակարգվում են 1980թ. ՄԱԿ-ի միջազգային խառը բեռնափոխադրումների համաձայնագրով (Բաժին VII. Մաքսային հարաբերություններ):

Միջազգային իրավանորմատիվային փաստաթղթերով ամրագրված է հետևյալը. յուրաքանչյուր երկիր կարող է թույլատրել կամ չթույլատրել որոշակի ապրանքների տարանցումը իր տարածքով: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000թ. դեկտեմբերի 31-ի թիվ 902 որոշումից բխում է, որ պոռնոգրաֆիկ բովանդակության նյութերի նկատմամբ կարող է կիրառվել միայն «ոչնչացում» մաքսային ռեժիմը և դրանց տեղափոխումը ՀՀ մաքսային սահմանով արգելվում է:

**«Ներմուծում մաքսային պահեստ»** ռեժիմը նշանակում է ապրանքների ներմուծում և այդ ապրանքների պահպանում համապատասխան մաքսային պահեստներում՝ մաքսային հսկողության ներքո: Այս ռեժիմով կարող են հայտարարագրվել այն ապրանքները, որոնց ներմուծումը արգելված չէ, իսկ այն ապրանքները, որոնք կարող են վնաս պատճառել մաքսային պահեստում գտնվող մյուս ապրանքներին, պետք է պահպանվեն հատուկ հարմարեցված պահեստներում: Մաքսային պահեստներում տվյալ ռեժիմով հայտարարագրված ապրանքները կարող են պահվել մինչև մեկ տարի ժամկետով և այդ ժամկետը կարող է սահմանափակվել մաքսային մարմինների կողմից՝ ելնելով ապրանքների օգտագործման ժամկետից և պահպանման առանձնահատկություններից: Սահմանված ժամկետը լրանալուց հետո ապրանքները տասնօրյա ժամկետում ենթակա են հայտարարագրման

այլ մաքսային ռեժիմով կամ հանձնման մաքսային մարմինների պատասխանատու պահպանությամբ:

Ներմուծում մաքսային պահեստ ռեժիմի շրջանակներում բացի մաքսավճարից այլ մաքսային վճարներ չեն գանձվում և միևնույն ժամանակ չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

ՀՀ Մաքսային օրենսգրքի 61-րդ հոդվածի համաձայն մաքսային պահեստը մեկ կամ մի քանի առանձնացված շենքերի, բաց հրապարակների համախումբ է, որտեղ մաքսային հսկողության ներքո կարող են պահպանվել «ներմուծում մաքսային պահեստ» ռեժիմով բաց թողնված ապրանքները:

Մաքսային պահեստները կարող են լինել հետևյալ տեսակների՝

ա) բաց տիպի մաքսային պահեստ՝ բոլոր անձանց ապրանքների պահպանման համար.

բ) փակ տիպի մաքսային պահեստ՝ որոշակի անձանց ապրանքների պահպանման համար.

գ) մասնագիտացված մաքսային պահեստ՝ բոլոր անձանց որոշակի ապրանքների պահպանման համար:

Այս մաքսային պահեստները կարող են կազմակերպել համապատասխան լիցենզիա ստացած ՀՀ անձինք:

Մաքսային պահեստներում պահպանվող ապրանքների նկատմամբ անհրաժեշտ է բավարար պայմանների ապահովումը և այդ ապրանքների պահպանության գործունեության իրականացման համար սհրաժեշտ է համապատասխան լիցենզիայի առկայությունը: Որպես «ներմուծում մաքսային պահեստ» ռեժիմի օրինակ կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ Հայաստանի Հանրապետության կազմակերպությունը Հայաստան է ներմուծում մեծ ծավալի ապրանքներ՝ ենթադրենք տարբեր տեսակի սննդամթերք: Եթե տվյալ պահին կազմակերպությունը չունի ամբողջ խմբաքանակի «ներմուծում ազատ շրջանառության համար» ռեժիմով ձևակերպելու համար մաքսային վճարների գումարը, ապա վերջինս կարող է հայտարարագրվել «ներմուծում

մաքսային պահեստ» ռեժիմով, մեկ տարին չգերազանցող ժամկետով, որի դեպքում կվճարվի միայն մաքսավճար: Մինչև քույլատրված ժամկետի լրանալը կազմակերպությունը կարող է ապրանքները մաս-մաս կամ ամբողջովին հայտարարագրել «ներմուծում ազատ շրջանառության համար» ռեժիմով՝ վճարելով համապատասխան մաքսային վճարները: Այս դեպքում արդեն հայտարարագրվող ապրանքները ենթակա են ոչ սակագնային կարգավորման:

**«Ներմուծում անմաքս առևտրի խանութ»** մաքսային ռեժիմը նշանակում է ապրանքների ներմուծում ՀՀ տարածքում գործող անմաքս առևտրի իրականացման վայրեր՝ օրինակ DUTY FREE: ՀՀ մաքսային տարածքից անմաքս առևտրի իրականացման վայրեր ապրանքների ներմուծմանը պետք է նախորդեն այդ ապրանքների բացթողումը՝ «արտահանում ազատ շրջանառության համար» կամ «վերասարտահանում» ռեժիմները:

Այս ռեժիմի դեպքում գանձվում է միայն մաքսավճար և չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ, բացառությամբ սպառողների շահերի պաշտպանությանն ուղղված միջոցների:

Որպես «ներմուծում անմաքս առևտրի խանութ» ռեժիմի օրինակ կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ ՀՀ անմաքս առևտրի խանութի հիմնադրման լիցենզիա ունեցող կազմակերպությունը իր խանութի համար արտասահմանից ներմուծում է հուշանվերներ: Այդ դեպքում ապրանքը կհայտարարագրվի «ներմուծում անմաքս առևտրի խանութ» ռեժիմով և կվճարվի միայն մաքսավճար: «Ներմուծում անմաքս առևտրի խանութ» ռեժիմով հնարավոր է ձևակերպել նաև ՀՀ տարածքից ծագած ապրանքները, ասենք՝ գինի, կոնյակ և այլն: Այս դեպքում մինչև հայտարարագրումը «ներմուծում անմաքս առևտրի խանութ» ռեժիմով, այդ ապրանքը պետք է հայտարարագրվի «արտահանում ազատ շրջանառության համար» ռեժիմով:

Ինչպես մաքսային պահեստների կազմակերպումը և գործունեության իրականացումը, այնպես էլ անմաքս առևտրի խանութի կազմակերպման համար անհրաժեշտ է համապատասխան լիցենզիայի առկայությունը, որի ստացման կարգը սահմանված է ՀՀ Կառավարության 2001թ. հունվարի 18-ի թիվ 42 որոշմամբ:

Սովորաբար անմաքս առևտրի խանութները կազմակերպվում են օդանավակայանի տարածքներում, որի համար այդ խանութի կազմակերպիչը պետք է ունենա համապատասխան առևտրի սրահ և պահեստային տարածք, որը պետք է գտնվի մաքսային հսկողության գոտում և այդ տարածքները պետք է համապատասխանեն նշված կարգում ներկայացված պահանջներին: Անմաքս առևտրի խանութի սրահները պետք է գտնվեն՝ ՀՀ-ից մեկնող ուղևորներին սպասարկելու նպատակով՝ ՀՀ մաքսային սահմանը հատող քաղաքացիների կողմից մաքսային ձևակերպման համար սահմանված տեղից հետո, իսկ ժամանող ուղևորներին սպասարկելու նպատակով՝ մինչև ՀՀ մաքսային սահմանը հատող քաղաքացիների կողմից մաքսային ձևակերպման համար սահմանված տեղերը:

**«Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար» և «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար»** ռեժիմները համապատասխան կարգավորում են ապրանքների ներմուծումը և արտահանումը վերամշակման նպատակով՝ հետագա արտահանման և ներմուծման պայմանով:

Սա նշանակում է, որ ապրանքները, որոնք ներմուծվում են կամ արտահանվում են այս ռեժիմներով ենթակա են վերամշակման և հետո հետ արտահանման կամ ներմուծման: Որպես օրինակ՝ կարելի է դիտել, որ այս ռեժիմով ներմուծվում է ոսկի, որը համապատասխան վերամշակումից հետո որպես զարդ վերաարտահանվում է: Այս ռեժիմներով հայտարարագրված ապրանքները կարող են հայտարարագրվել այլ մաքսային ռեժիմներով, մասնավորապես, եթե ինչ-ինչ պատճառով հնարավոր

չէ ներմուծված ապրանքների հետ արտահանումը, ապա այն հայտարարագրվում է օրինակ՝ «ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով, որից արդեն բխում են այդ ռեժիմին համապատասխանող հարաբերությունները:

Այս ռեժիմով ապրանքների ներմուծումը կամ արտահանումը թույլատրվում է ՀՀ Կառավարության լիազորված մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա և կարող է ներմուծվել կամ արտահանվել ոչ ավելի, քան մեկ տարին չգերազանցող ժամկետով:

Մաքսային այս ռեժիմների շրջանակներում՝ մաքսային վճարներ չեն գանձվում, բացառությամբ մաքսավճարի:

Այս ռեժիմների դեպքում առկա է ժամկետային սահմանափակում և պատասխանատվություն այն խախտելու համար:

**«Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր արտահանում»** մաքսային ռեժիմները նշանակում են ապրանքների ներմուծում և արտահանում, որոնք ժամկետը լրանալուն հաջորդող տասն օրվա ընթացքում պետք է վերահայտարարագրվեն «վերաարտահանում»՝ «Ժամանակավոր ներմուծում» ռեժիմի դեպքում, մաքսային ռեժիմով և «վերաներմուծում»՝ «Ժամանակավոր արտահանում» ռեժիմի դեպքում, մաքսային ռեժիմով կամ հանձնվեն մաքսային մարմինների պատասխանատու պահպանությանը:

Ի տարբերություն «Ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» և «Ժամանակավոր արտահանում» վերամշակման համար» ռեժիմների՝ այս մաքսային ռեժիմներով ներմուծված կամ արտահանված ապրանքները պետք է հետ արտահանվեն կամ ներմուծվեն անփոփոխ վիճակում, բացառությամբ բնական մաշվածության և ոչ բնականոն պայմաններում տեղափոխելու կամ պահպանելու հետևանքով առաջացած փոփոխությունների հետևանքով առաջացած փոփոխությունների: Այսինքն, եթե «Ժամանակավոր ներմուծում» վերամշակման համար» ռեժիմով հայտարարագրված կաշին ներմուծվում է վերամշակման նպատակով, ապա



«ժամանակավոր ներմուծում» ռեժիմով ներմուծված կաշին պետք է հետ արտահանվի անփոփոխ վիճակում:

Որպես «ժամանակավոր ներմուծում» ռեժիմի օրինակ կարող է հանդիսանալ այն դեպքը, երբ որոշակի աշխատանքներ իրականացնելու օրինակ՝ շինարարական աշխատանքներ իրականացնելու համար արտասահմանից ներմուծվում է արտասահմանյան կազմակերպությանը պատկանող սարքավորումներ և մեքենաներ, որոնք աշխատանքները ավարտելուց հետո պետք է հետ արտահանվեն: Այս դեպքում սարքավորումները և մեքենաները կհայտարարագրվեն «ժամանակավոր ներմուծում» ռեժիմով, մեկ տարին չգերազանցող ժամկետով և ժամկետը լրանալուց հետո կհայտարարագրվեն «վերաարտահանում» ռեժիմով:

ՀՀ Մաքսային օրենսգրքով սահմանված է, որ «ժամանակավոր ներմուծում» և «ժամանակավոր արտահանում» ռեժիմներով ապրանքները կարող են ներմուծվել և արտահանվել հայտարարատուի խնդրարկած ժամկետով, բայց ոչ ավելի, քան մեկ տարի ժամկետով, ընդ որում, եթե սկզբնապես խնդրարկված ժամկետը մեկ տարուց պակաս է, ապա վերադաս մաքսային մարմինը հայտարարատուի դիմումի հիման վրա կարող է երկարացնել այդ ժամկետը ներմուծման օրվանից մեկ տարին չգերազանցող ժամկետով: Այսինքն, եթե հայտարարատուն 2012թ. փետրվարի 1-ին՝ իր դիմումի համաձայն, երեք ամիս ժամկետով «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով հայտարարագրել է օրինակ՝ հորատող մեքենա, ապա երեք ամիսը լրանալուց հետո այդ ապրանքի «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմի ժամկետը չի կարող երկարացվել ոչ ավելի, քան մինչև 2013թ. փետրվարի 1-ը: Սակայն «ժամանակավոր ներմուծում» ռեժիմի դեպքում ՀՀ Մաքսային օրենսգրքով սահմանված է, որ մեկ տարի ժամկետային սահմանափակումը չի տարածվում օտարերկրյա պետությունների դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններին, միջազգային կազմակերպություններին, միջազ-

գային կազմակերպություններին առընթեր օտարերկրյա պետությունների ներկայացուցչություններին և դրանց անձնակազմին պատկանող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ: Ֆինանսական վարձակալության տրման նպատակով Հայաստանի Հանրապետություն ներմուծված 84-ից 89-ը Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների անվանացանկի ծածկագրերին դասվող ապրանքների ժամանակավոր ներմուծման ժամկետը Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից կարող է թույլատրվել՝ հայտարարատուի խնդրարկած ժամկետով, բայց ոչ ավելի, քան ևս 4 տարի ժամկետով:

Վերը նշվածից պարզ է դառնում, որ այս ռեժիմների դեպքում առկա են ժամկետային սահմանափակումներ և այդ ժամկետները հսկվում են մաքսային մարմինների կողմից, որի խախտման դեպքում, համաձայն ՀՀ օրենսդրության, առաջանում է համապատասխան պատասխանատվություն:

Այս ռեժիմներով հայտարարագրված ապրանքներից մաքսային վճարներ չեն գանձվում՝ բացառությամբ մաքսավճարի, և չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

Այս ռեժիմներով ներմուծված և արտահաված ապրանքների նկատմամբ կարող է ընտրվել նաև այլ մաքսային ռեժիմ, օրինակ՝ «ժամանակավոր ներմուծում» ռեժիմի ընտրությունից հետո այդ ապրանքների նկատմամբ կարող է ընտրվել «սեփականության իրավունքից հրաժարում՝ հօգուտ պետությանը» մաքսային ռեժիմը, երբ կազմակերպությունը սարքավորումները և մեքենաները իր կողմից իրականացված աշխատանքների ավարտից հետո թողնում և անհատույց տրամադրում է Հայաստանի Հանրապետությանը:

**«Ներմուծում ազատ մաքսային պահեստ»** ռեժիմը կարգավորում է ազատ մաքսային պահեստներում առանց մաքսային հսկողության պահպանելու նպատակով ապրանքներ ներմուծելը:

Ազատ մաքսային պահեստը մեկ կամ մի քանի առանձնացված շենքերի, բաց հրապարակների համախումբ է, որտեղ առանց մաքսային հսկողության կարող են պահպանվել «ներմուծում ազատ

մաքսային պահեստ» ռեժիմով բաց թողնված ապրանքները: Ազատ մաքսային պահեստների տարածքը պետք է լինի առնվազն 1000 քառ. մետր: Ազատ մաքսային պահեստի տարածք համարվում է ՀՀ մաքսային տարածքից դուրս գտնվող տարածքը:

Ինչպես և մաքսային պահեստների, այնպես էլ ազատ մաքսային պահեստների կազմակերպման համար անհրաժեշտ է համապատասխան լիցենզիա: Համաձայն Մաքսային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ կետի՝ լիցենզավորման կարգը սահմանվել է ՀՀ Կառավարության 2001թ. հունվարի 18-ի թիվ 42 որոշմամբ:

Այս ռեժիմով բաց թողնված ապրանքների նկատմամբ կարող են կիրառվել ապրանքների պահպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովման, ապրանքների նախապատրաստման հետագա առաքման և վաճառքի համար, խմբաքանակների բաժանման, տեսակավորման, փաթեթավորման, վերափաթեթավորման, մակնշման, բեռնման, բեռնաթափման, դրոշմավորման և ցանկացած այլ գործողություն, որը չի հանգեցնում ապրանքի հատկանիշների և նպատակային նշանակության փոփոխության, ինչպես նաև ապրանքների մեծածախ վաճառք:

Այս ռեժիմով հայտարարագրված ապրանքներից բացի մաքսավճարից այլ մաքսային վճարներ չեն գանձվում և չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ: Ի տարբերություն մաքսային պահեստում ապրանքների պահպանության ժամկետի, որը կարող է լինել մինչև մեկ տարի, այս ռեժիմով ներմուծված ապրանքների պահպանման ժամկետը կարող է լինել մինչև 3 տարի ժամկետով, բայց այդ ժամկետը կարող է սահմանափակվել՝ ելնելով ապրանքների օգտագործման ժամկետից և պահպանման առանձնահատկություններից:

Այս ռեժիմով ապրանքների հայտարարագրումը իրականացվում է «ներմուծում՝ ազատ շրջանառության համար» ռեժիմի համար նախատեսված կարգով, այդ իսկ պատճառով էլ ապրանքները, որոնք ներմուծվել են այս ռեժիմով կարող են արտահանվել «արտահանում» ազատ շրջանառության համար» կամ «վերաարտահանում»

ռեժիմներով՝ առանց մաքսային վճարների գանձման և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման:

**«Մեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության»** ռեժիմը կարգավորում է ապրանքների անհատույց հանձնումը Հայաստանի Հանրապետությանը ապրանքներ տեղափոխող անձի կողմից:

Այս ռեժիմով հայտարարագրված ապրանքներից չեն գանձվում ոչ մաքսային վճարներ, ոչ էլ մաքսավճար և միևնույն ժամանակ չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

**«Ոչնչացում»** ռեժիմը կարգավորում է ապրանքների ոչնչացումը մաքսային հսկողության ներքո՝ դրանց հետագա օգտագործումն անհնարին դարձնելու նպատակով և կիրառվում է ապրանքներ ներմուծող անձի համաձայնությամբ: Ապրանքների ոչնչացումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թ. դեկտեմբերի 31-ի թիվ 901 որոշմամբ սահմանած կարգով: Այդ կարգով մասնավորապես սահմանված է, որ ոչնչացման աշխատանքները կազմակերպվում և համակարգում է հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են մի շարք նախարարությունների, վարչությունների, ծառայությունների աշխատակիցներ: Հանձնաժողովը կանոնակարգում և վերահսկում է ոչնչացման աշխատանքները, կազմում է համապատասխան ոչնչացման ակտեր և իրականացնում է սույն կարգով սահմանված այլ գործողություններ:

Այս ռեժիմով հայտարարագրված ապրանքներից՝ բացի մաքսավճարից, այլ մաքսային վճարներ չեն գանձվում: Միևնույն ժամանակ ապրանքների ոչնչացման հետ կապված ծախսերը կրում է ապրանքներ տեղափոխող անձը:

«Ոչնչացում» մաքսային ռեժիմը կարող է կիրառվել, երբ օրինակ՝ կազմակերպությունը ներմուծել է նարինջ, որը փչացել է փոխադրման ժամանակ և կորցրել է իր պիտանելիությունը: Այս դեպքում ապրանքերը տեղափոխող անձը ընտրում է «ոչնչացում» մաքսային ռեժիմը:

**«Ներմուծում ազատ տնտեսական գոտի»** ռեժիմը կարգավորում է ազատ տնտեսական գոտում թույլատրված գործունեություն ծավալելու նպատակով այդ գոտու տարածք ապրանքներ ներմուծելը, այդ տարածքից ապրանքներ արտահանելը, ինչպես նաև այդ գոտում թույլատրված գործունեություն ծավալելու հետ կապված հարաբերությունները:

Ազատ տնտեսական գոտին ՀՀ Կառավարության կողմից հատուկ սահմանված տարածք է՝ մեկ կամ մի քանի առանձնացված շենքերի, բաց հրապարակների համախումբ, որտեղ «ներմուծում ազատ տնտեսական գոտի» մաքսային ռեժիմով բաց թողնված ապրանքների նկատմամբ կարող են իրականացվել հետևյալ գործողությունները.

ա) ապրանքների պահպանություն.

բ) ապրանքների նախապատրաստում՝ հետագա առաքման և վաճառքի համար, խմբաքանակների բաժանում, տեսակավորում, փաթեթավորում, վերափաթեթավորում, մակնշում, բեռնում, բեռնաթափում, դրոշմավորում և ցանկացած այլ գործողություն, որը չի հանգեցնում ապրանքի հատկանիշների և նպատակային նշանակության փոփոխության.

գ) ապրանքների վերամշակում.

դ) օգտագործում ազատ տնտեսական գոտում շինարարության ընթացքում.

ե) օգտագործում որպես օժանդակ նյութ, գործիք կամ սարքավորում, «ա», «բ», «գ» և «դ» ենթակետերում նկարագրված գործողությունների ընթացքում.

ը) ոչնչացում:

Ազատ տնտեսական գոտու տարածք համարվում է ՀՀ մաքսային տարածքից դուրս գտնվող տարածքը:

Ազատ տնտեսական գոտու տարածքում արգելվում է այդտեղ գտնվող ապրանքների մանրաձախ վաճառքը՝ բացառությամբ օրենսդրությամբ հատուկ նշված դեպքերի:

Ազատ տնտեսական գոտու սահմանագիծը պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետորեն ապահովելու այդ տարածքի մեկուսացվածությունը ՀՀ մաքսային տարածքից, որպեսզի բացառվեն մաքսային հսկողությունից դուրս ապրանքների մուտքն ու ելքը գոտուց: Ազատ տնտեսական գոտին չի կարող շահագործվել, մինչև չապահովվի նշված մեկուսացվածությունը:

Ազատ տնտեսական գոտու կազմակերպիչը պետք է այդ գոտում ստեղծի անհրաժեշտ ենթակառույցներ և մատուցի անհրաժեշտ ծառայություններ: Միևնույն ժամանակ կազմակերպիչը, որը հանդիսանում է իրավաբանական անձ և ստեղծվել է հատուկ ազատ տնտեսական գոտու կազմակերպման համար, պարտավոր է ապահովել տնտեսական գոտու տարածքի ցանկապատումը կամ պարսպապատումը, տարածքի պահպանությունը, այդ թվում՝ պահպանիչ և հակահրդեհային համակարգերի միջոցով գոտու կազմակերպման կանոնների կատարումը, ապրանքների պահպանության համար նյութատեխնիկական սարքավորումների առկայությունը, ինչպես նաև բեռնման, բեռնաթափման և տրանսպորտային միջոցների, պահեստային տնտեսության համար անհրաժեշտ սարքավորումների, կապի և այլ միջոցների առկայությունը, մաքսային մարմնի աշխատողների համար համապատասխան պայմաններ՝ մաքսային հսկողություն իրականացնելու և մաքսային ձևակերպումներ կատարելու համար, իր կողմից մատուցած ծառայությունների գների ողջամտությունը և համամասնությունն արդյունավետ սպասարկման ծախսերին և օրենսդրությամբ նախատեսված այլ պարտականություններ:

Բացի պարտավորություններից՝ կազմակերպիչն իրավունք ունի տիրապետել և օգտագործել գոտի համարվող հողատարածքները, վարձակալության կամ օգտագործման տրամադրել գոտու տարածքում գտնվող հողատարածքները, կառուցապատել գոտու տարածքը, վարձակալության և օգտագործման տալ գոտու

տարածքում գտնվող անշարժ գույքը, գոտում կառուցել և շահագործել ինժեներական ցանցեր և ենթակառույցներ, իրականացնել այլ գործունեություն, որն անհրաժեշտ է գոտու պատշաճ շահագործումն ապահովելու համար, սահմանափակել ազատ տնտեսական գոտի մտցվող ապրանքների ցանկը, եթե վերջիններս կարող են վնասել գոտում գտնվող այլ ապրանքներին:

Ազատ տնտեսական գոտու կազմակերպիչը կարող է նաև չշահագործել գոտին, այլ մեկ այլ իրաբանական անձի հետ, որը նույնպես պետք է ստացած լինի համապատասխան լիցենզիան և ստեղծված լինի բացառապես ազատ տնտեսական գոտում գործելու նպատակով, որի հետ կազմակերպիչը կարող է կնքել պայմանագիր՝ ազատ տնտեսական գոտու շահագործման համար:

Այս ռեժիմով ապրանքների ներմուծման դեպքում գանձվում է միայն մաքսավճար և չեն կիրառվում ոչ սակագնային կարգավորման միջոցներ:

Այս ռեժիմով ներմուծված ապրանքների նկատմամբ չկա ժամկետային սահմանափակում, այսինքն՝ ապրանքները կարող են պահպանվել անժամկետ, բայց միևնույն ժամանակ, ելնելով ապրանքների պիտանիության ժամկետներից, այդ ժամկետը կարող է սահմանափակվել մաքսային մարմինների կողմից:

Այն ապրանքները, որոնք ներմուծվում են ազատ տնտեսական գոտի, նախ պետք է հայտարարագրվեն «ժամանակավոր արտահանում», «ժամանակավոր արտահանում վերանշակման համար», «արտահանում ազատ շրջանառության համար» կամ «վերաարտահանում» մաքսային ռեժիմով, որից հետո ազատ տնտեսական գոտու շահագործողը կամ կազմակերպիչն այդ ապրանքները հայտարարագրում է «ներմուծում ազատ տնտեսական գոտի» ռեժիմով: Սա վերաբերվում է ՀՀ մաքսային տարածքից ներմուծվող ապրանքներին, իսկ այլ երկրներից ներմուծվող ապրանքներն ազատ տնտեսական գոտու շահագործողը կամ կազմակերպիչը հայտարարագրում է «ներմուծում ազատ տնտեսական գոտի» մաքսային ռեժիմով:

Ազատ տնտեսական գոտու տարածքից ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության մաքսային տարածք ենթակա է սակագնային ու ոչ սակագնային կարգավորման և մաքսային հսկողության նույն կարգով, որով այլ երկրներից ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության տարածք:

«Ներմուծում ազատ տնտեսական գոտի» ռեժիմով բաց թողնված ապրանքները, ինչպես նաև նրանց օգտագործմամբ ազատ տնտեսական գոտում արտադրված այլ ապրանքները Հայաստանի Հանրապետության տարածքից այլ երկրներ կարող են արտահանվել «արտահանում ազատ շրջանառության համար» կամ «վերաարտահանում» ռեժիմներով՝ առանց մաքսային վճարների գանձման և ոչ սակագնային կարգավորման միջոցների կիրառման: Մաքսային մարմինները պետք է հնարավորություն ունենան անհրաժեշտ հսկողություն սահմանելու արտահանվող ապրանքների նկատմամբ:

Ազատ տնտեսական գոտու տարածքից ապրանքների տեղափոխումը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, այդ թվում՝ օդանավակայանի բեռնային համալիրի միջոցով, իրականացվում է տարանցիկ փոխադրման համար սահմանված կանոններով:

Ազատ տնտեսական գոտում գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Ազատ տնտեսական գոտի կարող են մուտք գործել համապատասխան իրավասություն ունեցող պետական մարմինների աշխատակիցները և պաշտոնատար անձինք: Գոտի կարող են մուտք գործել նաև կազմակերպչի և շահագործողների աշխատակիցները՝ պատշաճ ձևակերպված փաստաթղթերի առկայության դեպքում: Սակայն ֆիզիկական անձանց մուտքը և ելքըն ազատ գոտուց ենթակա է մաքսային հսկողության: Ազատ տնտեսական գոտում մշտապես բնակվելը արգելված է:



Ապրանքների մուտքը, առկայությունը և ելքն ազատ տնտեսական գոտուց ենթակա են մաքսային հսկողության: Մաքսային մարմիններն իրավունք ունեն մաքսային հսկողություն իրականացնել գոտու ներսում, այդ թվում՝ պահանջել մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, տեղում ստուգել գոտի ներմուծված ապրանքների փաստթացի առկայությունը, կատարել այլ գործողություններ, որոնք կկանխեն մաքսանենգ ճանապարհով ապրանքների տեղափոխումը, մաքսային կանոնների այլ խախտումները: Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում չկան ազատ տնտեսական գոտիներ, որոնք մեծ տարածում են ստացել այլ երկրներում:

### 3.3 Հիմնական և պահանջվող մաքսային ռեժիմներ

Ներկայումս Հայաստանում մաքսային մարմինների կողմից՝ մաքսային օրենսգրքից բխող ռեժիմների համար, օգտագործվում են հետևյալ հիմնական և պահանջվող մաքսային ռեժիմների ծածկագրերը:

#### Հիմնական ռեժիմ

EX 1	Արտահանում	IM 4	Ներմուծում
EX 2	Ժամանակավոր արտահանում	IM 5	Ժամանակավոր ներմուծում
EX 3	Վերաարտահանում	IM 6	Վերաներմուծում
		IM 7	Մաքսային պահեստ
		IM 8	Տարանցիկ

## Պահանջվող ռեժիմ

Երկնիչ ծածկագիր	Մաքսային ռեժիմ
10	Արտահանում ազատ շրջանառության համար
20	Ժամանակավոր արտահանում
21	Ժամանակավոր արտահանում վերամշակման համար
30	Վերաարտահանում
40	Ներմուծում ազատ շրջանառության համար
41	Ներմուծում անմաքս առևտրի խանութ
42	Սեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության
43	Ոչնչացում
44	Ներմուծում ազատ մաքսային պահեստ
45	Ներմուծում ազատ տնտեսական գոտի
50	Ժամանակավոր ներմուծում
51	Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար
60	Վերաներմուծում
70	Մաքսային պահեստ
80	Տարանցիկ փոխադրում

### ***Ստուգողական հարցեր***

1. Քանի՞ հիմնական խմբի կարելի է բաժանել մաքսային ռեժիմները, ո՞րոնք են դրանց էությունը և ու՞մ կողմից է այն ընտրվում:

2. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ներմուծում ազատ շրջանառության համար և արտահանում՝ ազատ շրջանառության համար մաքսային ռեժիմների ընտրության դեպքում:

3. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում վերաներմուծում և վերաարտահանում մաքսային ռեժիմների ընտրության դեպքում:

4. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում տարանցիկ փոխադրում մաքսային ռեժիմի ընտրության դեպքում:

5. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ներմուծում մաքսային պահեստ մաքսային ռեժիմի ընտրության դեպքում:

6. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ներմուծում անմաքս առևտրի խանութ մաքսային ռեժիմի ընտրության դեպքում:

7. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար և ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար մաքսային ռեժիմների ընտրության դեպքում:

8. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ժամանակավոր ներմուծում և ժամանակավոր արտահանում մաքսային ռեժիմների ընտրության դեպքում:

9. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ներմուծում ազատ մաքսային պահեստ մաքսային ռեժիմի ընտրության դեպքում:

10. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում սեփականության իրավունքից հրաժարում՝ հոգուտ պետության մաքսային ռեժիմի ընտրության դեպքում:

11. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ոչնչացում մաքսային ռեժիմի ընտրության դեպքում:

12. Ինչպիսի՞ հարաբերություններ են բխում ներմուծում ազատ տնտեսական գոտի մաքսային ռեժիմի ընտրության դեպքում:

13. Ո՞րոնք են հիմնական և պահանջվող մաքսային ռեժիմները:

*Պատմական աղբյուրներում նշված է, որ Գերմանիայի Նյուրենբերգ քաղաքի դարպասների վրա 1497 թվականին քանդակված է եղել մի պատկեր՝ կշեռք, որի կողքը կանգնած են մաքսավորը և առևտրականը: Կշեռքի մի նժարին դրված է կշռաքարը, մյուսի վրա մաքսագերծվող ապրանքը, իսկ կշեռքի տակ առկա է գրառում. «Քեզ էլ՝ ինչպես և ուրիշին»:*

## **ԳԼՈՒԽ 4 ՄԱՔՍԱՅԻՆ ԱՐԺԵՔ**

### **4.1 Ապրանքների մաքսային արժեքի հասկացությունը**

Հայրենական և միջազգային փորձում մաքսային գանձումների հիմնական ձևը աղվալորայինն է, որոնք հաշվարվում են տոկոսներով ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ: Մաքսային գանձումների հաշվարկման հիմք է ընդունվում մաքսային արժեքը, որը օգտագործվում է որպես հաշվարկային մեծություն մաքսատուրքի, ԱԱՀ և այլ որոշակի հարկերի գանձման համար:

Յուրաքանչյուր հաշվարկային բազա պահանջում է որոշակի մաքսային հարկման կանոնակարգման ստեղծում: Այդ իսկ պատճառով, մաքսային արժեքի հաշվարկման մեթոդիկան մի կողմից պետք է լինի համընդհանուր՝ կոորդինացված ընդհանուր հարկային համակարգի հետ, հաշվապահական հաշվառման կանոնակարգման հետ, իսկ մյուս կողմից՝ այն պետք է համապատասխանի միջազգային նորմերին:

Դեռևս 1950թ. որոշ արևմտյան երկրների նախաձեռնությամբ ընդունվեց Մաքսային արժեքի որոշման մեթոդոլոգիայի ստեղծման համաձայնագիրը՝ այսպես կոչված Բրյուսելյան մաքսային արժեքը, որտեղ մաքսային արժեքը որոշվեց որպես նորմալ գին, որով ապրանքը կարող է վաճառվել ներմուծման երկրում: Բրյուսելյան համաձայնագրին միացան ավելին քան 70 երկիր, սակայն ԱՄՆ և Կանադան չստորագրեցին այդ համաձայնագիրը և

այդ իսկ պատճառով էլ մաքսային արժեքի որոշման մեթոդիկան մնաց օրակարգում:

Բայց դա գործընթաց էր, որը Առևտրի համաշխարհային կազմակերպության շրջանակներում հիմք հանդիսացավ, որպեսզի ընդունվի մաքսային արժեքի որոշման համակարգը, որը մշակվել էր 1979թ., որը այլ կերպ կոչվեց Մաքսային արժեքի օրենսգիրք:

ՀՀ-ում մաքսային արժեքի որոշման ընդհանուր համակարգի կիրառման հիմք է հանդիսանում ՀՀ Մաքսային օրենսգիրքը:

Մաքսային արժեքի հայտարարագրման, որոշման և կիրառման հերթականությունը հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ հետևյալ հասկացությունները՝ նույն և համանաման ապրանքների հասկացությունը, անձանց փոխկապակցվածության հասկացությունը և նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածի հասկացությունը:

**Նույն ապրանքներ** են համարվում այն ապրանքները, որոնք նույնական են բոլոր առումներով, ներառյալ ֆիզիկական հատկանիշները՝ որակը, համբավը (ապրանքային նշանը), ծագման երկիրը: Ապրանքի արտաքին տեսքի չնչին տարբերությունները չեն խանգարում ապրանքների նույնատիպ լինելուն:

**Համանաման** են համարվում միևնույն երկրից ծագած այն ապրանքները, որոնք, նույնական չլինելով, ունեն նման հատկանիշներ և բաղադրանյութեր, որոնք հնարավորություն են տալիս դրանք կիրառել նույն նշանակությամբ և լինել փոխարինելի: Ընդ որում, ապրանքների համանամանությունը որոշելու համար, ի թիվս այլ գործոնների, հաշվի են առնվում նաև դրանց որակը, համբավը (ապրանքային նշանը):

**Անձինք համարվում են փոխկապակցված**, եթե՝

- մեկը մյուսի ընկերությունում ծառայող կամ տնօրեն է,
- մեկը մյուսի գործատուն կամ աշխատակիցն է,
- անձը ուղղակի կամ անուղղակի տնօրինում է գնորդի և վաճառողի բաժնեմասերի ավելի քան 5 տոկոսը,

- մեկն ուղղակի կամ անուղղակի կարգով վերահսկում է մյուսին,
- ուղղակի կամ անուղղակի կարգով երկուսն էլ վերահսկվում են երրորդի կողմից,
- ուղղակի կամ անուղղակի կարգով երկուսն էլ վերահսկում են երրորդին,
- նույն ընտանիքի անդամներ են:

**Նույն կամ գրեթե նույն ժամանակահատված է** համարվում դիտարկվող պահին նախորդող 90-օրյա ժամանակահատվածը:

## 4.2 Մաքսային արժեքի բաղկացուցիչները

Բացի վերը նշված հասկացություններից կարևոր է իմանալ, թե ինչ է մաքսային արժեքը, որը համաձայն ՀՀ Մաքսային օրենսգրքի ունի հստակ սահմանում:

Այսպես. **Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքի մաքսային արժեքն այն գումարն է, որը փաստացի վճարվել է, ենթակա է վճարման կամ պետք է վճարվեր ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու և մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար:**

Այս սահմանումից բխում է, որ մաքսային արժեքում ներառվում կամ չեն ներառվում որոշակի ծախսեր:

Մաքսային արժեքում ներառվում են հետևյալ ծախսերը.

1. արտահանման երկրում ապրանքների ձեռքբերման գինը,
2. մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխման համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության և համանման այլ ծախսերը.
3. մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը ապրանքների տեղափոխման համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը՝ բացառությամբ

ապրանքների ձեռքբերման համար կատարված կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերի.

4. մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների արտադրության և մատակարարման նպատակով գնորդի կողմից մատակարարին անհատույց կամ մասնակի հատուցմամբ, ուղղակի կամ անուղղակի տրամադրված՝

ա) ապրանքների մեջ ներառված նյութերի, բաղադրամասերի և համանման այլ առարկաների արժեքը,

բ) ապրանքների արտադրության մեջ օգտագործվող գործիքների և համանման այլ առարկաների օգտագործման արժեքը,


գ) ապրանքների արտադրության մեջ սպառված նյութերի արժեքը,

դ) ապրանքների արտադրության համար անհրաժեշտ ճարտարագիտական, ձևավորման, նախագծման և համանման այլ աշխատանքների արժեքը.

5. գնորդի կողմից ապրանքների վաճառքի համար անհրաժեշտ ռոյալթիների և թույլտվությունների դիմաց մատակարարին ուղղակի կամ անուղղակի վճարված կամ վճարման ենթակա վճարները.

6. տարայի, փաթեթի և փաթեթավորման աշխատանքների արժեքը.

7. մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հետագա վաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարները:



**ապրանքի մաքսային արժեք**

**եթե ներառված են ապրանքի ձեռքբերման գնի մեջ**



## **Մաքսային արժեքում չներառվող ծախսերը**

ա) արտահանման երկրում վճարված կամ վճարման ենթակա և վճարման փաստաթղթերում առանձին նշված անուղղակի հարկերը.

բ) ներմուծման երկրում կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, փոխաբեռնման, ապահովագրության, կոմիսիոն և միջնորդային (բրոքերային) ծախսերը.

գ) մատակարարի հանդեպ գնորդի ստանձնած ֆինանսական պարտավորություններից բխող տոկոսները, բացառությամբ ապրանքների հետագա վերավաճառքի, օգտագործման կամ տնօրինման դիմաց գնորդի կողմից մատակարարին վճարման ենթակա գումարների և եթե տվյալ տոկոսադրույքը չի գերազանցում նույն կամ գրեթե նույն ժամանակաշրջանում արտահանման երկրում մմանօրինակ գործարքներում կիրառվող տոկոսի միջին դրույքաչափը.

դ) էլեկտրոնային տվյալների կրիչներում ներառված տեղեկատվության (ծրագրային փաթեթներ և այլն) արժեքը:

### **4.3 Մաքսային արժեքի որոշման մեթոդները**

Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքի 87-93-րդ հոդվածներով սահմանվում է, թե ինչպես պետք է որոշվի ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը: Գնահատման մեթոդները շարադրված են կիրառման հաջորդական կարգով: Մաքսային արժեքի որոշման առաջնային եղանակը սահմանված է օրենսգրքի 87-րդ հոդվածով:

Եթե մաքսային արժեքը չի կարող որոշվել օրենսգրքի 87-րդ հոդվածի դրույթներով, ապա այն պետք է որոշվի՝ հաջորդաբար առաջ անցնելով հերթական հոդվածներով, մինչ այն առաջին հոդվածը, որի համաձայն մաքսային արժեքը կարող է որոշվել, բացառությամբ օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետում նշված դեպքի:



Եթե հայտարարատուն չի պահանջում փոխել օրենսգրքի 91-րդ և 92-րդ հոդվածների կիրառման հերթականությունը, ապա պետք է հետևել հերթականության կանոնավոր կարգին:

Եթե մաքսային արժեքը չի կարող որոշվել օրենսգրքի 87-92-րդ հոդվածների դրույթների համաձայն, ապա այն պետք է որոշվի 93-րդ հոդվածի դրույթներին համապատասխան (պահուստային մեթոդով):

**1. Մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդի** (ՀՀ ՄՕ 87-րդ հոդված) հիմքում գործարքի գինն է, որը փաստացի վճարվել է կամ ենթակա է վճարման ապրանքը ներմուծման երկիր արտահանելու նպատակով ձեռք բերելու համար: Այստեղ խոսքը ապրանքի վաճառքի՝ արտաքին առևտրատնտեսական առքուվաճառքի գործարքի մասին է:

Առքուվաճառքի գործարքը պահանջում է ինչպես գնորդի, որը համաձայն է ձեռք բերել որոշակի ապրանքներ համապատասխան գումարի դիմաց, այնպես էլ վաճառողի առկայություն, որը համաձայն է փոխանցել այդ ապրանքների դիմաց սեփականության իրավունքը՝ որոշակի գումարի դիմաց: Իսկ եթե կնքվում են գործարքներ, որոնք չեն նախատեսում սեփականության իրավունքի փոխանցում վաճառողից գնորդին՝ որոշակի փոխհատուցման դիմաց, ապա այդպիսի գործարքը չի կարող լինել վաճառք: Ընդ որում, ինչպես փաստացի վճարված, այնպես էլ վճարման ենթակա գինը նշանակում է ապրանքի դիմաց գնորդի ուղղակի և անուղղակի բոլոր վճարումների գումարը վաճառողին և այս դեպքում օրենսդրորեն ամրագրված են մաքսային արժեքում ներառվող և չներառվող ծախսերը:

Այս մեթոդը հաշվարկելու համար հայտարարատուի կողմից մաքսային հայտարարագրի հետ միասին պետք է ներկայացվի ապրանքների ձեռք բերման համար արտահանման երկրում վճարման փաստաթուղթը, ինչպես նաև վաճառողի կողմից առաքման պայմաններով նախատեսված լինելու դեպքում՝

առանձին տողերով՝ մինչև Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը տեղափոխելու համար կատարված փոխադրման, բեռնման, բեռնաթափման, ապահովագրության և համանման այլ ծախսերի մասին:

**2. Մաքսային արժեքի որոշումը ըստ նույն ապրանքների գործարքի գնի մեթոդի (ՀՀ ՄՕ 89-րդ հոդված):**

Մաքսային պրակտիկայում կարող են հանդիպել դեպքեր, երբ ապրանքների մաքսային արժեքը որոշելու համար հնարավոր չի լինում որոշել գործարքի գինը: Այս դեպքում ՀՀ մաքսային օրենսդրությունը կիրառում է «նույն ապրանքներ» հասկացությունը:

Մասնավորապես սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է ներմուծման երկիր արտահանման համար նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում նույն կամ գրեթե նույն քանակով վաճառված նույն ապրանքների գործարքի գնի հիման վրա:

Փաստորեն մաքսային արժեքի որոշման մեջբերված սահմանումների գլխավոր տարբերությունը վերաբերվում է «նույն ապրանքներին», որոնք նույնական են բոլոր առումներով, ներառյալ՝ ֆիզիկական հատկանիշները, որակը, համբավը, ծագման երկիրը:

Մաքսային արժեքի որոշման այս մեթոդը հիմնվում է կիրառման նույն սկզբունքների և տրամաբանության վրա՝ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու նպատակով որպես հիմք է օգտագործվում որևէ այլ գործարքով արձանագրված նույն ապրանքների գները, որոնք տեղ են գտել նույն ժամանակահատվածում: Այս մեթոդի կիրառման պարտադիր պայման է այն, որ նույն ապրանքների մաքսային արժեքը որոշված է եղել առաջին՝ գործարքի գնի մեթոդով:

Այն դեպքում, երբ այնուամենայնիվ բացակայում են համեմատության համար նշված գործարքները, ապա փորձ է կատարվում ճշգրտել մաքսային արժեքների վեր հանված տարբերությունները: Այն դեպքում երբ գոյություն ունեն ապրանքի գնի տարբերությունները, որոնք հետևանք են՝ ապրանքը գնելու ծավալների և տեղափոխելու առանցքային պայմանների և երբ մի կողմից իմաստ ունի կատարել ճշգրտումներ, սակայն հնարավոր չէ դրանց ելակետային տվյալները փաստաթղթորեն հիմնավորել, ապա մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների նկատմամբ չի կատարվում մաքսային արժեքի որոշումը արժեքների գործարքի գնի մեթոդով:

**3. Մաքսային արժեքի որոշումն ըստ համանման ապրանքների գործարքի գնի (ՀՀ ՄՕ 90-րդ հոդված):**

Այս մեթոդի շրջանակներում մասնավորապես սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է ներմուծման երկիր արտահանման համար նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում նույն կամ գրեթե նույն քանակությամբ վաճառված համանման ապրանքների գործարքի գնի հիման վրա՝ կատարելով ասինդրային մակարդակների և ապրանքների քանակությունների տարբերություններով պայմանավորված ճշգրտումներ:

Ճշտումը կատարելիս պետք է հաշվի առնել տարբեր հեռավորություններից տարբեր փոխադրամիջոցներով ներմուծվող ապրանքների և դիտարկվող համանման ապրանքների տեղափոխման և վճարների միջև եղած տարբերությունները:

Եթե պարզվում է, որ գոյություն ունեն համանման ապրանքների մեկից ավելի գործարքի գներ, ապա ներմուծվող ապրանքների մաքսային արժեքը որոշելու հիմք է ընդունվում այդ գներից նվազագույնը:

Մաքսային արժեքի որոշման այդ մեթոդը հիմնվում է արձանագրված համանման ապրանքների գների վրա, որոնք տեղ են գտել նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում:

**4. Մաքսային արժեքի որոշումը ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա (ՀՀ ՄՕ 91-րդ հոդված):**

Երբ անհնար է լինում օգտագործել նախկինում տեղ գտած գործարքների գները կամ բացակայում են նույն կամ համանման ապրանքներով գործարքները, ապա կիրառվում են գնահատման այլընտրանքային մեթոդներ:

Եթե Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները նույն տեսքով իրացվում են Հայաստանի Հանրապետության ներքին շուկայում, ապա դրանց մաքսային արժեքը որոշվում է համախառն ամենամեծ քանակությամբ, նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում այդ ապրանքներին կամ դրանց համեմատ նույն կամ համանման ապրանքների միավորի իրացման գնի հիման վրա՝ հաշվի առնելով նվազեցումները, ըստ ներմուծման և արտահանման դեպքերի: Այս մեթոդի հիմքում ընկած է այն գնի ընտրությունը, որոնցով հանրապետություն ներկրված ապրանքները վաճառվում են: Այս մեթոդը կիրառելիս օգտագործվում են մաքսային գնահատման նույն կամ համանման ապրանքների հասկացությունները:

Մաքսային գնահատման այս մեթոդով, որն այլ կերպ կոչվում է նաև նվազման կամ դեդուկտիվ մեթոդ, առաջին հերթին սահմանվում է այն միավորի գինը, որով վաճառվում է միավորների ամենամեծ քանակությունը: Այս մեթոդով արժեքը որոշվում է՝ յուրաքանչյուր միավորի համար սահմանված գնից հանելով այնպիսի բաղադրիչների ամբողջությունը, ինչպիսիք են ներմուծող երկրում նույն տեսակի ապրանքների իրացմանը սովորաբար կիրառվող միջնորդավճարները և առևտրային հավելավճարները, այդ թվում՝ այդ ապրանքների իրացման ժամանակ սովորաբար ստացվող շահույթը, ներմուծման գործարքում այդ ապրանքների

փոխադրման, պահեստավորման, ապահովագրման և մյուս համանման ծախսերը, երկրի տարածքում իրացման համար վճարման ենթակա հարկերը և պարտադիր վճարները, ինչպես նաև ներմուծման համար վճարման ենթակա մաքսային վճարները:

**5. Մաքսային արժեքի որոշումն ըստ հաշվարկային արժեքի** (ՀՀ ՄՕ 92-րդ հոդված):

Այն դեպքում, երբ անհնար է մաքսային արժեքի որոշումը վերը թվարկած չորս մեթոդներով, մաքսային գնահատման ալլընտրանքային հաջորդ մեթոդ է ծառայում ապրանքի արժեքը, որը ստացվում է հաշվարկային ճանապարհով արժեքը կառուցելու՝ հաշվարկելու հիման վրա: Գնահատվող ապրանքների մաքսային արժեքը որոշվում է այդ ապրանքների արտադրության ծախսերը հաշվառելու հիման վրա, որոնց ավելացվում են շահույթի և այն ծախսերի գումարները, որոնք բնորոշ են հանրապետության տարածքում այդ ապրանքների վաճառքին: Այսպիսով, այս մեթոդով մաքսային արժեքը որոշելու համար անհրաժեշտ են գնահատվող ապրանքների արտադրության ծախսերի մասին տեղեկություններ, որը կարելի է ստանալ միայն ներմուծման երկրից դուրս:

Անհրաժեշտ տեղեկությունների ստացման և հաստատման դժվարությունները, լուրջ սահմանափակումներ են դնում այս մեթոդի կիրառման շրջանակների վրա: Օտարերկրյա արտադրողի կողմից համապատասխան փաստաթղթերի նկատմամբ թույլտվությունն անգամ չի կարող երաշխավորել ներմուծման երկրի մաքսային մարմիններին փաստաթղթերի ամբողջական ցանկի տրամադրումը:

**6. Մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդը** (ՀՀ ՄՕ 93-րդ հոդված):

Մաքսային գործում լինում են իրավիճակներ, երբ ապրանքների գնահատման վերը դիտարկված մեթոդների օգտագործումը

կանոնակարգված պահանջներով չի կարող ելակետային բազա լինել մաքսային արժեքը որոշելու համար: ՀՀ մաքսային օրենսգիրքն ուղղակի սահմանում է՝ եթե մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքն անհնար է որոշել նախորդ կանոններով, ապա դա որոշվում է «Սակագների և առևտրի գլխավոր համաձայնագրերի» սկզբունքներին և ընդհանուր դրույթներին համահունչ՝ Հայաստանի Հանրապետության առկա տեղեկությունների հիման վրա:

### ***Մաքսային արժեքի հայտարարագրումը***

Մաքսային արժեքը հայտարարագրում է կազմակերպության կողմից լիազորված անձը:

Մաքսային արժեքի հայտարարագրման ներկայացված տեղեկատվությունը հանդիսանում է կոնֆիդենցիալ:

Այդպիսի տեղեկատվությունը հանդիսանում է առևտրային գաղտնիք և կարող է օգտագործվել միայն մաքսային նպատակների համար: Նրա տրամադրումը երրորդ անձանց, այդ թվում նաև այլ պետական մարմիններին, կարող է իրականացվել միայն հայտարարատուի համաձայնության դեպքում: Միայն, երբ նման տեղեկատվությունը անհրաժեշտ է իրավապահ մարմիններին՝ դատախազություն, հարկային մարմիններ, ԱԱԾ, հայտարարատուի համաձայնությունը անհրաժեշտ չէ:

<b>Մաքսային արժեքի որոշումը հաշվարկատուի կողմից</b>	<b>Մաքսային արժեքի որոշումը մաքսային մարմնի աշխատակցի կողմից</b>
---	--

1	<p>Մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդ</p> <p><i>մաքսային արժեքը հաշվարկվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա (ՀՀ ՄՕ հոդված 87)</i></p>
2	<p><b>Մաքսային արժեքի որոշումը ըստ «նույն» սայրանքների գործարքի գնի (երկրորդ մեթոդ)</b> <i>մաքսային արժեքը որոշվում է ներմուծման երկիր արտահանման համար նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում նույն կամ գրեթե նույն քանակով վաճառված նույն սայրանքների գործարքի գնի հիման վրա (ՀՀ ՄՕ հոդված 89)</i></p>
3	<p>Մաքսային արժեքի որոշումը ըստ «համանման» սայրանքների գործարքի գնի (երրորդ մեթոդ)</p> <p><i>մաքսային արժեքը որոշվում է ներմուծման երկիր արտահանման համար նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում նույն կամ գրեթե նույն քանակով վաճառված համանման սայրանքների գործարքի գնի հիման վրա (ՀՀ ՄՕ հոդված 90)</i></p>
4	<p>ՀՀ ներքին շուկայում սայրանքի միավորի իրացման գնի հիման վրա ՀՀ-ան մաքսային սահմանով պեղափոխվող սայրանքների մաքսային արժեքի որոշումը (չորրորդ համանման մեթոդ)</p> <p><i>եթե ՀՀ մաքսային սահմանով պեղափոխվող սայրանքները կամ դրանց համեմատ նույն կամ համանման սայրանքները նույն տեսքով իրացվում են ՀՀ ներքին շուկայում, ապա դրանց մաքսային արժեքը որոշվում է համախառն ամենամեծ քանակությամբ, նույն կամ գրեթե նույն ժամանակահատվածում այդ սայրանքների կամ դրանց համեմատ նույն կամ համանման սայրանքների միավորի իրացման գնի հիման վրա հաշվի առնելով պտորև ճշված նվազեցումները և ավելացումները ըստ ներմուծման և արտահանման դեպքերի (ՀՀ ՄՕ հոդված 91)</i></p>
5	<p>Մաքսային արժեքի որոշումը ըստ հաշվարկային արժեքի (հինգերորդ մեթոդ)</p> <p><i>մաքսային արժեքը որոշվում է սայրանքների հաշվարկային արժեքի հիման վրա (ՀՀ ՄՕ հոդված 92)</i></p>
6	<p>Մաքսային արժեքի որոշման պահատալի մեթոդ (վեցերորդ մեթոդ)</p> <p><i>եթե մաքսային սահմանով պեղափոխվող սայրանքների մաքսային արժեքն ամենարին է որոշելու և նախաձեռնված սահմանված մաքսային արժեքի որոշման նախորդ կանոններով, ապա այն որոշվում է GATT-ի դրույթներին համահունչ այլ միջոցներով (ՀՀ ՄՕ հոդված 93)</i></p>

## *Մտուզողական հարցեր*

1. Ի՞նչ է անհրաժեշտ մաքսային հարկման կանոնակարգման համար:

2. Ի՞նչ է իրենից ներկայացնում «նույն ապրանքներ» հասկացությունը՝ համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի:

3. Ի՞նչ է իրենից ներկայացնում «համանման ապրանքներ» հասկացությունը՝ համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի:

4. Ո՞ր դեպքերում են «անձիք համարվում փոխկապակցված»:

5. Ո՞ր ժամանակահատվածն է համարվում «նույն կամ գրեթե նույն ժամանակահատված»:

6. Ո՞րն է մաքսային արժեքի սահմանումը՝ համաձայն ՀՀ Մաքսային օրենսգրքի:

7. Ո՞րոնք են մաքսային արժեքում ներառվող և չներառվող ծախսերը:

8. Մաքսային արժեքի քանի՞ մեթոդ է սահմանված ՀՀ Մաքսային օրենսգրքով:

9. Ու՞մ կողմից է որոշվում մաքսային արժեքը:

10. Ի՞նչ է ընկած մաքսային արժեքի որոշման գործարքի գնի մեթոդի հիմքում:

11. Ի՞նչ է ընկած մաքսային արժեքի որոշումը ըստ նույն արժեքների գործարքի գնի մեթոդի հիմքում:

12. Ի՞նչ է ընկած մաքսային արժեքի որոշումն ըստ համանման ապրանքների գործարքի գնի մեթոդի հիմքում:

13. Ի՞նչ է ընկած մաքսային արժեքի որոշումը ներքին շուկայում ապրանքի միավորի իրացման գնի հիման վրա մեթոդի հիմքում:

14. Ի՞նչ է ընկած մաքսային արժեքի որոշումն ըստ հաշվարկային արժեքի մեթոդի հիմքում:

15. Ի՞նչ է ընկած մաքսային արժեքի որոշման պահուստային մեթոդի հիմքում:

16. Ի՞նչ է իրենից ներկայացնում մաքսային արժեքի հայտարարագրումը:



## **ԳԼՈՒԽ 5. ՄԱՔՍԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ**

### **5.1 Հարկավորման քաղաքականության սկզբունքները**

Պետության առաջացման հետ մեկտեղ ծագել է նաև հարկահավաքման անհրաժեշտությունը: Հարկերը և մաքսերը գոյություն են ունեցել բոլոր հասարակարգերում՝ սկսած ճորտատիրական հասարակարգից: Դրանք ունեցել են տարբեր դրսևորումներ (մթերքների կամ աշխատանքների տեսքով), սակայն դրանց էությունը մնում է նույնը առ այսօր: Ներկայումս հարկերը և մաքսերը կատարում են ինչպես ֆիսկալ, այնպես էլ խթանման, բաշխման և վերահսկողական ֆունկցիաներ: Տնտեսագիտական մտքի ողջ պատմության ընթացքում բոլոր տնտեսագետները կողմ են արտահայտվել հարկերի գոյությանը: Տնտեսագետների տեսակետները հարկերի և մաքսերի վերաբերյալ տարբերվում են միայն դրանց տեսակների, հարկային ճնշման և այլ նմանատիպ կատեգորիաների համապատասխան սահմանման առումով: Բոլոր տեսություններում կարևորվում է հարկային բեռի որոշման խնդիրը և օպտիմալ հարկադրման հիմնահարցը:

Պետության տնտեսական քաղաքականության իրագործումը մեծապես կախված է առկա աշխարհագրական, քաղաքատնտեսական պայմաններից, որոնցում գտնվում է տվյալ պետությունը: Հայաստանի Հանրապետությունը, այս տեսակետից, գտնվում է համեմատաբար բարդ պայմաններում՝ աշխարհագրական ոչ նպաստավոր դիրքով և իր առանձնահատկություններով հանդերձ, պատկանում է այն պետությունների դասին, որտեղ հարկահավաքման համակարգը պետք է հիմնված լինի արդյունաբերության տարբեր ճյուղերի

հնարավորությունների լիակատար օգտագործմանը նպաստելու, գյուղատնտեսության զարգացման խթանման, տուրիզմի և հանգստյան վայրերի միջազգային չափանիշներին համապատասխանեցման, արտասահմանում մեծ պահանջարկ ունեցող պատրաստի արտադրանքի և հումքի արտահանման համար բարենպաստ պայմանների ստեղծման հնարավորության, համատեղ ձեռնարկություններին համապատասխան արտոնությունների ընձեռման և այլ նպատակային սկզբունքների վրա:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում հարկային և մաքսային քաղաքականության ասպարեզներում ցուցաբերել իրավիճակային մոտեցում, որը հիմնված է որոշակի սկզբունքների վրա: Այդ սկզբունքներից առավել կարևորները հետևյալներն են:

1. Ցանկացած հարկատու պետք է հնարավորություն ունենա վճարել օրենսդրությամբ սահմանված հարկերի և տուրքերի իրեն հասանելի մասը: Եթե հարկման սուբյեկտը իր հարկային պարտավորությունները չի կարողանում կատարել, ապա, բնականորեն, նա կիրաժարվի տնտեսական գործունեությունից, և արդյունքում ոչ միայն կտուժի պետական բյուջեն, այլ նաև տվյալ գործունեությունը ծավալելու համընդհանուր կասեցման գործընթաց տեղի կունենա: Հարկ է նշել, որ հարկման սուբյեկտների կողմից վճարման ենթակա հարկերի և տուրքերի կառուցվածքի որոշումը կախված է պետության սոցիալ-տնտեսական և այլ առանձնահատկություններից, սակայն դրանց հանրագումարը պետք է խիստ համապատասխան լինի հարկատուների հնարավորությունների սահմաններին:

2. Տնտեսվարող սուբյեկտների հարկման հավասարությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հարկային և մաքսային օրենսդրությունը համապատասխանեցնել այն պայմաններին, որոնց շրջանակներում բոլոր հարկատուների համար հավասար եկամուտները հարկվում են միևնույն դրույքաչափով: Սակայն այս սկզբունքի կիրառումը վերաբերվում է միայն ուղղակի հարկերին:

Ավելացված արժեքի հարկը, ակցիզային հարկը, ինչպես նաև՝ մաքսատուրքը, իրենց նշանակության բնույթից ելնելով, նպատակահարմար չէ համապատասխանեցնել հարկման հավասարության սկզբունքին: Այս սկզբունքի ապահովման պարագայում էականորեն կնվազեն այնպիսի բացասական երևույթները (մակրոտնտեսական կայունացման տեսակետից), ինչպիսին են հարկման սուբյեկտների ոչ նպատակաուղղված զանգվածային հոսքերը տնտեսության մեկ ճյուղից մյուսը, որոշ հարկման սուբյեկտների՝ մյուսների նկատմամբ հարաբերական առավելությունների և, ամենավտանգավորը՝ շուկայի օլիգոպոլիզացման (առավել ևս՝ մենաշնորհը) համար բարենպաստ պայմանների ձևավորումը: Հարկման սուբյեկտների միջև հարաբերական առավելությունների առաջացման բացասական ներգործության աստիճանը կրկնապատկվում է ապրանքների և ծառայությունների շրջանառության ընթացում, քանի որ տնտեսվարող սուբյեկտները միաժամանակ նաև սպառող են հանդիսանում, և այս ազդեցությունը առավել ակնառու է միջանկյալ արտադրության բնագավառում:

3. Հարկային և մաքսային օրենսդրության ամենաէական նշանակություններից մեկն է տնտեսական աճին նպաստելու հատկության դրսևորումը՝ արտահայտված ձեռնարկատիրական գործունեություն ծավալելու համար բարենպաստ պայմանների սահմանմամբ: Այս սկզբունքի կիրառման արտապատկերումը ենթադրում է հիմնականում հարկային արտոնությունների համակարգի համալիր ներդրում՝ արտահայտված առանձին հարկատեսակների գծով հարկման օբյեկտների նվազեցման, հարկի նվազեցման, հարկերի վճարման ժամկետի, դրույքաչափերի իջեցման չափաքանակների համապատասխան սահմանումով: Այս մոտեցման կիրառումը, վերոհիշյալ երկու սկզբունքների ապահովման հետ մեկտեղ, համապատասխանորեն ձևավորում է ձեռնարկատիրական գործունեության շրջանակները, տնտեսության ճյուղային ուղղվածությունը, ավտոմատ կերպով

իրականացնում է ոչ շահութաբեր ձեռնարկությունների վերացման կամ դրանց վերակազմավորման գործընթացները՝ կարգավորելով պետության տնտեսական ուղղվածության հստակեցման բնական կազմավորումը:

4. Որպես ներդրումների խթանման գործընթացում հարկային և մաքսային օրենսդրության միջամտության հիմնական գործոն՝ հանդես է գալիս ներդրումների նկատմամբ միևնույն օրենսդրական միջոցառումների կիրառումը: Այս սկզբունքի ապահովումը հնարավորություն է ընձեռում տնտեսությանը իր զարգացման ուղղությունները շուկայական հարաբերություններին համապատասխան օրենքներով ձևավորելու համար: Շուկայական հարաբերությունների գաղափարախոսությունը ենթադրում է ճյուղից ճյուղ կապիտալի ազատ հոսքի առկայություն և ժամանակի ընթացքում այդ հոսքերի ուղղությունների փոփոխություններ: Հարկային և մաքսային օրենսդրության միջոցով այս գործընթացի վրա որոշակի սահմանափակումներ դնելու պարագայում տնտեսության կառուցվածքային կայունությունը կարող է էականորեն զգայուն դարձնել արտաքին ազդեցության ամենաչնչին տատանումներին:

5. Հարկային և մաքսային օրենսդրության արդյունավետության չափանիշների բազմության մեջ իր ուրույն տեղն է գրավում օրենսդրության ուժատվությունը պարզության, հստակության և համընդհանուր մատչելիության հատկություններով: Հարկային և մաքսային օրենսդրության զարգացման գաղափարը ենթադրում է հարկերի հաշվարկման համեմատաբար պարզ մեխանիզմների առկայություն: Հարկային պարտավորություններ ունեն հասարակության գրեթե բոլոր անդամները, ուստի հարկային օրենսդրության հստակեցման և մատչելիության սկզբունքները էական նշանակություն ունեն ինչպես հարկերի հավաքագրման այնպես էլ հասարակության անդամների միջև գոյություն ունեցող գույքային և այլ փոխհարաբերությունների կարգավորման գործընթացում:


## 5.2 Մաքսային վճարները և նոր դասական հայեցակարգը

Մաքսային վճարները այն պարտադիր վճարներ են, որոնք գանձվում են մաքսային մարմինների կողմից ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ:

Մաքսային վճարների վերլուծության համար հարկ է ուշադրություն դարձնել տնտեսագիտության մեջ տեղ գտած նոր դասական հայեցակարգի դրույթներին, որը ենթադրում է, որ

1. վճարը գանձվում է այն ապրանքից, որը հատում է մաքսային սահմանը,
2. բնակչության եկամուտները և սովորույթները չեն փոխվում,
3. հաշվի չեն առնվում տեխնոլոգիական նորարարությունները,
4. հաշվի չեն առնվում ապրանքի արտադրության համար օգտագործվող հումքի սակագները,
5. հաշվի չեն առնվում տրանսպորտային ծախսերը:

Եթե գրաֆիկորեն պատկերվի և տեսականորեն ընդունվի, որ օտարերկրյա մատակարարը կարող է մատակարարել ցանկացած քանակի ապրանք համապատասխան գնով, այսինքն՝ կարող է ամբողջությամբ բավարարել համապատասխան երկրի պահանջարկը, ապա կստանանք հետևյալը:



Գրաֆիկի վրա ներկայացված DDi ուղին նշանակում է ապրանքի սպառման քանակը՝ կապված գնի փոփոխման հետ: SSi ուղին ենթադրում է տեղական արտադրողների կողմից առաջարկվող ապրանքների քանակը՝ կախված գնից:


Երբ ապրանքի գինը հավասար է P1 մեծության, ապա Q0Q4 հանրնդիանուր սպառվող քանակից տեղական արտադրողի մասնաբաժինը կազմում է Q0Q1 մեծությունը, իսկ օտարերկրյա մատակարարի մասնաբաժինը կազմում է Q1Q4 մեծությունը:

Դիցուք, երկիրը տվյալ ապրանքի նկատմամբ սահմանում է T1 ներմուծման տուրք, որը բարձրացնում է ապրանքի գինը մինչև P2 մակարդակը: Այս դեպքում տվյալ ապրանքի սպառման քանակը կնվազի Q3Q4 մեծությամբ, սակայն տեղական արտադրողների արտադրության ծավալը կավելանա Q1Q2 մեծությամբ: Դա նշանակում է, որ օտարերկրյա մատակարարի կորուստը հավասար կլինի Q1Q2 և Q3Q4 հատվածների հանրագումարին: P1P2Q0Q4 մեծության մակերեսը այս դեպքում կարտացոլի հավելյալ ծախսերի կամ կորստի չափը, որը կրել են սպառողները տվյալ ապրանքի գնի ավելացման հետևանքով: Սակայն այդ մեծությունը իրենից ներկայացնում է տեղական արտադրողների կողմից ստացված լրացուցիչ շահույթը՝ «a» դաշտը և սպառողների կողմից կրված վնասը՝ «b» եռանկյունին, որը ցույց է տալիս կորուստների ծավալը, որոնք ծագում են օտարերկրյա մատակարարի կողմից տվյալ շուկայից դուրս գալու կապակցությամբ, իսկ «d» եռանկյունին ցույց է տալիս հարկերից ստացված միջոցների չափը:

Ներկայումս ժամանակակից տնտեսագետներից շատերը հանգում են այն եզրահանգմանը, որ ազատ առևտրի սկզբունքների դեպքում նյութական առավելությունները ավելի մեծ են, քան պրոտեկցիոնիստական: Նման մոտեցումը այդքան էլ ճիշտ չէ, քանի որ ինչպես ներկայացնում են դասական տնտեսագիտության կողմակիցները, անհրաժեշտ է ազատ առևտրի նկատմամբ կիրառել որոշակի «նախապայմաններ», այսինքն՝ անհրաժեշտ է կիրառել «հավասարակշռված» մաքսատուրքի դրույքաչափ:

Դրա իմաստը այն է, որ եթե երկիրը հարուստ է, ապա նա կարող է ապահովել ներմուծվող ապրանքների գների իջեցման մոտեցումը դրանց նկատմամբ պահանջարկի կրճատման մոտեցմամբ: Այս դեպքում «առևտրի բարելավման» նպատակով կարելի է կիրառել մաքսատուրքի դրույքաչափ, որը թույլ կտա օտարերկրյա մատակարարներին իջեցնել գները: Նման մոտեցումը կիրառելի է մի շարք գյուղատնտեսական ապրանքների նկատմամբ, որոնց սպառման ծավալները ճկուն չեն: Այսինքն՝ մատակարարը, համապատասխան հարկի մուտքագրման դեպքում վախենալով կորցնել մեծ արտահանման շուկան, ստիպված կլինի նվազեցնել ներմուծվող ապրանքի գինը, որը հարկի չափից ավել կլինի:

Տվյալ երևույթը կոչվում է «Մեցլերի հարակարծություն», որը գրաֆիկորեն կարելի է պատկերել հետևյալ կերպ:



W<sub>s</sub> ուղին ցույց է տալիս ապրանքի առաջարկի դինամիկան մինչև մաքսատուրքի սահմանումը; W<sub>s</sub><sup>n</sup> – ուղին ցույց է տալիս առաջարկի դինամիկան մինչև T սակագնի սահմանումը, երբ

մատակարարները վախենալով կորցնել սպառման շուկան, իջեցրել են գները PP3 մեծության չափով, որը գերազանցում է T սակագանի չափը; WWS<sup>n+T</sup> – ուղին արդեն արտացոլում է ապրանքի առաջարկի դինամիկան սակագանի սահմանումից հետո: Այստեղ q1, q2, q3 ցուցիչները ցույց են տալիս համապատասխան սպառված ապրանքի քանակը, իսկ DDi ուղին ցույց է տալիս օտարերկրյա ապրանքի պահանջարկը, որը փոփոխվում է կապված գնից:

Ինչպես երևում է գրաֆիկից, գների իջեցման դեպքում սպառողների կողմից սպառվող ապրանքի ծավալի աճը q1-ից q2 սահմանվում է P2D2q2O ուղղանկյան մակերեսով P3D1q1O ուղղանկյան փոխարեն, իսկ սպառողների շահը կկազմի «a» քառանկյան և «b» ու «c» եռանկյունիների հանրագումարով:

### 5.3 Մաքսային գանձումները

Մաքսային ծառայությունը իր առջև դրված այլ խնդիրների լուծման հետ մեկտեղ իրականացնում է նաև ֆիսկալ քաղաքականություն՝ կանոնավոր հավաքագրելով հարկերը և տուրքերը և լրացնում է պետական բյուջեն՝ դրանով իսկ աջակցելով տնտեսական խնդիրների լուծմանը:

Ներկայումս պետական բյուջեի եկամտային մասի գերակշռելի բաժինը ընկնում է մաքսային գանձումների վրա:

Մաքսային գանձումները կոչված են պետության տնտեսական խնդիրների լուծման համար: Տնտեսական խնդիրների լուծումը, որոնք դրված են մաքսային ծառայության վրա կապված է իրենց կողմից իրականացվող գործունեության հետ, որի շրջանակներում մաքսային մարմինների կողմից համապատասխան գանձվում են հետևյալ մաքսային գանձումները.

- մաքսատուրքեր,
- մաքսավճարներ,
- ակցիզային հարկ,



-հաստատագրված վճարներ,  
-ավելացված արժեքի հարկ,  
-ավտոմոբիլային ճանապարհներից օգտվելու համար գանձվող  
ճանապարհային վճար,

-բնապահպանական վճար:

Մաքսային գանձումները պետական դրամական տուրքեր են, որոնք գանձվում են տվյալ երկիր ներմուծվող և արտահանվող ապրանքներից:

Մաքսային գանձումների դրույքաչափերը, արտոնությունները, գանձման կարգը, պատասխանատվությունը դրանք չվճարելու դեպքում սահմանվում են համապատասխան օրենքներով: (*Տես համապատասխան ՀՀ օրենքները*)

### ***Մտուզողական հարցեր***

1. Ի՞նչ դեր են կատարում հարկերը և տուրքերը պետության տնտեսական քաղաքականության իրագործման ժամանակ:
2. Ո՞րոնք են հարկավորման քաղաքականության սկզբունքները:
3. Ո՞րն է մաքսային վճարների նոր դասական հայեցակարգը:
4. Ի՞նչ է իրենից ներկայացնում «Սեյլերի հարակարծությունը»:
5. Ի՞նչ է մաքսատուրքը:
6. Ի՞նչ է մաքսավճարը:

*Չաքարիա Քանաքեռցու պատմագրությունից առաջ են գալիս որոշ նկատառումներ հին Հայաստանում մաքսերի գանձման վերաբերյալ. «Խոսրով-խանը ավելացրեց հարկերը, մաքսեր մտցրեց և ամեն ինչ թանկ էր վաճառում...»*

## **ԳԼՈՒԽ 6 ԱՊՐԱՆՔԻ ԾԱԳՄԱՆ ԵՐԿԻՐԸ**

Մաքսային գործում կարևոր հասկացություն է ապրանքի ծագման երկիրը:

Ակնհայտ է, որ տարբեր երկրներում ապրանքների արտադրության ժամանակ ծախսվող նյութերի, աշխատուժի, էներգակիրների և այլն արժեքները լինում են տարբեր: Այդ և այլ բաղկացուցիչների հանրագումարը ձևավորում է ապրանքի գինը: Տարբեր են լինում նաև այդ ապրանքների տեղափոխման համար կատարվող ծախսերը: Այդ և այլ գործոնները հաշվի առնելու նպատակով ապրանքի ծագման երկրի որոշումը նպատակաուղղված է ապրանքների նկատմամբ սակագնային և ոչ սակագնային կարգավորման, մաքսային վիճակագրության վարման և ծագման երկրի հավաստագրերի տրամադրման համար:

Համաձայն ՀՀ Մաքսային օրենսգրքի՝ ապրանքի ծագման երկիր է համարվում այն երկիրը, որտեղ դա ամբողջությամբ արտադրվել է կամ վերջին անգամ ենթարկվել է բավարար վերամշակման: Անհրաժեշտության դեպքում որպես ծագման երկիր կարող է դիտվել երկրների խումբը, մաքսային միությունը, աշխարհի կամ որևէ երկրի տարածաշրջանը:

Ապրանքի ծագման երկրի որոշումը ունի կանոններ, որոնք հաշվի են առնում ծագման երկիրը որոշելիս: Վերը նշված սահմանման մեջ առկա են ձևակերպումներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել: Այսպես՝ համաձայն ՀՀ Մաքսային օրենսգրքի՝ *ամբողջությամբ մեկ երկրում արտադրված* են համարվում՝.

- կենդանի կենդանիները, որոնք ծնվել և աճեցվել են այդ երկրում,

- կենդանիները, որոնք ձեռք են բերվել տվյալ երկրում որսորդության, թակարդելու, ձկնորսության (տվյալ երկրի տարածքային և ներքին ջրերում) կամ համանման այլ գործունեության հետևանքով,
- տվյալ երկրում կենդանի կենդանիներից ստացված արտադրանքը,
- տվյալ երկրում աճեցված, հնձված, քաղված կամ հավաքված բույսերը կամ բուսամթերքը,
- տվյալ երկրի տարածքից, ընդերքից կամ տարածքային և ներքին ջրերի հատակից ստացված, արդյունահանված օգտակար հանածոները և այլ բնական պաշարները,
- տվյալ երկրում արտադրության, վերամշակման կամ սպառման հետևանք հանդիսացող մնացորդները և երկրորդային հումքը,
- տվյալ պետության դրոշմ օրինականորեն կրող նավերով չեզոք ջրերում ձկնորսությամբ ձեռք բերված արտադրանքը,
- տվյալ երկրին պատկանող կամ վերջինիս կողմից վարձակալված տիեզերանավերում թռիչքի ընթացքում ստացված արտադրանքը:

Լինում են դեպքեր, երբ ապրանքի արտադրությանը մասնակցում են մեկից ավել երկրներ: Այդ դեպքում ծագման երկիր է համարվում այն երկիրը, որտեղ վերջին անգամ կատարվել են *բավարար վերամշակման* աշխատանքներ: Բավարար վերամշակման չափանիշներ են համարվում.

- վերամշակման այնպիսի աշխատանքներ, որոնց արդյունքում տեղի է ունեցել ԱՏԳ ԱԱ-ում ապրանքի ապրանքային ծածկագրի առաջին չորս նիշերից ցանկացածի փոփոխությունը,
- վերամշակման այնպիսի աշխատանքներ, որոնց ընթացքում տվյալ ապրանքի արտադրության մեջ օգտագործվող տվյալ երկրի ծագում ունեցող նյութերի արժեքի և ավելացված արժեքի տոկոսային բաժինը կազմում է արտադրանքի բացթողման (մատակարարման) գնի ոչ պակաս, քան 30 տոկոսը, ընդ որում, այդ գնի մեջ հաշվի չեն առնվում անուղղակի հարկերը,

առևտրային վերադիրները, տրանսպորտային, ապահովագրական, պահպանման և համանման այլ ծախսերը:

Այն ապրանքները, որոնք արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկում դասակարգված են որպես կոմպլեկտներ (կոմպլեկտավորված ապրանքներ) կամ դիտվում են որպես այդպիսիք, համարվում են այն երկրի ծագում ունեցող, որտեղ կոմպլեկտը հավաքվել է, եթե կոմպլեկտի տվյալ երկրի ծագում չունեցող մասերի ընդհանուր արժեքը չի գերազանցում դրա արժեքի 45 տոկոսը:

Եթե ապրանքի ծագման երկիրն անհնար է որոշել վերը նշված կանոնների համաձայն, ապա ծագման երկիր է համարվում է այն երկիրը, որտեղ տվյալ ապրանքը վերջին անգամ հանվել է մաքսային հսկողությունից մինչև Հայաստանի Հանրապետություն հասնելը, բացառությամբ տարանցիկ փոխադրման և մաքսային պահեստներում ապրանքների մաքսային հսկողության տակ գտնվելու դեպքերի:

Անհրաժեշտ է իմանալ նաև, որ ապրանքի բավարարվերաձևակման չափանիշներ չեն համարվում`

- բացառապես ապրանքի նպատակային նշանակման մեջ կատարվող փոփոխությունները (օրինակ` մարդատար մեքենայից բեռնատարի հավաքում և այլն),
- ցանկացած ձևով կատարվող փաթեթավորման գործողությունները (օրինակ` շշալցում, փաթաթում և այլն),
- ներդաշնակ համակարգի կանոնների համաձայն` անավարտ ապրանքներն ավարտուն ապրանքների շարքում դասակարգելը կամ ավարտված, բայց չմոնտաժված արտադրանքը մոնտաժված ապրանքների շարքում դասակարգելը,
- պարզ հավաքման գործողությունները, մասնավորապես` մեկ այլ անվանման տակ դասակարգելի ապրանքներ ստանալու համար միավորների խրոցակային միացումը (օրինակ` մոնիտորի, ավտոմատ սնուցման միավորի, ստեղնաշարի, «մկնիկի» միացմամբ համակարգչի ստացում և այլն),
- բացառապես պաշտպանական միջոցների ավելացումը,

- ԱՏԳԱԱ-ի «կենդանի կենդանիներ» ապրանքային խմբում դասակարգված ապրանքներից «միս և մսի ենթամթերք» ապրանքային խմբի ապրանքներ ստանալը,
- ապրանքների վաճառահանման և փոխադրման նախապատրաստական աշխատանքները (խմբաքանակների մասնատում, տեսակավորում, վերափաթեթավորում և այլն),
- արտադրանքի պահպանության, տեղափոխման և պահեստավորման համար անհրաժեշտ գործողությունները.
- ապրանքների կամ նրանց փաթեթավորման վրա նիշերի, պիտակների կամ այլ տարբերակող նշանների ամրացումը.
- ապրանքների (բաղադրամասերի) խառնման միջոցով այնպիսի արտադրանքի ստացումը, որի բնութագրերն էապես չեն տարբերվում էլակետային բաղադրամասերի բնութագրերից:

Ապրանքի ծագման երկիրը որոշելիս հաշվի չի առնվում՝

- ապրանքի արտադրության համար օգտագործվող էներգիայի, վառելիքի, սարքավորումների, մեքենաների և գործիքների ծագման երկիրը.
- ապրանքը վերջնական տեսքի բերելու համար տեխնիկական գործընթացով չնախատեսված, բայց օգտագործված և ֆիզիկապես ապրանքում չընդգրկված նյութերի ծագման երկիրը.
- ապրանքների հետ միաժամանակ տեղափոխվող օժանդակ սարքերի, պահեստամասերի ծագումը, եթե նրանց քանակը և արժեքը բնորոշ են տվյալ ապրանքի համար, դրանց գինը ներառված է ապրանքի գնի մեջ, և դրանք ապրանքից առանձին ապրանքագրված չեն:

### ***Ստուգողական հարցեր***

1. Ի՞նչ է ապրանքի ծագման երկիրը և ո՞րոնք են դրա որոշման կանոնները:
2. Ի՞նչ հաշվի չի առնվում ապրանքի ծագման երկիրը որոշելիս:

*Եթե գնում ես այն, ինչ քեզ պետք չէ,  
ապա շատ շուտով վաճառելու ես այն, ինչ քեզ անհրաժեշտ է  
Բ. Ֆրանկլին*

## **ԳԼՈՒԽ 7**

### **ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿԸ**


Արտաքին առևտրում յուրաքանչյուր ապրանք ունի իր համապատասխան ծածկագիրը: Այդ ծածկագրերի համախումբը իրենից ներկայացնում է «Ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակեցված համակարգը» (Harmonized Commodity Description and Coding System - HS), որն ընդունվել է համաձայն 1984թ. հունիսի 14-ին «Ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակեցված համակարգի մասին» միջազգային կոնվենցիայի և պաշտոնապես ճանաչված է 1988թ. հունվարի 1-ից աշխարհի ավելի քան 150 երկրներում:

Համաձայն ներդաշնակեցված համակարգի (ՆՀ)՝ ֆիզիկապես շարժունակ ցանկացած ապրանքատեսակ դասակարգված է ապրանքային 21 բաժիններում, որոնք նշվում են հռոմեական թվանշաններով՝ I-XXI: Ապրանքների դասակարգումն այս կամ այն բաժնում հիմնականում ելնում է տվյալ ապրանքի ճյուղային պատկանելիությունից կամ այն նյութից, որից տվյալ ապրանքը պատրաստված է, իսկ որոշ դեպքերում նաև նրա նպատակային նշանակվածությունից: ՆՀ-ում յուրաքանչյուր ապրանք ունի վեց նիշից բաղկացած ծածկագիր, որտեղ առաջին երկու նիշերը ցույց են տալիս ապրանքային խումբը (ՆՀ-ում առկա է 97 ապրանքային խումբ՝ 01-ից 97), հաջորդ երկուսը՝ ենթախումբը և վերջին երկուսը՝ ենթադիրքը: Այսպիսով, ցանկացած ապրանքատեսակի վերջնական նկարագիրը, համաձայն ՆՀ-ի, տրվում է այս վեց նիշերի օգնությամբ: ՆՀ համակարգը, ելնելով տվյալ երկրի ազգային առանձնահատկություններից և մաքսային սակագնի պահանջներից, ապրանքների դասակարգումն ավելի

մանրամասնելու նպատակով թույլ է տալիս առկա վեց նիշերին ավելացնել ցանկացած քանակի նիշեր՝ առանց ՆՀ-ի կառուցվածքի փոփոխության: Դրանից ելնելով՝ ՆՀ համակարգի բազայի վրա Եվրոպական տնտեսական համագործակցության եկրների համար մշակվել է «Ապրանքների կոմբինացված անվանացանկ»՝ ԿԱ (Combinized Nomenclature of EC-CN), ավելացնելով ՆՀ ծածկագրին ևս երկու նիշ: ԿԱ-ի հիման վրա մշակվել և 1995թ. նոյեմբերի 11-ին ընդունվել է ԱՊՀ անդամ պետությունների արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը՝ ԱՏԳ ԱԱ, որը համընկնելով ԿԱ-ին, ունի իննանիշ կառուցվածք:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ազգային տնտեսության առանձնահատկությունից ելնելով և ապրանքների դասակարգումն ավելի մանրամասնեցնելու նպատակով կիրառվում է 11 նիշանոց համակարգ:

Ապրանքի ծածկագիրն ունի հետևյալ կառուցվածքը:



Որպես օրինակ՝ դիտարկենք «ձիեր» ապրանքի ծածկագրի կառուցվածքը: Համաձայն ներդաշնակեցված համակարգի (ՆՀ) I-ին բաժինը անվանակոչված է «Կենդանի կենդանիներ. Կենդանական ծագում ունեցող ապրանքներ»: I-ին բաժնում է

նկարագրված 01 ապրանքային խումբը, որի անվանումն է «Կենդանի կենդանիներ»: 01 ապրանքային խմբում առկա են ենթախմբեր, որտեղ 0101 ենթախումբը կոչվում է «Ձիեր, ավանակներ, ջորիներ կենդանի»: 0101 ենթախմբում է գտնվում 010110 ենթադիրքը, որը համաձայն ՆՀ-ի նկարագրվում է որպես «զտարյուն ցեղական կենդանիներ»: Իսկ համաձայն ԱՏԳ ԱԱ-ի 010110100 ծածկագրով նկարագրվում է «ձիեր» ապրանքը:

01 – Կենդանի կենդանիներ

0101 - Ձիեր, ավանակներ, ջորիներ կենդանի

010110 - զտարյուն ցեղական կենդանիներ

010110100 - ձիեր

Շնորհիվ իր կառուցվածքի և օգտագործման հարմարության, արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը հնարավորություն է ընձեռում մասնավորապես.

- իրականացնել ապրանքների դասակարգում համաշխարհային առևտրում և վարել արտաքին առևտրի վիճակագրություն,
- կիրառել մաքսատուրքեր և այլ վճարներ տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների նկատմամբ,
- վերացնել արտաքին առևտրի խոչընդոտները:

### ***Ստուգողական հարցեր***

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում «Ապրանքների նկարագրման և կոդավորման ներդաշնակեցված համակարգը»:
2. Ի՞նչ է իրենից ներկայացնում արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը:
3. Ինչպիսի՞ կառուցվածք ունի ՀՀ-ում կիրառվող ապրանքի ծածկագրի ազգային նշումը:



*Օրենքը պետք է հստակ և պարզ լինի, որպեսզի այն կարողանան  
ընկալել նաև ոչ բանիմաց մարդիկ  
Սենեկա*

## **ԳԼՈՒԽ 8. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՒ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐՈՒՄ**

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքները և տրանսպորտային միջոցները պետք է անցնեն համապատասխան մաքսային ձևակերպում: Մաքսային ձևակերպումը համապատասխան ապրանքների և տրանսպորտային միջոցների բացթողման համար սահմանված անհրաժեշտ միջոցառումների իրականացումն է՝ մինչև որոշակի մաքսային ռեժիմով դրանց բացթողումը՝ ներառյալ ապրանքներից նմուշների և փորձանմուշների վերցնելը, ապրանքների պատասխանատու պահպանման հանձնումը և դրանց հայտարարագրումը:

Հայտարարագրումը դա ապրանքների, դրանց տեղափոխման նպատակի վերաբերյալ տեղեկատվության, ինչպես նաև մաքսային հսկողության համար անհրաժեշտ այլ ճշգրիտ տեղեկությունների գրավոր կամ բանավոր հայտարարումն է, վերադաս մաքսային մարմնի կողմից հաստատված կարգով և ձևով:

Մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների հայտարարագրման համար հայտարարատուի կողմից պետք է ներկայացվեն համապատասխան փաստաթղթեր, որոնք սահմանված են ՀՀ օրենսդրությամբ:

Հայտարարագրումն իրականացվում է գրավոր կամ բանավոր՝ նշելով ճշգրիտ տեղեկություններ ապրանքների և տրանսպորտային միջոցների, դրանց տեղափոխման նպատակի մասին, ինչպես նաև մաքսային հսկողության և ձևակերպման համար անհրաժեշտ այլ տեղեկություններ:

Ապրանքները, անկախ իրենց քանակից և բնույթից, կարող են հայտարարագրվել մաս-մաս սահմանված ժամկետում, այդ թվում՝

նակ տարբեր մաքսային ռեժիմներով, եթե օրենքով և այլ իրավական ակտերով այլ բան նախատեսված չէ:

Որպես հայտարարատու կարող է հանդես գալ ապրանքներ տեղափոխող անձը կամ նրա կողմից լիազորված անձը:

Որպես հայտարարատու կարող է հանդես գալ միայն Հայաստանի Հանրապետության անձը, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվում են ապրանքներ:

Հայտարարատուն կրում է պատասխանատվություն հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ուղևորվող անգործունակ, ինչպես նաև 16 տարին չլրացած ֆիզիկական անձանց փոխարեն հայտարարագրումն իրականացնում են նրանց օրինական ներկայացուցիչները, որոնք կրում են ՀՀ Մաքսային օրենսգրքով հայտարարատուի համար սահմանված պատասխանատվություն, այդ թվում՝ հայտարարագրված տեղեկությունների հավաստիության համար:

Մինչև հայտարարագրումը հայտարարատուն իրավունք ունի մաքսային հսկողության ներքո զննել և չափել ապրանքները և տրանսպորտային միջոցները, մաքսային մարմնի համաձայնությամբ վերցնել նմուշներ կամ փորձանմուշներ այն պայմանով, որ դրանք կներառվեն ներկայացված հայտարարագրում:

Հայտարարատուն պարտավոր է՝

ա) իրականացնել ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրում:

բ) մաքսային մարմինների պահանջով ներկայացնել հայտարարագրվող ապրանքները և տրանսպորտային միջոցները:

գ) մաքսային մարմիններ ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ:

Մաքսային մարմինները հայտարարատուից իրավունք ունեն պահանջել միայն հայտարարագրման ենթակա տեղեկություններ և մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման վերաբերյալ

այնպիսի փաստաթղթեր, որոնք թույլ են տալիս ճշտել այդ տեղեկությունները:

Մաքսային հայտարարագրի ընդունման պահից այն համարվում է իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթուղթ:

Մաքսային մարմնի պաշտոնատար անձինք իրավունք չունեն իրենց անձնական նախաձեռնությամբ, որևէ անձի հանձնարարականով կամ խնդրանքով լրացնել մաքսային հայտարարագիրը, դրանում կատարել փոփոխություններ և լրացումներ, բացառությամբ իրենց իրավասության շրջանակներին դասվողների:

### ***Մտուզողական հարցեր***

1. Ի՞նչ է մաքսային ձևակերպումը:
2. Ի՞նչ է հայտարարագրումը:
3. Ի՞նչպես է իրականացվում ապրանքների և տրանսպորտային միջոցների հայտարարագրումը:
4. Ո՞վ կարող է հանդես գալ որպես հայտարարատու:
5. Ի՞նչ իրավունքներ և պարտականություններ ունի հայտարարատուն:
6. Ի՞նչ իրավունք ունեն պահանջել հայտարարատուից մաքսային մարմինները:

*Չկա ավելի վանասկար կենդանի,  
քան օրենքներին չհետևող մարդը  
Մավոնարոլա*

## **ԳԼՈՒԽ 9. ՄԱՔՍԱՅԻՆ ՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ**

Մաքսային գործի անբաժանելի մաս է կազմում նաև մաքսային հսկողությունը և պայքարը մաքսանենգության դեմ: Մաքսային մարմինների կառուցվածքային համապատասխան

ստորաբաժանումները պատշաճ կերպով այն իրականացնում են ապահովելու Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և տնտեսական շահերի պաշտպանությունը:

Հին ժամանակներում, ինչպես առևտուրն ու առևտրային հարաբերություններն էին զարգանում, այնպես էլ փորձեր էին արվում շրջանցել գոյություն ունեցող օրենքները և տեղափոխել ապրանքներ՝ չվճարելով համապատասխան մաքսեր: Այսպես՝ հին ժամանակներից էլ ծագել է մաքսանենգությունը: «Մաքսանենգություն» բառի ծագումնաբանական աղբյուրը վերցված է իտալերեն լեզվից (contrabando՝ contra – հակա, bando – կառավարական հրամանագիր), ինչպես նաև «մաքսանենգ» (contrabandista) բառը, որը ռոմանական լեզվաընտանիքի իսպաներեն լեզվից է ծագում առել:

Հին ժամանակներից ի վեր, երբ ինչ-որ ապրանքի վրա հարկեր էին դրվում կամ արգելվում էր դրանց տեղափոխումը, ծագում էր մի միջավայր, որի նպատակն էր խախտումների կազմակերպումը և գոյություն ունեցող կանոնների և արգելքների շրջանցումը: Ապրանքների տեղափոխումը, առանց համապատասխան վճարների գանձման հայտնի է աշխարհի ստեղծման օրվանից: Պատմության մեջ հստակ չեն պահպանվել տեղեկություններ, թե ով էր զբաղվում մաքսանենգ ապրանքների հետախուզմամբ, և ինչպես էին տվյալ գործողությունները պատժվում պետության կողմից:

Սակայն պահանջարկը ստեղծում էր առաջարկ, և անձանց քանակը, որոնց համար ապրանքների ապօրինի տեղափոխումը դարձել էր մասնագիտություն, սրընթաց աճում էր: Այդ գործի մեջ հնարամտությունը հասել էր բարձր մակարդակի: Թաքստոցների և ապրանքների քողարկման մեթոդները անընդհատ կատարելագործվում էին: Դրա վերաբերյալ Հին Հունաստանում մի իմաստուն ասել էր. *«Եթե հնարամտությունը օգտագործվեր ոչ թե օրենքի խախտման համար, այլ նրա կատարման, ապա մարդկությունը կբարգավաճեր»*: XIV-XVI դարերում հասարակության բարքերը բավականին խիստ էին և ոչ միայն

մաքսանենգները, այլ նաև այն վաճառականները, ովքեր զբաղվում էին մաքսանենգ ապրանքների առևտրով ենթարկվում էին խիստ պատժի, իսկ մի շարք դեպքերում նաև մահապատժի: Այդ ժամանակաշրջանի ընթացքում բեռների մեծ մասը տեղափոխվում էր ծովով, և ծովափնյա հեռավոր մասերը իդեալական պայմաններ էին ստեղծում մաքսանենգ ապրանքների ներմուծման համար:

Պատմությանը հայտնի են նաև դեպքեր, երբ մաքսանենգների ծառայություններից օգտվում էին նաև հատուկ ծառայությունները, որոնք նաև վճարում էին դրա համար: Մաքսանենգները գաղտնի ձևերով տեղափոխում էին անհրաժեշտ մարդկանց, տեղափոխում էին փոստ և այլ առարկաներ՝ շրջանցելով մաքսային մարմինները: Նման ծառայություններից օգտվում էին բոլոր պետությունների հատուկ ծառայությունները: Մաքսանենգները չէին հետապնդում ինչ-որ քաղաքական գաղափարներ, նրանք պարզապես կատարում էին իրենց գործը, որի համար ստանում էին համապատասխան վճար:

Ներկա ժամանակաշրջանում մաքսային սահմանով տեղափախվող ապրանքները և տրանսպորտային միջոցները ենթակա են համապատասխան մաքսային հսկողության: Մաքսային հսկողությունը իրականացվում է տարբեր եղանակներով, այդ թվում՝ համապատասխան փաստաթղթերի ստուգմամբ, ապրանքների զննմամբ, ֆիզիկական անձանց բանավոր հարցմամբ և այլն: Մաքսային հսկողության իրականացման դրույթները սահմանված են ՀՀ Մաքսային օրենսգրքով (Տե՛ս ՀՀ մաքսային օրենսգիրք):

### ***Ստուգողական հարցեր***

1. Ի՞նչ է մաքսային հսկողությունը և ո՞րոնք են դրա դրույթները համաձայն ՀՀ Մաքսային օրենսգրքի:

## **ԳԼՈՒԽ 10. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

### **10.1 Առևտրի համաշխարհային կազմակերպություն**

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը առևտրի և սակագների գլխավոր համաձայնագրի (ԱՍԳ-Հ) իրավահաջորդն է, որը երկրորդ համաշխարհային պատերազմից հետո դարձել էր համաշխարհային առևտրի ազատականացման և առևտրային արգելքների կրճատման հիմնական գործիքը:

ԱՀԿ-ն սկսել է գործել 1995թ. հունվարի 1-ից : Այն ստեղծվեց ԱՍԳ-Հ-ի շրջանակներում ընթացող բանակցությունների վերջին՝ Ուրուգվայի փուլի արդյունքում, որը ավարտվեց 1994թ. ապրիլին Մարոկկոյի մայրաքաղաղաք Մարակեշում:

ԱՀԿ միավորում է ավելի քան 153 անդամ երկրներ: ԱՀԿ-ի շտաբ-կայանը գտնվում է Ժնևում (Շվեյցարիա): ԱՀԿ-ն ունի քարտուղարություն և հրատարակում է պաշտոնական փաստաթղթեր, վիճակագրական նյութեր և տնտեսագիտական պարբերականներ:

ԱՀԿ-ի նպատակը միջազգային առևտրի խթանումն է՝ միջազգային առևտրի արգելքները վերացնելով, ներառյալ ներմուծման և արտահանման սակագների կրճատումը և համընդհանուր առևտրային ընթացակարգերի կարգավորումը: ԱՀԿ-ն նշված առաքելությունները իրականացնում է ավելի շուտ քաղաքականության մշակման, քան տեխնիկական միջոցներով:

ԱՀԿ-ի ամենակարևոր ձեռքբերումներից է վերջերս ընդունված մաքսային բարեփոխումների և արդիականացման ծրագիրը, որի նպատակն է կազմակերպության անդամների ոգնել լինելու ավելի ինքնավստահ, ավելի արդյունավետ աշխատելու՝ օգտագործելով

առկա ռեսուրսները, հզորացնելով կազմակերպչական հնարավորությունները, և նախագծելու համապատասխան համակարգեր և կառույցներ, որոնք կնպաստեն համընդհանուր գործունեության բարելավմանը թե՛ քաղաքականության մշակման և թե՛ կառավարման բնագավառներում:

ԱՀԿ-ի բազմաբիւթ համաձայնագրերի փաստաթղթերի հիմքում ընկած են մի քանի պարզ և հիմնարար սկզբունքներ.

- առևտուր առանց խտրականության,
- կանխատեսելիություն ու շուկաների թափանցելիություն:

Առաջին սկզբունքը ապահովում է խտրականության վերացումը ինչպես անդամ երկրների հետ առևտուր իրականացնելիս, այնպես էլ ներմուծվող և տեղական արտադրանքի միջև: Դա, այսպես կոչված «առավել բարենպաստության ռեժիմի» դրույթն է, որով հստակեցվում է, որ մաքսատուրքերը և այլ սակագնային կարգավորումները, որոնք կիրառվում են ներմուծվող կամ արտահանվող ապրանքների վրա, բոլոր անդամ երկրների համար առանց որևէ խտրականության պետք է լինեն նույնը: Դա հնարավորություն է ընձեռում, որպեսզի որևէ տարբերություն չդրվի ԱՀԿ անդամ առևտրային գործընկերների միջև՝ մեկին տալով հատուկ առևտրային առավելություններ կամ խտրական վերաբերմունք ունելլալ մյուսի նկատմամբ:

Առանց խտրականության՝ առևտրի իրագործմանը նպաստում է ԱՀԿ-ի գործունեության հիմքերից մեկը հանդիսացող մյուս կարևոր դրույթը, այնպես կոչված, «ազգային մոտեցումը», համաձայն որի երկրներին արգելվում է խտրականություն դնել ներմուծվող ապրանքների և համանման ներքին արտադրության ապրանքների միջև ինչպես հարկման, այնպես էլ առևտրի ներքին կարգավորման ցանկացած այլ բնագավառում: Այս կարևորագույն դրույթը կոչված է մրցակցային հավասար դաշտ ստեղծել ներքին արտադրողների և ներմուծողների միջև:

Երկրների կողմից բազմակողմանի առևտրային համակարգի ստեղծման նպատակը գործարարների, աշխատողների և

սպառողների համար այնպիսի միջավայրի ստեղծումն է, որը կիրախուսի առևտուրը, ներդրումները, զբաղվածության աճը, ինչպես նաև շուկայում ընտրության հնարավորությունը: Այդպիսի միջավայրը պետք է լինի կայուն և կանխատեսելի, մանավանդ որ այդ նպատակների իրագործման համար անհրաժեշտ են եկամտաբեր ներդրումներ: Իսկ առանց միմյանց շուկաներ քափանցելիության աճի անհնարին է ակնկալել միջազգային առևտրի, հետևաբար նաև ազգային տնտեսությունների աճ: Այդ պատճառով վերը նշված երկրորդ սկզբունքի իրագործումը կարևոր նշանակություն ունի ԱՀԿ-ի առջև դրված խնդիրները լուծելու տեսանկյունից:

## **10.2 Համաշխարհային մաքսային կազմակերպություն**

1952 թվականի նոյեմբերին ուժի մեջ մտավ «Մաքսային համագործակցության Խորհրդի կազմավորման» մասին համաձայնագիրը, իսկ 1953 թվականի հունվարի 26-ին Բրյուսելում տեղի ունեցավ տվյալ խորհրդի առաջին նիստը, որը 1994 թվականին ստացավ իր ներկայիս անվանումը՝ Համաշխարհային մաքսային կազմակերպություն (World Customs Organization): 30 տարի անց՝ 1983 թվականին, այդ օրը ընտրվեց որպես Մաքսային ծառայողի միջազգային օր (International Customs Day):

Շատ արագ մաքսային համագործակցության խորհուրդը դարձավ միձագային մասշտաբի կազմակերպություն և այսօր ՀՄԿ-ն միավորում է շուրջ 170 անդամ երկիր:

Համաշխարհային մաքսային կազմակերպության գործունեությունը կենտրոնացած է այնպիսի համաձայնագրերի մշակման ուղղությամբ, ինչպիսիք են ապրանքների դասակարգումը, մաքսային արժեքի և ծագման երկրների կանոնների որոշումը, մտավոր սեփականության պաշտպանության, մաքսային իրավախախտումների դեմ պայքարի, ինչպես նաև կոռուպցիայի դեմ պայքարի ուղղությամբ տարվող աշխատանքները:



ՀՄԿ-ն հատուկ ուշադրություն է դարձնում նաև այնպիսի ծրագրերին, որոնք թույլ են տալիս բարեփոխումներ իրականացնել տարբեր երկրների մաքսային ծառայություններում:

ՀՄԿ-ի կողմից մշակվել է «Ապրանքների նկարագրման և կողավորման ներդաշնակեցված համակարգը»: ՀՄԿ-ն միջազգային բարձր համբավ և ճանաչում ունեցող կազմակերպություն է, որը հանդիսանում է մաքսային գործի փորձագիտական կենտրոն:

### ***Մտուզողական հարցեր***

1. Ե՞րբ է ստեղծվել Առևտրի համաշխարհային կազմակերպությունը:
2. Ո՞րոնք են Առևտրի համաշխարհային կազմակերպության առջև դրված խնդիրները :
3. Ո՞րոնք են Առևտրի համաշխարհային կազմակերպության հիմնական սկզբունքները և ի՞նչ է դրանց էությունը:
4. Ե՞րբ է ստեղծվել Համաշխարհային մաքսային կազմակերպությունը և ի՞նչ է նրա էությունը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ Մարաշիի օրենսգիրք» ՀՕ-83
2. «Հայ ժողովրդի պատմություն», Վ.Ա. Պարսամյանի խմբ. «Լույս» Երևան, 1987
3. «Հայաստանի Հանրապետություն» (1918-1920թթ.) Ա. Մ.Հակոբյան - Եր.,«Հայաստան», 1992
4. «Հայոց պատմություն», Մովսես Խորենացի, Եր.,«Հայաստան», 1990
5. «ՀՀ տնտեսական սուբյեկտների արտաքին առևտրային գործարքների ռիսկի նվազեցման ուղղությունները» Գրիգորյան Ռ. Լ. ատենախոսություն, 2004
6. “О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (5 в. до н.э – 15 в. н.э)” Я.Н.Манандян, Ереван, 1954
7. “Когда и кем составлена Армянская география. Визант. Врем., т. I” Я.Н.Манандян, Ереван, 1947
8. “Контрабандисты” В. Прусс, Р. Короткий - Моряк Украины, № 26 (02.07.2003г.)
9. “Очерки по истории таможенной службы”. Л.Н. Маркова – Иркутск, 1987
10. “Таможенные книги XVII века”. А.Ц. Мерзон - И., 1957
11. “Международная борьба с контрабандой”. Б.М Угаров – М., 1981
12. “Таможенное право”. И.В. Тимошенко – М. 2002
13. “Международные экономические отношения” В.Б Буглай, Н.Н. Ливенцев – М., “Финансы и статистика” 1997
14. “Таможенно-тарифное регулирование как протекционистский инструмент внешнеторговой политики государства”. С.В. Зуварев., И.В. Савои – Ростов на Дону, 1998
15. Толковый словарь таможенного права/под ред. проф. А. Н Козырина. – М.: ОАО “Городец”, 2006
16. Комментарий к Таможенному кодексу Российской Федерации/под ред. О.Г Анохиной. – М.: Проспект, 2010
17. Международная купля-продажа товаров. М.Г. Розенберг. – М.:”Контракт”, “Инфра М”, 2010
18. Таможенное дело. В. Толкушин. – Высшее образование. – 2009

**Ռաֆայել Լենսերի Գրիգորյան**  
տնտեսագիտության թեկնածու

**Մաքսային գործ**  
Ուսումնական ձեռնարկ

Գեղարվեստական ձևավորող՝ Վալերիա Վալերիի Սարգսյան  
Սրբագրիչ՝ Նելլի Գրիգորիի Բաբակա  
Համակարգչային էջատող՝ Վալերիա Վալերիի Սարգսյան

Տպաքանակը՝ 200 օրինակ  
Տպագրված է «Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչությունում